# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԻԲ. ՏԱՐԻ ԹԻՒ 24 (1424) ՇԱԲԱԹ, ՅՈՒԼԻՍ 04, 2009
VOLUME 29, NO. 24 (1424) SATURDAY, JULY 04, 2009

Պաշտօնաթերթ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## «ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՏՈՒՆԸ» ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿԸ ԴԱՍԷ ՈՐՊԷՍ ԿԻՍՈՎ ՄԻԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԿԻՐ

«Ազատութեան Տուն» (Freedom House) միջազգային իրաւապաշտպան կազմակերպութիւնը Յունիս 30-ի երեկոյան հրապարակեց իր տարեկան զեկոյցը, որու մէջ Հայաստան կրկին դասուած է կիսով միապետական երկիրներու շարքում:

Զեկոյցը, յետխորհրդային երկիրներուն մէջ տիրող իրավիճակը բնութագրած է որպէս՝ մութ տարի ժողովրդավարութեան համար:

Ըստ զեկոյցի հեղինակներուն, տարածաշրջանին մէջ տագնապալի իրավիճակը սրուած է խիստ խնդրայարոյց ընտրութիւններու հետեւանքով թէ՛ Ռուսաստանի, թէ՛ Վրաստանի, թէ՛ Ատրպէյճանի ու Հայաստանի մէջ: Ամբողջովին միապետական երկիրներէն ետք, կիսով միապետական երկիրներուն մէջ առաջին դիրքի վրայ կու գայ Հայաստանը:

Զեկոյցի խմբագիր Լիզա Մութս պարզաբանելով ըսած է. - «Հայաստանը կիսով միապետական երկիր է, եւ այս արդիւնքը անցեալ տարուայ համեմատութեամբ չէ փոխուած: Այս խումբին մէջ են Հայաստանը, Քոսովոն եւ Մոլդովան: Կի-

Շար.ը էջ 4

## ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՆԿՐԷՍԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՂԷՏԷՆ ԽՈՒՍԱՓԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՕՐԻՆԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

Հայ Ազգային Գոնկրէսը Յունիսի 30-ին հրապարակուած հաղորդագրութեամբ մը եկաւ պարզելու Հայաստանի տնտեսական վտանգաւոր վիճակը եւ անոր դիմագրաւած դժուարութիւնները, տնտեսական ամբողջական անկումէն խուսափելու միակ ելքը նկատելով օրինական իշխանութեան հաստատումը:

«Վարչախմբի վարած յանցաւոր քաղաքականութեան հետեւանքով, Հայաստանի տնտեսութիւնը շարունակում է գահավիժել: Հրապարակուած պաշտօնական տուեալների համաձայն 2009 թուականի Յունուար-Մայիս ամիսներին երկրի համախառն ներքին արդիւնքը նուազել է 15.7%-ով, շինարարութիւնը, 50, արդիւնաբերութիւնը 10, արտահանումը 50 տոկոսով եւ այլն: Հայաստանի տնտեսութեան անկումը 5,5 անգամ աւելի է, քան ճգնաժամի հետեւանքով համաշխարհային տնտեսութեան անկումը եւ 2 անգամ աւելի, քան ԱՊՀ երկրներում անկման միջին ցուցանիշը»,- ըսուած է ՀԱԳ-ի յայտարարութեան մէջ

Յայտարարութեան մէջ ըսուած է, որ ամիսներ շարունակ, արհամարհելով Հայ Ազգային Գոնկրէսի նախազգուշացումներն ու առաջարկած կանխարգելիչ քայլեր առնելու անհրաժեշտութիւնը, կառավարութիւնը կը յայտարարէր, թէ համաշխարհային տնտեսական ճգնաժամը որեւէ կերպով պիտի չազդէ Հայաստանի վրայ: Այսօր նոյն կառավարութիւնը, ձեռքերը լուալով պատասխանատուութենէն, իր խայտառակ ձախողութիւնները ամբողջովին կը բարդէ նոյնինքն միջազգային տնտեսական ճգնաժամի վրայ:

Հայ Ազգային Գոնկրէսի համաձայն, Հայաստանի տնտեսական աղէտը մեծ մասով պայմանաւորուած է վերջին տասնամեակներուն որդեգրուած գիշատիչ, հակազգային տնտեսական քաղաքականութեամբ, երկրի համակարգուած կողոպուտով, ազատական տնտեսութեան, ազատ մրցակցութեան եւ սեփականութեան սահմանադրական իրաւունքի ոտնահարմամբ ու փաստացի ոչնչացմամբ, իշխանութեան եւ խոշոր գործարարներու սերտացմամբ, ապօրինի հովանաւորուող օլիգարխիկ, մենաշնորհային տնտեսութեան հաստատմամբ եւ հակաօրինական այլ ազդակներով:

Շար.ը էջ 4

## ԼԻԲԱՆԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԷՆ ՆԵՐՍ ԿԱԶՄՈՒԵՑԱՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԽՈՀԱԿԱՆ ՊԼՈՔ

Լիբանանի նորընտիր Խորհրդարանէն ծնունդ առաւ Հայկական Համախոհական պլոք, կազմուած Հնչակեան, Ռամկավար եւ անկուսակցական երեսփոխաններէ:

Հայկական Համախոհական պլոքի անդամներ՝ ընկեր Սեպուհ Գալփաքեան, նախարար Ժան Օղասապեան, Իրաւաբան Սերժ Թուրսարգիսեան եւ Նշան Ջինչինեան, Յունիս 27-ին Նախագահական Պալատէն ներս մասնակցեցան նոր կառավարութեան կազմութեան շուրջ տեղի ունեցող խորհրդակցութիւններուն:

Լիբանանի նախագահ Միշէլ Սըլէյմանի հետ տեղի ունեցած հանդիպումի աւարտին Պլոքի անունով Ընկեր Գալփաքեան լրագրողներու ներկայութեան յայտարարեց որ, Պլոքը ներկայացուցած է «Մուսթաքպալ» հոսանքի ղեկավար Սաատ Հարիրիի անունը, որպէս վարչապետ, նկատի առնելով անոր չափաւորականութիւնը, բան մը որուն կարիք ունի Լիբանանը ներկայիս:

Շար.ը էջ 4

## ՄԱՀ ԵՒ ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆ Տ. ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱԼԵԱՆԻ

Շաբաթ, Յունիս 27-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածինը գուժեց իր երիցագոյն միաբաններէն, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ նուիրեալ եւ բազմավաստակ սպասաւոր՝ Գերաշնորհ Տ. Ներսէս Արքեպիսկոպոս Պոզապալեանի մահը, որ պատահած է նոյն օրը առաւօտեան, «Նաիրի» բժշկական կենտրոնէն ներս, 72 տարեկանին:

Սրբազան Հայրը անցեալ փետրուար 18-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանական իր սենեակէն ներս, իրեն ծանօթ անձի մը կողմէն կողոպուտի նպատակով ենթարկուած էր յարձակումի, որու հետեւանքով ծանր վնասուածք ստանալով, անգիտակից վիճակի մէջ փոխադրուած էր հիւանդանոց: Այս դէպքէն մինչեւ իր մահը, Տ. Ներսէս Արքեպիսկոպոս Պոզապալեան կը գտնուէր բժիշկներու խնամքին տակ:



Ներսէս Արքեպիսկոպոս Պոզապալեան

Յունիսի 30-ին, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Թեղենիքի Սրբոց Նահատակաց եկեղեցիէն ներս տեղի ունեցաւ Գերաշնորհ Սրբազան Հօր յուղարկաւորութեան արարողութիւնը:

Առաւօտեան կանուխ, Ներսէս Սրբազանի աճիւնը տեղափոխուեցաւ իր իսկ կառուցած Սրբոց Նահատակաց եկեղեցի, ուր մատուցուեցաւ Ս. Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի Լուսարարապետ Տ. Արարատ Եպիսկոպոս Գալթագճեան: Սրբազան արարողութեան ընթացքին՝ Ողջոյնէն առաջ, Տ. Ներսէս Արքեպիսկոպոս Պոզապալեանի դին զետեղուեցաւ Ս. Խորանի առջեւ ու կատարուեցաւ օծման վերջին կարգը: Ամենայն Հայոց Կաթողիկոսը սրբալոյս միւռոնով օծեց Ներսէս Սրբազանի ճակատը եւ աջ ձեռքը: Ապա, Ողջոյնի ժամանակ Նորին Սրբու-

Շար.ը էջ 5

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՄՆ ԴԵՍՊԱՆ ՄԸՐԻ ԵՈՎԱՆՈՎԻՉԻ ՄԱՄԼՈՅ ԱՍՈՒԼԻՍԸ



Դեսպան Մըրի Եովանովիչ շրջապատուած մամուլի խմբագիրներով

Դեսպան Եովանովիչ Ուրբաթ 26 Յուլիս 2009 կ.ե. ժամը 4:00-ին տուաւ մամլոյ ասուլիս մը, որ տեղի ունեցաւ Կլենտէյլի Հիլթոն պանդոկին մէջ, ուր ներկայ գտնուեցան գաղութիս համարեա բոլոր թերթերը եւ կարգ մը հեռուստատեսիլի ներկայացուցիչներ:

Յարգելի դեսպանը իր զեկոյցին մէջ առաւելաբար կեդրոնացաւ ԱՄՆ-ի՝ Հայաստանի հետ ունեցած բարեկամական կապերուն, նեցուկին, անոր յատկացուած նիւթական վարկերուն վրայ: Յարդ, ԱՄՆ 1.8 միլիառ տոլար յատկացուցած է Հայաստանի եւ Ղարաբաղի: Ան կ՚օժանդակէ զօրացումի կարօտ մարզերուն, երկրի քաղաքական եւ տնտեսական կացութեան բարելաւման, ինչպէս նաեւ, Հայաստանի եւ տարածաշրջանի տնտեսական զարգացման : Ան լաւատեսութիւնը յայտնեց այն կապակցութեամբ, որ Հայաստան-Թուրքիա բանակցութիւնները յաջողութեամբ պիտի պսակուին: Միացեալ Նա-

Շար.ը էջ 5

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# ՍԿՍԵՑԻՆ ԿԻՍԵԼ ՓՈՂԵՐԸ

Ամէն անգամ, երբ խօսք է գնում ճգնաժամը յաղթահարելու մասին, իշխանութիւնները յայտարարում են, թէ առաջին հերթին օգնելու են փոքր եւ միջին բիզնեսին: Բայց որպէս կանոն՝ նման բան ասում են միայն այն ժամանակ, երբ խօսքը վերացական ծրագրերի մասին է, մէջտեղում կոնկրետ գումար չկայ: Իսկ երբ բանը հասնում է կոնկրետ գումարին, փոքր եւ միջին բիզնեսը միանգամից մոռացւում է: Յիշո՞ւմ էք «Չի կարող պատահել» ֆիլմի այն դրուագը, երբ հարսանիքի հիւրերը կլանուած լսում են հիւրերից մեկի ռոմանսը եւ նոյնիսկ արտասւում, բայց հենց որ սեղանին ուտելու բան է յայտնւում, «զգացմունքները» միանգամից մոռացւում են, ու հաշուած վայրկեանների ընթացքում սեղանը մաքրազարդւում է:

Հիմա Հայաստանի կառավարութեան համար հենց այդ պահն է: Փոքր եւ միջին բիզնեսին օժանդակելու ծրագրերը պէտք է մի կողմ դնել, որովհետեւ եկել է ռուսական 500 միլիոն դոլարանոց վարկը բաշխելու ժամանակը: Եւ ահա կառավարութիւնն այդ առթիւ մի շարք որոշումներ է ընդունել: Նախ, որոշուել է 500 միլիոն դոլարի մօտ կէսը (245 միլիոնը) յատկացնել «տնտեսավարող սուբիեկտներին»: Բան չունենք ասելու, նորմալ է: Բայց հարց է ծագում՝ դրա ո՞ր մասն է ուղղուելու փոքր եւ միջին բիզնեսի զարգացմանը: Որքան էլ զարմանալի է, բայց ընդամէնը 16 միլիոնը (այսինքն՝ ամբողջ գումարի 3,2 տոկոսը): Փոխարէնը՝ ուղիղ տասը անգամ աւելի շատ փող ուղղուելու է դէպի բանկային համակարգ, եւս

> Երբ խօսքը վերացական ծրագրերի մասին է, մէջտեղում կոնկրետ գումար չկայ: Իսկ երբ բանը հասնում է կոնկրետ գումարին, փոքր եւ միջին բիզնեսը միանգամից մոռացւում է

62 միլիոն դոլարով կառավարութիւնն աջակցելու է «համակարգաստեղծ ոլորտներին»: Գիտէ՞ք, թէ որոնք են այդ ոլորտները: Իհարկէ գիտէք. խօսքը շինարարութեան մասին է: Իսկ ինչո՞ւ է կառավարութիւնը որոշել յատկապէս այդ ոլորտներին «աջակցել»: Շատ պարզ պատճառով: Շինարարութեանն աջակցում են, որովհետեւ «էլիտար շէնքերի բիզնեսը» հիմնականում իրենցն է (բա հո սեփական միջոցներով աւարտին թէ՞ն հասցնելու կիսակառոյցները), իսկ բանկերին աջակցում են, որպէսզի մարդիկ կարողանան հիպոթեկային վարկեր վերցնել եւ գնել այդ «էլիտար» բնակարանները: Կարող է հարց առաջանալ՝ իսկ ինչո՞ւ են շինարարութեանը 2,5 անգամ աւելի քիչ փող տալիս, քան այդ բնակարանները գնելու համար վարկեր տրամադրող բանկերին: Մի անհանգստացէք, կառավարութիւնը դա էլ է հաշուարկել: Որովհետեւ Երեւանում «էլիտար բնակարանները» վաճառւում են ինքնարժէքից ուղիղ 2,5 անգամ աւելի թանկ: Այսինքն, եթէ շէնք սարքելն արժէ, օրինակ, 10 միլիոն դոլար, այդ շէնքերի բոլոր բնակարանները գնելու համար անհրաժեշտ է 25 միլիոն: Համապատասխանաբար՝ շէնք սարքողին 10 միլիոն են տալիս, «պոտենցիալ գնորդներին»՝ 25 միլիոն: Այսինքն, համամասնութիւնը պահպանում են: Արդիւնքում ստացւում է, որ շինարարութեան ոլորտին (սեփական բիզնեսին) կառավարութիւնը յատկացնում է 222 միլիոն դոլար, իսկ փոքր եւ միջին բիզնեսին՝ ընդամէնը 16 միլիոն:

Սրանք, ի դէպ, պաշտօնական թուերն են (ամրագրուած կառավարութեան որոշումներով): Եւ սա՝ այն դէպքում, երբ արդէն իսկ ակնյայտ է, որ շինարարութեան ոլորտը «զարգացնելը» Հայաստանի համար հսկայական ռիսկերի հետ է կապուած: Եւ գիտէ՞ք թէ ինչու: Որովհետեւ Հայաստանի արտաքին պարտքը կատաստրոֆիկ տեմպերով աճում է, իսկ այդ պարտքը հնարաւոր է փակել միայն մի դէպքում՝ եթէ երկիրն ինչ-որ բան է արտադրում, այդ արտադրածը արտահանում եւ գումարներ ձեռք բերում: Շինարարութիւնն արտահանման ենթակայ չէ, հետեւաբար՝ Հայաստանին այդ ոլորտի արհեստական «խրախուսումը» որեւէ հեռանկար չի խոստանում: Մի բան է, երբ մէկը պարտքով փող է վերցնում եւ դրանով ինչ-որ արտադրութիւն հիմնում կամ բիզնես ստեղծում, եւ բոլորովին այլ բան, երբ մէկը պարտք վերցրած փողով տունը «ռեմոնտ է անում»: Ինչո՞ւ: Որովհետեւ առաջին դէպքում պարտքը վերադարձնելու շանս կայ, իսկ երկրորդ դէպքում՝ ոչ: Հայաստանի իշխանութիւնները փաստօրէն ընտրել են երկրորդ տարբերակը: Եւ դա արել են միայն այն պատճառով, որ «ռեմոնտ անելու» ընթացքում կողքից փող աշխատելն աւելի հեշտ է: Բայց իսկական տանտէրն այդպէս չի վարւում, այդպէս «խոպանչիներն» են վարւում՝ նրանք, ովքեր ընդամէնը ժամանակաւորապէս «գործ են կպցրել» եւ թքած ունեն տան վրայ էլ, իրական տանտէրերի վրայ էլ:

Ի դէպ, կառավարութիւնը որոշել է նաեւ, որ 500 միլիոնանոց վարկից 130 միլիոնը պիտի տրամադրի աղէտի գօտուն: Սա, յիշեցնենք, այն աղէտի գօտին է, որն, ըստ Ռոբերտ Քոչարեանի, պիտի լիովին վերականգնուէր դեռեւս 2001-ին: Ընդ որում, եթէ հաւատալու լինենք պաշտօնական թուերին, եւ Ռոբերտ Քոչարեանը, եւ Սերժ Սարգսեանը ցանկացած ընտրութեան ժամանակ ամենաբարձր տոկոսները հենց աղէտի գօտուց են ստանում: Կոնկրետ ոչինչ նկատի չունենք, պարզապէս փաստն ենք արձանագրում:

ԳՐԻԳՈՐ ՈՍԿԱՆԵԱՆ
«ՉՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ

# ԵՐՐՈՐԴ «ՈՒԺԸ» ՆԱԵՒ ԱՅՍՏԵՂ

Միխայիլ Սահակաշվիլիի Հայաստան կատարելիք այցից առաջ հայ-վրացական սահմանում տեղի ունեցած միջադէպը, երբ պատգամաւոր Շիրակ Թորոսեանին չէին թողել մուտք գործել Վրաստան, հայ-վրացական յարաբերութեան մասին դատողութիւնները դարձրին հայաստանեան օրակարգի թիւ մէկ խնդիր: Տպաւորութիւնը նոյնիսկ այն է, որ Շիրակ Թորոսեանը պարզապէս դարձել է հայ-վրացական յարաբերութեան եւ մասնաւորապէս Միխայիլ Սահակաշվիլիի այցի PR-ի զոհ: Այսինքն, այնպիսի տպաւորութիւն է, որ Թորոսեանին Վրաստան չեն թողել, որ Սահակաշվիլիի Հայաստան այցը արժանանայ առաւել մեծ եւ ընդգրկուն ուշադրութեան: Դժուար է այլ կերպ բացատրել, թէ ինչու Թորոսեանին չեն թողել Վրաստան:

Նա իհարկէ բազմաթիւ անգամներ քննադատել է Վրաստանի իշխանութեանն ու նրան մեղադրել Վրաստանում եւ մասնաւորապէս Ջաւախքում հակահայ քաղաքականութիւն վարելու համար: Բայց Վրաստանի իշխանութիւնը մինչ այդ կարծես թէ այդքան էլ ուշադրութիւն չէր դարձնում դրա վրայ: Սահակաշվիլին իհարկէ ունի անհաւասարակշիռ անձնաւորութեան համբաւ, ինչին մեծապէս նպաստեց օրինակ տեսախցիկի առաջ սեփական փողկապը ծամելու նրա քայլը: Բայց տարօրինակ է, որ հենց Հայաստան այցելելուց առաջ նա որոշեց Շիրակ Թորոսեանին նեղացնել: Տարօրինակ է նաեւ, որ Հայաստանն էլ Վրաստանին այդ բանի համար կարծես թէ բաւական դժկամութեամբ կշտամբեց, չանելով հրապարակային դատապարտող որեւէ պաշտօնական յայտարարութիւն: Ստացւում է այնպիսի մի վիճակ, որ Վրաստանը կարծես թէ փորձում է Սահակաշվիլիի այցից առաջ "սրել խաղը", իսկ Հայաստանն էլ փորձում է "գցել խաղի տեմպը":

Ում մօտ է ի վերջոյ ստացուելու ձեռնտու արդիւնք, թերեւս կ'երեւայ Սահակաշվիլիի այցից աւելի ուշ: Այցի ընթացքում հաւանաբար գերակշռելու են հայ-վրացական բարեկամութեան մասին խօսքերը, ռազմավարական կամ գործընկերային յարաբերութեան մասին յայտարարութիւնները, ասուելու է, որ Հայաստանի եւ Վրաստանի միջեւ չկայ անլուծելի խնդիր: Չի բացառւում նոյնիսկ, որ Սահակաշվիլին յայտարարի, թէ իր հաշուին Շիրակ Թորոսեանին 15 օրով հրաւիրում է Վրաստան, նրա առաջ մեղքը քաւելու համար: Հազիւ թէ կողմերը որեւէ հրապարակային կոնկրետ յայտարարութիւն անեն Ջաւախքի խնդրի վերաբերեալ: Այդ մասին վաղուց արդէն Հայաստանի ու Վրաստանի իշխանութիւնը բարձր մակարդակով գերադասում են հրապարակաւ չխօսել, յամենայն դէպս միջպետական յարաբերութեան շրջանակում:

Ընդհանրապէս, հայ-վրացական յարաբերութիւնն աչքի է ընկնում հիմնականում նրանով, որ դրա օրակարգը մեծ հաշուով ենթադրութեան մակարդակի է: Օրինակ, ենթադրւում է, որ նախագահները կը խօսեն Ջաւախքի մասին, կը խօսեն Վրաստանում հայկական յուշարձանների եւ Առաքելական եկեղեցու գործունէութեանը չխոչընդոտելու մասին, ռուս-վրացական սահմանի մասին, Բաթումի-Մեղրի ավտոճանապարհի մասին, բեռնափոխադրումների մասին, էլի ինչ որ բաների մասին, միգուցե Կարս-Ախալքալաք երկաթուղու մասին: Խօսելու շատ բան կայ, սակայն թէ ինչ կայ խօսելուց յետոյ, դա արդէն ոչ միայն ենթադրութեան, այլ նոյնիսկ գուշակութեան խնդիր է դառնում: Հայաստանի ու Վրաստանի իշխանութիւնը կարծես թէ վերջին տարիներին, եթէ չասենք անկախութիւնից ի վեր, թերեւս չեն ձեռք բերել եւ իրականացրել հիմնարար եւ երկարաժամկէտ նշանակութեան որեւէ մի պայմանաւորուածութիւն, որը կը վկայէր երկու երկրի եթէ ոչ ռազմավարական, ապա գոնէ դրացիական գործընկերութեան մասին:

Այդ առումով փոխելու է արդեօք ինչ որ բան Սահակաշվիլիի հերթական այցը: Կարծում եմ: հազիւ թէ: Բանն այն է, որ Վրաստանի եւ Հայաստանի յարաբերութիւնը կարծես թէ աւելի շատ ոչ թէ երկկողմ հարցերի քննարկման, այլ երրորդ կողմերի հետ միջնորդաւորուած յարաբերութեան դեր ու նշանակութիւն ունի աւելի շատ: Խնդիրն այն է, որ երեւի թէ Հայաստանը, թէ Վրաստանը մտածում են, որ կարեւորը երրորդ կողմի հետ հարցերը լուծելն է, եւ եթէ դրանք լուծուեն, ապա Վրաստանը կամ Հայաստանն այդքան կշիռ ու համարձակութիւն չունեն իրար համար խնդիրներ ստեղծել: Այսինքն, անյայտ է իհարկէ, թէ որքանով արդարացուած, բայց թերեւս կայ երկկողմ այն մտայնութիւնը, որ Հայաստանն ու Վրաստանը եթէ իրար համար խնդիր են ստեղծում, ապա ստեղծում են բացառապէս երրորդ կողմի թելադրանքով, հետեւաբար կարեւորը ոչ թէ իրար, այլ երրորդ կողմի հետ պայմանաւորուելն է:

ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ
«ԼՐԱԳԻՐ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՏՕՔԹ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂՐԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Հեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626)797- 6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, Canada $60 (Second Class), $75.00 (Air Mail)
Overseas $85.00 (2nd Class Mail), $125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104

## ՀԱՅԱՍՏԱՆ

# ԶԱՐՈՒՀԻ ՓՈՍՏԱՆՋԵԱՆ. «ԹՈՅԼ ԵՄ ՏՈՒԵԼ ՍՏՈՐԱԳՐԵՆ ԱՐՑԱԽԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ԱԶԱՏ ԱՐՁԱԿԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿԻ ՏԱԿ»

*«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»: ԵԽԽՎ-ում Հայաստանի խորհրդարանական պատուիրակութիւնում ընդդիմադիր «Ժառանգութիւն» խմբակցութիւնը ներկայացնող պատգամաւոր Զարուհի Փոստանջեանը Երկուշաբթի, Յունիս 29-ին լրագրողների հետ հանդիպմանը յայտարարեց, որ ճիշդ է համարում իր որոշումը՝ թոյլ տալ ԵԽԽՎ-ում Թուրքիայի եւ Ատրպէյճանի խորհրդարանների պատուիրակներին ստորագրել իր ներկայացրած առաջարկների տակ:*



Պատգամաւոր Զարուհի Փոստանջեան

*Ստրասբուրգում Փոստանջեանը ստորագրահաւաք էր նախաձեռնել, որով առաջարկւում էր ազատ արձակել դատապարտուած ազատամարտիկներին, վերականգնել մարտի 1-2-ի դէպքերն ուսումնասիրող փաստահաւաք խմբի գործունէութիւնը՝ ներգրաւելով միջազգային փորձագէտների, նախատեսել համագեկուցողների եւս մէկ այց Հայաստան՝ մինչեւ ԵԽԽՎ-ի առաջիկայ նստաշրջանը: Այս երեք առաջարկութիւններով փաստաթղթի տակ ստորագրել էին նաեւ ատրպէյճանցի եւ թուրք պատուիրակներ, ինչը բուռն քննարկումների թեմա էր դարձել Հայաստանում:*

*«Այո, ես թոյլ եմ տուել, որ նրանք ստորագրեն իմ առաջարկութեան տակ, ես թոյլ եմ տուել, որպէսզի ստորագրեն Արցախի հերոսամարտի մասնակիցների ազատ արձակելու առաջարկի տակ: Գտնում եմ, որ դա ճիշդ է: Եթէ պէտք լինէր, այսքան աղմուկից յետոյ նոյնը կը կրկնուէր», - յայտարարեց Զարուհի Փոստանջեանը:*

*Զարուհի Փոստանջեանի մեկնաբանութեամբ, իր նախաձեռնած ստորագրահաւաքի շուրջ բարձրացած աղմուկի հիմնական դրդապատճառը այն չէր, որ թուրք եւ ատրպէյճանցի պատուիրակներ են ստորագրել:*

*«Ես տապալել եմ Դաւիթ Յարութիւնեանի գործունէութիւնը այնտեղ, որը հետապնդում էր մէկ նպատակ. այնպէս անել, որ մարտի 1-ի դէպքերը կոծկուէին եւ այդ էջը փակուէր: Այս ամէնի նպատակը եղել է՝ չեղել բուն բովանդակային պրոցեսներից, որ տեղի ունեցան Եւրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում», - յայտարարեց «Ժառանգութիւն» խմբակցութեան պատգամաւորը:*

# ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆԵԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑԱՒ ԴԱՏԱԽԱԶՈՒԹԻՒՆ

*«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»: Յուլիս 31-ին դատախազութիւն ներկայացաւ 2008 թուականի Մարտի 1-2-ի դէպքերից յետոյ հետախուզման մէջ գտնուող՝ «Հայկական ժամանակ» օրաթերթի գլխաւոր խմբագիր Նիկոլ Փաշինեանը:*



«Հայկական Ժամանակ» օրաթերթի գլխաւոր խմբագիր Նիկոլ Փաշինեան

*Դատախազութեան շէնքում Փաշինեանը կարճատեւ զրոյց ունեցաւ լրագրողների հետ:*

*«Միանշանակ վստահ եմ, որ իմ այս քայլը դրական է, եւ միանշանակ վստահ եմ, որ այն մեր պայքարին նոր շունչ է հաղորդելու», - ասաց Փաշինեանը: - «Կասկած չունեմ, որ մեր պայքարը յաղթանակով է աւարտուելու»:*

*Հարցին, թէ ինչ է իրեն սպասւում, նա պատասխանեց. - «Յետոյ ինձ կը ձերբակալեն, յետոյ կալանքի սանկցիա կը տան, յետոյ կը դատապարտեն հնարաւորինս երկար տարիների ազատազրկման... Ես Հայաստանի Հանրապետութեան քաղաքացի եմ, եւ ինձ հետ որեւէ բան լինել չի կարող: Ես սրանում վստահ եմ»:*

*Նա բացառեց, թէ կարող է առաջիկայում զղջալ այսօր կատարած քայլի համար. - «Խնդրում եմ, ինձ այդքան անլուրջ մի վերաբերուէք: Այս ընթացքում իմ կայացրած ցանկացած որոշման մէջ համոզուած եմ: Միակ ցաւը այն է, որ մենք 10 զոհ ենք ունեցել: Ես այսօր գլխաւոր դատախազութեան մուտքի մօտից կրկին ուզում եմ գլուխ խոնարհել Մարտի 1-ի բոլոր 10 զոհերի հարազատների առջեւ»:*

*Դատախազութիւնից Փաշինեանը ոստիկանների ուղեկցութեամբ տեղափոխուեց Կենտրոնի ոստիկանութիւն: Այնտեղ մեկնեցին նաեւ նրա փաստաբանները՝ Արա Զաքարեանը, Տիգրան Աթանէսեանը եւ Արթուր Գրիգորեանը: Աւելի ուշ Փաշինեանին կալանաւորեցին եւ ուղեկցեցին «Երեւան-Կենտրոն» քրէակատարողական հիմնարկ:*

*Յունիսի վերջին Նիկոլ Փաշինեանը յայտարարել էր ընդյատակից դուրս գալու եւ իր պայքարը բանտում շարունակելու որոշման մասին: Իր տարածած յայտարարութեան մէջ Փաշինեանը գրել էր , որ ընդյատակից բանտ տեղափոխուելու իր որոշումը «արդիւնաւէտ քաղաքական պայքարը շարունակելու մտահոգութեամբ է թելադրուած»*

# ԱՐՄԱՆ ԲԱԲԱՋԱՆԵԱՆԻ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ 3-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԿԱՊԱԿՑՈՒԹԵԱՄԲ ԲՈՂՈՔԻ ԱԿՑԻԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՈՒԵՑ

*Ոստիկանները Յունիս 26-ին ցրեցին «Ժամանակ» օրաթերթի գլխաւոր խմբագիր Արման Բաբաջանեանի հարազատներին եւ գործընկերներին, ովքեր փորձում էին բողոքի ակցիա կազմակերպել Բաբաջանեանի ազատազրկման երրորդ տարելիցի կապակցութեամբ:*



Արման Բաբաջանեանի գործընկերները ցոյցը նախագահի նստավայրի մօտ

*Ոստիկանները, որոնք թուով գերազանցում էին ակցիայի՝ տասնեակի չհասնող մասնակիցներին, նախագահի նստավայրից հեռացրեցին ցուցարարներին եւ ակցիան լուսաբանելու եկած լրագրողներին:*

*Ցուցարարները նպատակ ունէին կէս ժամ կանգնել նախագահականի դիմացի մայթին ու հնարաւորութեան դէպքում յայտարարութեան տեքստ փոխանցել նախագահ Սերժ Սարգսեանին: Ի վերջոյ, ակցիան չկայացաւ: «Ժամանակ» օրաթերթի համակարգող Էմմա Գաբրիէլեանը հանդէս եկաւ յայտարարութեամբ. - «Այսօր մենք հաւաքուել ենք մեր խմբագրի 3 տարուայ ազատազրկման համար: Արձանագրում ենք, որ ինքը քաղբանտարկեալ է եւ 3 տարի իշխանութիւնները վերդիկտ են կայացրել, ապացուցելով, որ ինքը քաղբանտարկեալ է, եւ իր վաղաժամկէտ պայմանական ազատման բոլոր փորձերը ապարդիւն անցան, մի քանի անգամ մերժուեց թէ: Ռոբերդ Քոչարեանի, թէ: Սերժ Սարգսեանի իշխանավարման օրերին, թէեւ ինքը սեպտեմբերին ազատուելու է»:*

*«Ժամանակ» օրաթերթի գլխաւոր խմբագիր Արման Բաբաջանեանը դատապարտուել է 3,5 տարուայ ազատազրկման ժամկէտային զինուորական ծառայութիւնից խուսափելու համար: 3 ամիս յետոյ կը լրանայ ազատազրկման ժամկէտը:*

*Ազգային ժողովի կողմից Յունիսի 19-ին յայտարարուած համաներումը Արման Բաբաջանեանի վրայ չտարածուեց: Սա Արման Բաբաջանեանի ազատազրկման 3 տարիներին յայտարարուած 2-րդ համաներումն էր: Սակայն երկու դէպքում էլ նա համաներման հնարաւորութիւնից չի օգտուել, թէեւ նրա յանցանքը համարւում է միջին ծանրութեան: Անցած 3 տարիներին մերժուել են նաեւ նրան վաղաժամկէտ ազատ արձակելու բոլոր դիմումները:*

# ԱՐՄԱՒԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՆԵՐԸ ԿՈՊԵԿՆԵՐՈՎ ՀՈՂ ԵՆ ՎԱՃԱՌՈՒՄ, ԲԱՅՑ ՎԵՐԱՎԱՃԱՌՈՒՄ ԵՆ ՄԻԼԻՈՆՆԵՐՈՎ

*«Tert.am»: Արմաւիրի մարզպետարանի քաղաքաշինութեան ոլորտին 2007-2008 թթ համար տրամադրուել է 2,3 մլրդ. դրամ: Վերահսկիչ պալատը ուսումնասիրել է յատկացուած գումարի միայն 906 մլն. դրամի շրջանակն ու պարզել, որ միայն այդ գումարի յատկացման մէջ տեղի է ունեցել 86 մլն. դրամի չարաշահում: Ի դէպ, այդ չարաշահումները եղել են քաղաքաշինութեան բնագաւառի տարբեր դրուագներում, սկսած նրանից, որ յատկացուած գումարի շրջանակներում անօրակ շինարարութիւն է իրականացուել:*

*Այս տեղեկութիւնները այսօր մամուլի ասուլիսի ժամանակ հրապարակել է Վերահսկիչ պալատի նախագահ Իշխան Զաքարեանը, ներկայացնելով հերթական հաշուետուութիւնը: ՎՊ նախագահը Արմաւիրի մարզպետարանի աշխատանքներում այլ չարաշահումներ եւ պետական պիւտճէի իւրացումներ էլ է գտել: Օրինակ, մարզպետարանում կեղծ տեղեկանքներով մարդկանց դարձրել են նպաստառու եւ պետական օգնութիւն տուել, մինչդեռ, ըստ Իշխան Զաքարեանի, հաշուառուած ընտանիքներից շատերում մինչեւ 3 աշխատող կարող էր լինել:*

*Միւս ամենաաղաղակող խախտումները, որ ՎՊ-ն գտել է Արմաւիրի մարզպետարանի աշխատանքներն ուսումնասիրելիս, կապուած է հողերի վաճառքի հետ: Եվ այսպէս, Արմաւիրի մարզի համայնքապետարանները շատ էժան, կոպեկներով վաճառել են համայնքային պատկանելութեան հողերը, որոնք որոշ ժամանակ անց վերավաճառուել են միլիոնաւոր դրամներով: Օրինակ, Իշխան Զաքարեանի ներկայացրած օրինակներից մէկում նշւում է, որ մարզի համայնքապետարաններից մէկը 40 հա հող է վաճառել 850 հազար դրամով, իսկ 26 օր յետոյ այդ հողատարածքը վերավաճառուել է 21 մլն. դրամով:*

*«Գրեթէ մեկնաբանութիւնների կարիք չկայ եւ շատ պարզ է, որ համայնքային եւ պետական պիւտճէ գնացող գումարները դէպի ուր են գնացել, եւ ինչու են գնացել, եւ ինչպէս են գնացել»,- յայտարարել է Իշխան Զաքարեանը:*

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ
ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ
CHARTER CABLE 280-ՐԴ ԿԱՅԱՆ
(ԿԼԷՆՏԷՅԼ, ՊԸՐՊԷՆՔ, ԼԱ ՔՐԷՍԷՆԹԱ)
GLOABCAST SATELLITE
ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00

# ԼՈՒՐԵՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԸ ՅԱՅՏՆՈՒԵՑԱՒ ՍԵՒ ՑՈՒՑԱԿՈՒՄ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Հայաստանն առաջին անգամ յայտնուել է Մարդու իրաւունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) տարեկան հաշուետուութեան մէջ: Սակայն դա ոչ թէ առաւելութիւն է, այլ թերութիւն, քանի որ այնտեղ են յայտնւում այն երկրները, որտեղ մարդու իրաւունքների խախտումներ են տեղի ունենում:

Հայաստանում են FIDH-ի նախագահն ու տնօրէնը, ովքեր այսօր՝ Խոշտանգումների զոհերի աջակցութեան միջազգային օրը, ասուլիս էին հրաւիրել՝ ներկայացնելու մեր երկրում առկայ խոշտանգումներն ու զեկոյցը:

«2008թ. փետրուարի 19-ին կայացած նախագահական ընտրութիւններից յետոյ Հայաստանը անցաւ վերջին տարիների ընթացքում ամենաբուռն ճնշումների միջով»,- սա մէջբերում է հաշուետուութիւնից՝ Հայաստանի մասով:

Ներկայացուելով այն ամէնը, թէ ինչ է տեղի ունեցել անցած տարի Նախագահի ընտրութիւններից յետոյ, զեկոյցում նշւում է, որ 2008թ. լրատուամիջոցների ազատութեան նկատմամբ զգալի դե ֆակտո ճնշում կիրառուեց:

FIDH-ը եւ իր անդամ կազմակերպութիւն Քաղաքացիական հասարակութեան ինստիտուտը հետեւել են 2008թ. մարտի 1-ի ոստիկանութեան եւ ընդդիմութեան բախումների գործերով ձերբակալուած անձանց դատավարութիւններին: Եւ այսօր ներկայացրեցին նաեւ «Արդար դատավարութեան իրաւունքի իրականացումը ՀՀ-ում» թեմայով զեկոյց, որտեղ ներկայացուած է նախնական եզրակացութիւններ 2008թ. մարտի գործերով դատավարութիւնների դիտորդութեան եւ օրէնսդրական վերջին փոփոխութիւնների հիման վրայ:

«Կազմակերպութիւնը լուրջ մտահոգութիւն է յայտնում նախաքննութեան եւ դատաքննութեան փուլերում վկաների նկատմամբ չարունակական հոգեբանական եւ ֆիզիքական ճնշումների մասին ստացած բազմաթիւ եւ մանրամասն զեկոյցների առնչութեամբ: Նման ապացոյցների վրայ հիմնուելով՝ Հայաստանի դատարանները ոտնահարում են ՀՀ միջազգային պարտաւորութիւնները եւ նպաստում են նման ապօրինի մեթոդների կիրառմանը»,- նշեց FIDH-ի նախագահ Սուեր Բելասենը:

Աւելին, նրանք մտահոգուած են ՀՀ-ում որոշ օրէնսդրական փոփոխութիւնների կապակցութեամբ. «Մեր կազմակերպութիւնները խիստ քննադատութիւն են արտայայտում որոշ փոփոխուած դրոյթների վերաբերեալ, որոնք վտանգի տակ են դնում մեղադրեալի՝ իր ներկայութեամբ դատավարութեան անցկացման, իրեն անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանի միջոցով պաշտպանելու իրաւունքը»:

Ի դէպ, հիւրերը գտնում են, որ դեռ պարզուած չեն 10 զոհերի սպանութիւնների հանգամանքներն ու մեղաւորները, եւ որոշել են ուղիղ խօսել իշխանութիւնների հետ՝ այդ ամէնի վերաբերեալ: Նրանք հարցը ներկայացրել են ՀՀ նախագահին եւ սպասում են պատասխանին:

Իսկ «Ա1+»-ի այն հարցին, թէ ինչպէս են գնահատում այն հանգամանքը, որ մարտի 1-ից յետոյ ձերբակալուածների մեծամասնութեան ցուցմունքները ձեռք են բերուել խոշտանգումների եւ ծեծի միջոցով, FIDH-ի տնօրէն Անտուան Բերնարը նշեց, թէ անընդունելի են համարում եւ իրենց դիտողութիւնները չեն ուղղում ոչ դատարաններին, ոչ էլ ոստիկաններին, այլ կառավարութեանը, քանի որ հենց նրանք են պատասխանատու այդ ամէնի համար:

## ՀԱՅԱՍՏԱՆԸ «ԱՊՏԱԿ Է ՀԱՍՑՐԵԼ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ»

Հայաստանի կողմից Վրաստանի նախագահ Սահակաշվիլիին Պատուոյ շքանշանի յանձնումը Ռուսաստանում համարել են իրենց երկրին հասցրած վիրաւորանք:

Այսպէս, Ռուսաստանի Դաշնային խորհրդի անդամ Վլադիմիր Գուսեւն ասել է REGIONS.RU-ին, որ «չի ընդունում Հայաստանի նախագահի քայլը»:

«Դա վիրաւորական է Ռուսաստանի համար: Իսկական ընկերներն այդպէս չեն վարւում»,- նշել է Գուսեւը, յաւելելով, որ սա կարող է «ոչ լաւ մթնոլորտ ստեղծել հայ-ռուսական յարաբերութիւններում»:

Դաշնային խորհրդի մէկ այլ ներկայացուցիչ Վադիմ Գուստովը համարել է այդ քայլը «բացարձակ ոչ ընկերական քայլ Ռուսաստանի հանդէպ, ինչպէս նաեւ արհամարհական վերաբերմունք բոլոր նրանց նկատմամբ, ովքեր զոհուել են վրացօսական հակամարտութիւնում»:

«Նա մի հսկայական քաղաքական սխալ է կատարել, որը դժուար է բացատրել»,- կարծում է քաղաքական գործիչը:

Ռուսաստանի իշխող կուսակցութեան պատգամաւոր Վալերի Բոգոմոլովը նշել է, որ «կարեւոր է հասկանալ, որ չի կարելի թքել այն ջրհորի մէջ, որտեղից դու մէկ անգամ չէ, որ պէտք է խմես»:

Կոմունիստ պատգամաւոր Վիկտոր Իլիւխինը համարել է այդ իրադարձութիւնը «տակտից զուրկ եւ ոչ այնքան ընկերական քայլ Հայաստանի կողմից Ռուսաստանի հանդէպ» – նշել, որ տուեալ քայլը «բացասաբար կ՚ազդի մեր առեւտրական եւ գործընկերային յարաբերութիւնների վրայ»:

Եւս մէկ ռուս խորհրդարանական Տատեանա Մոսկալկովան յայտարարել է. «Ես կարծում եմ, որ Հայաստանի նախագահի կողմից այս քայլը իւրատեսակ մարտահրաւէր է Ռուսաստանին: Սա արժանի ապտակ է Ռուսաստանին»:

Ռուսաստանի Լիբերալ-դեմոկրատական կուսակցութեան անդամ Սերգէյ Աբելցեւը նշել է, որ «կարելի է ամէն ինչ լուրջ ընդունել, քէն պահել եւ ամէն յարմար առիթի դէպքում յիշել եւ կշտամբել ընկեր Սերժին: Միշայի մասին խօսելու հարկ չկայ, քանի որ նա դատարկ տեղ է Ռուսաստանի համար: Իսկ կարելի է շքանշանի յանձման քայլը դիտարկել որպէս կովկասեան աւանդական Ալաւերդու մի տարատեսակ»:



Սերժ Սարգսեան եւ Միխայէլ Սահակաշվիլի անցեալ աքաթ Երեւանի մէջ տեղի ունեցած հանդիպումի ընթացքին

## TRT-Ն ՊԱՏՐԱՍՏՒՈՒՄ Է ՀԱՅԵՐԷՆ ՀԵՌՈՒՍՏԱՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ՀԵՌԱՐՁԱԿԵԼ

Թուրքիայի պետական հեռուստաընկերութիւնը պատրաստւում է այս տարուայ ընթացքում հաղորդումներ հեռարձակել հայերէնով:

«Հիւրիեթ» թերթը գրում է, որ մի քանի ամիս անց այն բանից յետոյ, երբ սկսուեցին հայերէնով ռատիոհաղորդումները, Թուրքիայի ռատիոյի եւ հեռարձակման կորպորացիան՝ TRT-ն, հիմա պատրաստւում է հայերէնով հեռուստաեթեր ունենալ:

Հայերէնով ռատիոհաղորդումները սկսուեցին Ապրիլի 2-ին՝ ԱՄՆ-ի նախագահ Պարաք Օպամայի Թուրքիա այցի նախաշեմին. Օպաման Թուրքիա էր այցելել Ապրիլի 5-ին:

Ստամպուլում հրատարակուող «Ժամանակ» թերթի խմբագիր Արա Գոչունեանը «Ազատութիւն» ռատիոկայանին ասաց. - «Առաջին փուլում, երբ արդէն այս մասին խօսակցութիւններ, հրապարակումներ եղան, հասարակական կարծիքը լուսաբանուեց հետեւեալ տեղեկութիւններով, որ մի քանի փուլից բաղկացած ծրագիր է, որի առաջին փուլը ռատիոյով հաղորդումների հեռարձակումների կատարումն էր: Վաղուց հրապարակուած էր, որ այդ փուլին յաջորդելու են նաեւ հեռուստատեսային հեռարձակումները, նաեւ՝ հայերէնով մի կայքէջի պատրաստումը»:

«Հիւրիեթ»-ի աղբիւրը, որի անունը չի նշւում, ասել է, թէ հայերէնով հեռարձակման նախաձեռնութիւնները սկիզբ են առել անցեալ տարուայ սեպտեմբերին կայացած Հայաստանի եւ Թուրքիայի նախագահների հանդիպումից յետոյ:

TRT-ն 31 լեզուներով ռատիոհաղորդումներ է հեռարձակում: Հայերէն հեռարձակողների թիմը հանրութեան աչքից հեռու է պահւում:

Ինչպէս ներկայացուած է այս հրապարակման մէջ, այդ թիմի անդամներից է Հայաստանում ծնուած Էռնեստ Մարգարեանը: Նա առաջին անգամ է մամուլում բացայայտել իր ինքնութիւնը՝ ասելով, թէ Թուրքիա է եկել 2004 թուականին եւ որոշել է բնակուել Անքարայում: Մարգարեանի հաւաստմամբ՝ իր գործունէութեան համար Հայաստանից որեւէ հնարաւոր քննադատութիւն չի խոչընդոտի իրեն. - «Որովհետեւ ես անկեղծօրէն աշխատում եմ երկու ժողովուրդների ընդհանուր ապագայի համար»:

## ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԽՈՀԱԿԱՆ ՊԼՈՔ

Շարունակուածէջ 1-էն

Ընկ. Գալփաքեան կոչ ըրաւ երկրի բոլոր ուժերուն՝ դիւրացնելու նոր կառավարութեան կազմութիւնը, միաժամանակ վստահեցնելով որ Հայկական Պլոքը կանգնած է Հանրապետութեան նախագահի կողքին:

Յունիս 29-ին հայութեան ներկայացուցիչ երեսփոխանները հանդիպում ունեցան նշանակեալ վարչապետ Սաատ Հարիրիի հետ: Հանդիպումի ընթացքին խորհրդակցութիւն տեղի ունեցաւ նոր կառավարութեան կազմութեան շուրջ:

Հանդիպումէն ետք, պլոքին անունով խօսք առաւ պետական նախարար Ժան Օղասապեան: Ան յայտնեց, թէ Լիբանան թեւակոխած էր ծանր հանգրուան մը, հետեւաբար պայմանները կը թելադրեն առանց ժամավաճառութեան կազմել նոր կառավարութիւնը: Պետական նախարար Օղասապեան աւելցուց, թէ Հայկական Համախոհական պլոքը վարչապետ Հարիրիին փոխանցած էր նոր կառավարութեան կազմութեան վերաբերեալ իր պատկերացումը, անոր իրագործումը ձգելով վարչապետին հայեցողութեան: Օղասապեան նաեւ դրուատեց նոր կառավարութեան կազմութեան ուղղութեամբ հանրապետութեան նախագահին դերակատարութիւնը, մաղթելով, որ կարճ ժամանակամիջոցի մէջ Լիբանան կ՚ունենայ միասնական եւ գործունեայ կառավարութիւն մը:

## ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿԻՍՈՎ ՄԻԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԿԻՐ

Շարունակուածէջ 1-էն

սով միապետական ռեժիմով կը բնութագրուին այն երկրները, որոնք կը փորձեն քողարկել միապետականութիւնը, ժողովրդավարութեան հանդէպ սահմանափակ յարգանքով: Իսկ ընտրական գործընթացները, այս երկիրներուն մէջ, նոյնիսկ նուազագոյն չափով իսկ չեն համապատասխաներ ժողովրդավարական ընտրութիւններու չափանիշներուն:

Freedom House-ի եւրոպական գրասենեակի տնօրէն Վլատիմիր Շկոլնիկով, պատասխանելով «Ազատութիւն» ռատիոկայանի հարցին, այս կապակցութեամբ յայտնած է,- «Հայաստանը հրաշալի օրինակ է ... Եթէ միջազգային դիտորդները նախագահական ընտրութիւններէն յետոյ, ընտրախախտումներու վերաբերեալ ստացուած բազմաթիւ փաստերու, ընդդիմութեան ու իշխանութեան բախումներու եւ «Մարտի 1»-ի ֆոնին վրայ կը յայտարարեն, որ հայաստանեան ընտրութիւնները կը համապատասխանեն Եւրոպայի Խորհուրդի հիմնական չափանիշներուն, ուրեմն՝ բան մը սխալ է»:

## ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՆԿՐԷՍԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Շարունակուածէջ 1-էն

«Խորացող սոցիալ-տնտեսական ճգնաժամի, աղքատութեան եւ գործազրկութեան աճի, չհիմնաւորուած գնաճի հիմնական պատճառն այսօրուայ իշխանութիւնների վարած քաղաքականութիւնն է: Վերեւում թուարկուած երեւոյթների վերացմամբ եւ իրական ու ակնյայտ հակաճգնաժամային միջոցառումների իրականացմամբ միայն հնարաւոր է խուսափել տնտեսական աղէտից, ինչի համար սակայն երկրին անհրաժեշտ է սրտացաւ, օրինական, քաղաքական իշխանութիւն»,- ըսուած է Հայ Ազգային Գոնկրէսի յայտարարութեան մէջ:

## ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

# ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ, ՍԻՈՆԻՍՏՆԵՐԻ ԵՒ ՄԱՍՈՆՆԵՐԻ ԳԱՂՏՆԻ ԵՒ ՔԻՉ ՅԱՅՏՆԻ ԿԱՊԵՐԸ

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ**
*(Շարունակուած նախորդ թիւէն)*

*Արեւմտեան յայտնի հետազօտող, «Անգլիայի պատմութիւն» եւ բազմաթիւ այլ ուսումնասիրութիւնների հեղինակ Ջասպեր Ռիդլին իր «Ազատ որմնադիրները (ֆրիմասոնները). աշխարհի ամենահզօր գաղտնի կազմակերպութեան պատմութիւն» (Նիւ Եորք, 2001) մեծածաւալ աշխատութեան մէջ (էջ 216-218) յայտնում է Թալէաթի՝ Թուրքիայի «Մեծ Արեւելք» օթեակի (երկրի գլխաւոր օթեակի) Մեծ Վարպետը, այսինքն՝ ղեկավարը լինելու մասին, ինչը նշանակում է, որ նա 33-րդ աստիճանի մասոն է եղել: Թալէաթը նշուած օթեակի Մեծ վարպետ է դարձել 1909թ.: «Երիտթուրքերից շատերը մասոններ էին, բայց ոչ նրանց առաջադէմ հայեացքները Թուրքիայի մոդեռնիզացիայի մասին, ոչ էլ մասոնական սկզբունքները չկանխեցին Հայաստանում ցեղասպանութեան ծրագրին նրանց աջակցութիւնը»,- յիշեալ աշխատութեան մէջ գրել է Ջասպեր Ռիդլին: Մեծն Բրիտանիայի արտգործնախարարին ուղարկած նամակ-զեկուցագրում սըր Դ. Լոութըրը Թալէաթին եւ Ջավիդ բէյին ներկայացրել է որպէս, Իթթիհադ վէ Թերաքքը- կոմիտէի գաղտնի ուժերի պաշտօնական ներկայացուցիչներ եւ «Ֆրանկմասոնութեան գագաթնակէտերը Թուրքիայում»: «Երբ Թալէաթ բէյը ներքին գործերի նախարար դարձաւ մօտ մէկ տարի առաջ, պատասխանատու պաշտօնների նշանակուեցին միայն մասոններ կամ կոմիտէի հետ կապուած մարդիկ, իսկ, ամէնից յաճախ, այս երկու որակներն իրենց մէջ համատեղող դէմքեր,- գրել է Ստամպուլում Մեծ Բրիտանիայի դեսպանը: - Այսպիսով մասոնական կոմիտէի ցանցը տարածուեց ողջ կայսրութիւնով»: Վերը նշուած եւ այլ փաստերի վրայ սըր Դ. Լոութըրը եզրակացրել է, որ «Թուրքիայի քօղածածկուած կառավարութիւնը «Մեծ Արեւելքն» է՝ Մեծ Վարպետ Թալէաթ բէյի գլխաւորութեամբ»: Իր նամակ-զեկուցագրում դեսպանն ուշագրաւ տեղեկութիւններ է հաղորդել նաեւ Սայիդ Հալիմի մասին՝ նշելով, որ նա ֆինանսապէս աջակցել է «Միութիւն եւ առաջադիմութիւն» կոմիտէին եւ անձամբ մասնակցել նրա աշխատանքներին: Ս. Հալիմը 1913-1916թթ. եղել է Օսմանեան կայսրութեան Մեծ վեզիրը (վարչապետը), Մեծ եղեռնի ծրագրաւորողներից: Սըր Դ. Լոութըրը նշում է նաեւ, որ «երիտթուրքերը կապ հաստատեցին միայն օսմանցի եւ արտասահմանցի հրեաների հետ: Նրանց ստարումը միւս ժողովուրդներից՝ ակնյայտ դարձաւ», իսկ քիչ յետոյ յաւելում է. «Երեւում է, որ հրեան, իր տնտեսական բարձր գիտակցութեամբ, թուրքին ծուղակը գցեց»: Նոյն փաստաթղթում դեսպանը յայտնում է նաեւ իրեն հասած այն տեղեկութիւնը, թէ Սալոնիկի կոմիտէի ազդեցիկ գործիչներից մէկը՝ դոկտոր Նազըմը, հրէական ծագում ունի: Ցամենայնդէպս, անժխտելի փաստ է, որ դոկտոր Նազըմը Մեծ եղեռնի հիմնական ծրագրաւորողներից եւ իրագործողներից է եղել, ղեկավարել է այդ ահաւոր ոճրագործութիւնն իրագործելու կոչուած «Թեշքիլաթը մախսուսէ» («Յատուկ կազմաւորումներ») կառոյցը:*

*Նկատի ունենալով երիտթուրքերին՝ բրիտանացի դիւանագէտը գրել է. Մայրաքաղաքն ու խորհրդարանը նրանք իրենց ձեռքում պահում են ռազմական օրէնքով: Հայերին հանգստացրեցին Ատանայի կոտորածով, յոյներին ահաբեկչութեամբ ստիպեցին լռել, պուլկարական քաղաքական կեանքին վերջ դրեցին՝ նրանց ծառայութիւններն ու ընկերութիւնները փակելով: Այդ բոլորն արուեց «անսանձ» քրիստոնեաների դէմ: Հիմա Թրքական բանակը հանգստացնում է ըմբոստ ալպանացի մահմետականներին, եւ, ըստ երեւոյթին, նոյնը սպասում է նաեւ քրդերին ու արաբներին: Քանի որ Թուրք տարրը չի փայլում իմացական եւ գործարար որակներով, բնազդը նրան ստիպում է գերակայութիւնը ցոյց տալ ռազմական ուժով: Սակայն, այս ամէնը կախուած է եւրոպացի, հիմնականում հրեայ ֆինանսաւորողներից, որոնք նրանց յատկացնում են բանակը պահելու անհրաժեշտ գումարները, ինչը դէմ է տնտեսական զարգացման փաստացի իրադրութեան»:*

*«Սիոնիստների հետ երիտթուրքերի հակահայկական համագործակցութեան մասին գրում է Թեհրանի համալսարանի պատմութեան պրոֆ. Իսմայիլ Ռահինը իր՝ «Երիտթուրքերը պատմութեան դատաստանի առաջ» երկհատորեակի առաջին գրքում (եր., 1982)՝ անդրադառնալով երիտթուրքերի եւ սիոնիստների կապերին (228-249 էջեր),- տեղեկացրել է հայ ականաւոր պատմաբան եւ քաղաքագէտ Ջոն Կիրակոսեանը: -Հայերի կոտորածի մեղաւորներ ճանաչելով երիտթուրքերին եւ գերմանացիներին, թուրքական նացիոնալիզմն ու պանթուրքիզմը՝ պարսիկ պատմաբանն ընթերցողի ուշադրութիւնն է հրաւիրում Օսմանեան կայսրութեան հրեայ ազդեցիկ դէմքերի բացասական դերի վրայ: Նա յիշատակում է մի ֆրանսացու «Le Dernier bal» («Վերջին բալը») գրքի 1-36 - 46-86 էջերը», որտեղ փաստեր եւ ապացոյցներ են արձանագրուած միջազգային սիոնիզմի հակահայկական գործողութիւնների մասին: Մասնաւորապէս յիշատակւում է 1914-ի Յունիսի 23-ին Ստամպուլի Նուրի Օսման ակումբում կայացած Իթթիհադ կուսակցութեան ակտիւիստների եւ սիոնիստների համատեղ գաղտնի ժողովը: Մասնակցել էր մօտ 700 մարդ, այդ թւում Թալէաթը, Բաղրին, Սեդը, Ֆեքրին, Իավին եւ ուրիշներ:*

*Հրեաներից աչքի ընկնող դեր էին խաղացել Սամուէլ էֆենդին, Աբրահամ էֆենդին եւ ուրիշներ»: Գաղտնի ժողովում, որին մասնակցել են նաեւ մի շարք պանիսլամիստներ, հայերին մեղադրել են ռուսասիրութեան մէջ, որոշել բոյկոտ յայտարարել ինչպէս հայերին, այնպէս էլ յոյներին: Ի դէպ, ժողովում գլխաւոր ճառախօսը Թալէաթն է եղել: Եղեռնից վերապրածների ժառանգներս, որ գիտենք, թէ ինչպէս իրականացուեց եւ ինչ նշանակեց այդ բոյկոտը, Թալէաթին եւ հայ ժողովրդի միւս դահճապետերին երբեք չենք մոռանայ:*

# ԴԵՍՊԱՆ ՄԸՐԻ ԵՈՎԱՆՈՎԻՉԻ ՄԱՄԼՈՅ ԱՍՈՒԼԻՍԸ

*Շարունակուած էջ 1-էն*

*հանգները, ըսաւ ան, պիտի ոչինչ խնայէ Թուրքիոյ հետ սահմաններու բացման եւ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի կարգաւորման ճամբուն: Այս պիտի օգնէ բոլոր կողմերուն, հաւասարապէս: Մեծարգոյ հիւրը, նոյնպէս անդրադարձաւ երկրէն ներս տակաւ արձանագրուող թերութիւններուն: Ան ըսաւ, թէ կը բացակայի ժողովրդավարութիւնը, կը շարունակուին ընտրական խախտումները, պետական համակարգէն ներս չկան հաշուետուութիւն եւ թափանցիկութիւն: Այդ իմաստով, դեսպանը դիտել տուաւ, թէ թերութիւնները ժամանակի կը կարօտին սրբագրուելու համար:*

*Հայ մամուլի ներկայացուցիչները, իրենց տուած հարցումներու կիզակէտը դարձուցին Նախագահ Օպամայի՝ հայոց Ցեղասպանութիւնը ճանչնալու խոստումը, զոր տուաւ Նախագահական ընտրութիւններու իր թեկնածութեան շրջանին: «Օպամա, արդեօ՞ք Ցեղասպանութիւնը ճանչնալու իր բարոյական յանձնառութիւնը զոհ դարձուց աշխարհով մէկ ծանօթ Թուրք դարաւոր լպրծուն դիւանագիտութեան: Անգարայի Խորհրդարանի բեմահարթակէն կամ Ապրիլ 24-ի իր յայտարարութեան մէջ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ» անակնկալօրէն այլափոխեց «ՄԵԾ ԵՂԵՌՆԻ՝», շեշտակի հարցուց «Մասիս»ի խմբագիր Տօքթ. Գազանճեան, որ շարունակելով իր հարցադրումը շարունակեց. «իսկ ինչ կը վերաբերի Հայաստանին ու Ղարաբաղին յատկացուած տարեկան վարկերու պակասեցման եւ Ատրպէյճանին յատկացուած վարկի յաւելման՝*

*ԱՄՆ-ի քոնկրէսի կողմէ նոր գրգռութիւն մը պէտք չէ՞ նկատուի հայ հասարակութեան դէմ: Ի՞նչ է ձեր կարծիքը այս հարցերու կապակցութեամբ»:*

*Դեսպան Եովանովիչի տարածուն պատասխան ելոյթը կարելի էր ամփոփել պարզ այն նախադասութեամբ, թէ Օպամայի՝ «Ցեղասպանութիւն» բառը գործածելու որոշումը ի վերջոյ կը պատկանի Սպիտակ տան:*

# ՄԱՀ ԵՒ ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆ Տ. ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱԼԵԱՆԻ

*Շարունակուած էջ 1-էն*

*թիւնը եւ Մայր Աթոռի միաբանները մօտեցան ու համբուրեցին Ներսէս Սրբազանի ճակատը եւ աջ ձեռքը՝ իրմէ ստանալով վերջին ողջոյնը:*

*Ապա դամբանական խօսքով հանդէս եկաւ Տ. Արսէն Արքեպիսկոպոս Պէրպէրեան: Ան անդրադարձաւ Ներսէս Սրբազանի կեանքին ու գործունէութեան, անոր գրական ժառանգութեան՝ շեշտելով հանգուցեալ Սրբազանի անձնուէր ու անսակարկ ծառայութիւնը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցւոյն եւ մասնաւորապէս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին:*

*Ս. Պատարագի աւարտին կատարուեցաւ Սրբազանի թաղման կարգը: Շարականներու եւ սաղմոսներու երգեցողութեան ներքեւ Տ. Ներսէս Արքեպիսկոպոս Պոզապալեանի աճիւնը ամփոփուեցաւ Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ բակէն ներս:*

### ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻԾԵՐ Տ. ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱԼԵԱՆԻ

*Տ. Ներսէս Արքեպիսկոպոս Պոզապալեան (աւազանի անունը՝ Յակոբ) ծնած է 1937 թուականին Կիլիկիոյ՝ Գըրգխան աւանը, ուրկէ 1939-ին գաղթած է Պէյրութ: Ուսանած է Պէյրութի Նուպարեան վարժարանը, Անթիլիասի դպրեվանքը, եւ ապա Պէյրութի Կեդրոնական Բարձրագոյն վարժարանը:*

*1957-ին ընտանիքով տեղափոխուած է Հայրենիք: Ուսումը շարունակելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գէորգեան Հոգեւոր Ճեմարանէն ներս:*

*1957-ին Ս. Ստեփանոս Նախավկայի տօնին, երանաշնորհ Տ. Հայկազուն Արքեպս. Աբրահամեանի ձեռամբ ձեռնադրուած է սարկաւագ:*

*1960-1961 ուսանած է Ռուս Ուղղափառ Եկեղեցւոյ Զագորսկի ակադեմիայէն ներս:*

*1961-ին Վազգէն Ա. Հայրապետի ձեռամբ ձեռնադրուած է կուսակրօն քահանայ՝ վերանուանուելով Ներսէս:*

*1962-ին Վազգէն Ա.-ի կողմէ ստացած է վարդապետական, ապա՝ 1965-ին ծայրագոյն վարդապետութեան աստիճան:*

*1963-1965 ուսանած է Անգլիոյ Եորքշըր նահանգի Յարութեան Գոլէճի աստուածաբանական բաժինը, որու ընթացքին մասնակցած է Քէյմպրիճ համալսարանի անգլիական գրականութեան եւ մշակոյթի ամառային դասընթացներուն:*

*1965-1969 վարած է Ս. Էջմիածնի Հոգեւոր Ճեմարանի տեսուչի պաշտօն:*

*1969-72 եղած է Զուիցերիոյ հայոց հոգեւոր հովիւ:*

*1973-ին ընտրուած է Անգլիոյ թեմի առաջնորդ:*

*1974-ին ձեռամբ Վազգէն Ա. Կաթողիկոսի ձեռնադրուած է եպիսկոպոս:*

*1982-ին Վազգէն Ա. երջանկայիշատակ կաթողիկոսի կողմից հրաւիրուած է Մայր Աթոռ եւ նշանակուած՝ Մայր Աթոռի դիւանապետ: Եղած է նաեւ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի անդամ:*

*1983-ին ընտրուած է Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Կենտրոնական Կոմիտէի անդամ:*

*1982-1995 հիմնած եւ ղեկավարած է Հայաստանի Աստուածաշնչային Ընկերութիւնը:*

*1986-ին ձեռամբ Վազգէն Ա. Կաթողիկոսի ստացած է արքութեան պատիւ:*

*1999-ի Յուլիսի 4-ին ընտրուած է կաթողիկոսական տեղապահ եւ կազմակերպած է կաթողիկոսական ընտրութիւնները՝ 1999-ի Հոկտեմբեր 27-ին:*

*2000-2003 իր հոգեւոր գործունէութեան 40-ամեակի առիթով Կոտայքի շրջանի Թեղենիք գիւղին մէջ կառուցած է Սրբոց Նահատակաց եկեղեցի՝ իր ծնողներու՝ Գրիգոր եւ Մաքրուհի Պոզապալեաններու յիշատակին: Այս առիթով Վեհափառ Հայրապետի կողմէ պարգեւատրուած է Հայ Եկեղեցւոյ բարձրագոյն՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ շքանշանով:*

*Ներսէս Սրբազանը հրատարակած է 10 անուն բանաստեղծական եւ քարոզխօսական գիրքեր: Դասախօսած է Գէորգեան Հոգեւոր Ճեմարանէն ներս:*

*2000-2006 եղած է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հրատարակչական մարմնի տնօրէն:*

## ՀԱՅԱՍՏԱՆ

# ԿՈԱԼԻՑԻԱՅԻ ՄՇԱԿՈՅԹԸ ՓՈԽԱՐԻՆՒՈՒՄ Է ՄԻԱԿՈՒՍԱԿՑԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄՇԱԿՈՅԹՈՎ

*ՄԱՆՈՒԷԼ ՍԱՐԳՍԵԱՆ*
*«ՀԱՅԱՍՏԱՆ»*

Երեւանի աւագանու ընտրութեան բնոյթն ու արդիւնքները Հայաստանի հասարակութեան ամենատարբեր շերտերում լայն քննարկումների տեղիք են տուել: Այլ թեմաների շարքում, ուշադրութեան կենտրոնում է յայտնուել ժողովրդավարութեան արժէքի եւ, մասնաւորապէս, բուն ընտրութիւնների թեման: Աւելի ու աւելի բարձր են հնչում խօսակցութիւնները «ուժեղ ձեռքի» գաղափարի օգտին: Երեւում է, նման պահանջ առաջացել է այն կապակցութեամբ, որ իշխանութեանը սատարող մտաւորականութեան ներկայացուցիչները յայտնուել են բարդ խնդրի առջեւ արդարացնել այնպիսի գործչի «յաղթանակը», ինչպիսին Գագիկ Բեգլարեանն է: Հասկանալի է, որ ոչ ոք չի կարող Երեւանի քաղաքապետի պաշտօնում նման հեղինակութեան յայտնուելը ճանաչել որպէս ժողովրդավարութեան յաղթանակ Հայաստանում: Համապատասխանաբար, պէտք եկան լրացուցիչ փաստարկներ քաղաքական փիլիսոփայութեան ոլորտից: Եթէ այդ բանավէճում խօսք լինէր միայն անցած ընտրութիւնների օրինականութեան փաստարկման փորձերի մասին, նման բնորոշ ապոլոգետը առանձնապէս հետաքրքրութիւն չէր ներկայացնի: Սակայն կրկին օրակարգում յայտնուեցին «ժողովրդավարական ընտրութիւնների վնասակարութեան» եւ «յանուն կայունութիւն ու օրէնք հաստատելու բռնապետութեան օգտակարութեան» մասին ծանօթ թեզերը: Այս թեզերն առաջ են քաշուել ի պատասխան օրինականութիւն ապահովելու պահանջների: Համապատասխանաբար, այն հանգամանքը, որ բռնապետութիւնը հենց այն է, որը չի ընդունում պետական օրէնքը, չի քննարկւում:

«Օրինականութիւն» հասկացութեան փոխարէն մտցւում է «կարգուկանոն» հասկացութիւնը: Համարւում է, որ ազգն անհրաժեշտ է կառավարել «երկաթեայ ձեռքով», որպէսզի բոլորն իրենց տեղն իմանան: Ժողովուրդը համարւում է անկիրթ, իսկ իշխանութիւնը ձեւաւորելու գործը նրան թողնելը վտանգաւոր:

Յատկանշական է, որ սովորաբար որպէս փաստարկ նշւում է Գերմանիայում ազատ ընտրութեան միջոցով Հիթլերի իշխանութեան գալը: Այսինքն, բերւում է ժողովրդի ընտրութեան վատ օրինակ: Դրանով «յանուն կայունութիւն ու օրէնք հաստատելու բռնապետութեան օգտակարութեան» մասին թեզի փաստարկումն աւարտւում է: Մոռացւում է, որ այդ բռնապետի անձը հերքում է ոչ թէ ազատ ընտրութեան վնասակարութեան թեզը, այլ հակառակը «երկաթեայ կարգուկանոնի» օգտակարութեան թեզը: Վերջինս բռնապետի ամենավառ օրինակն է՝ ի՞նչ կարիք կայ նրան ժողովրդավարական ընտրութիւնների բացասական հետեւանքների օրինակ բերել: Ընդհակառակը, ապոլոգետների տրամաբանութեամբ, իրենց բերած հենց այդ օրինակը պէտք է վկայի ժողովրդի ընտրութեան օգտակարութեան օգտին: Այսինքն, ժողովրդավարութեան հակառակորդները նման փաստարկմամբ ընդամէնը խոստովանում են, որ իրենց մտադրութիւններն այլ հարթութիւնում են: Պէտք է ամէն գնով արդարացնել իրենց սատարած իշխանութեան անօրինականութիւնները: Պէտք է ասել, որ աբսոլիւտիզմը պետական կարգի սիրուած մոտել է նրանց համար, ովքեր ազգի կամ արտայայտումը փնտռում են ներազգային կոշտ կարգուկանոնի մէջ: Ընդ որում, համարւում է, որ պետութեան կառուցուածքի ժողովրդավարականութիւնը նուազեցնում է ազգի կամքը եւ նրա կազմակերպուածութիւնը: Այն հանգամանքը, որ ամենազարգացած եւ ազդեցիկ ազգերը հենց ժողովրդավարական երկրների ժողովուրդներն են, անտեսւում է: Բարձրագոյն արժէք է համարւում բռնապետի վարքի ցուցադրական կոշտութիւնը: Երկրի վիճակը հաշուի մէջ չէ:

Նկարագրուած քաղաքական փիլիսոփայութիւնը չափազանց զարգացած է երրորդ աշխարհի ցանկացած երկրի հասարակական-քաղաքական էլիտայի միջավայրում: Համոզուածութիւնը, թէ բռնապետութիւնը լաւագոյն միջոցն է կարգուկանոն հաստատելու համար, յատուկ է նաեւ Հայաստանի շատ կրթուած մարդկանց: Ճիշտ է, պէտք է յստակեցնել, որ նման համոզմունքների տէր մարդիկ միշտ համարում են, որ բռնապետ կարող են լինել միայն իրենց պատկերացումներին համապատասխանող գործիչները: Աւելի ճիշտ, գործիչները, ում հետ նրանք լաւ յարաբերութիւններ են հաստատել: Գործիչների միւս խմբերին մերժւում է բռնապետութիւն հաստատելու իրաւունքը:

Մնում է միայն խոստովանել, որ մենք գործ ունենք մարդկանց հետ, ովքեր պատկերացում չունեն օրէնքի մասին եւ չեն ընդունում պետական օրէնքը որպէս պետութեան ուժի եւ կայունութեան հիմք: Այդ մարդիկ հաւատում են միայն անձի կամքի ուժին: Իսկ պետական կեանքի արժէքը տեսնում են ազգի արդար ու գործունակ առաջնորդի լաւ գործերի մէջ: Այսպիսին է քննարկուող բաւական տարածուած քաղաքական մտածողութեան ընդհանուր սխեման: Պատահական չէ, որ երկրի քաղաքական կեանքի նման պատկերացում ունեցող գործիչները միշտ յայտնւում են ցանկացած անօրինականութեան, եւ առաջին հերթին՝ բռնութիւնների պաշտպանի ու արդարացնողի դերում:

Եթէ վերը բերուածի տեսանկիւնից գնահատենք հետընտրական գործընթացները Հայաստանում, առաջին հերթին արժէ կանգ առնել գործող իշխանութեան ապոլոգետների ուժգնացող ագրեսիայի ֆենոմենի վրայ: Վերջին օրերին յաճախացել են իշխանամէտ մամուլի կոչերը՝ խստացնել վերաբերմունքը ընդդիմադիր կուսակցութիւնների ու մամուլի հանդէպ: Առաջարկւում է նոյնիսկ չէզոքացնել քաղաքական ուժերը, որոնք նրանք որակում են որպէս դիւակապտողներ ու կաստաներ:

Այն, որ այդ կոչերն արտայայտում են Հայաստանի բարձրագոյն իշխանութեան տրամադրութիւնները, կասկած չի կարող լինել: Լիովին հասկանալի չեն միայն նման քարոզչութեան նպատակները: Ըստ ամենայնի, դրանք արձագանք են ԱՄՆ Պետդեպի զեկոյցում առկայ՝ Հայաստանի վերաբերեալ կոշտ գնահատականների եւ Հազարամեակի մարտահրաւէր ծրագրի ճանապարհային ենթածրագրի դադարեցման որոշման: Երեւում է, ենթադրւում է, որ արտաքին ատեանների կոշտութեանը պէտք է պատասխանել Հայաստանի քաղաքական ուժերի հասցէին շանտաժով: Ենթադրւում է, որ արեւմտեան ժողովրդավարութիւնների կոշտ գործողութիւնները կարող են խթանել ընդդիմադիր ուժերի ակտիւութիւնը երկրի ներսում: Ամէն դէպքում, հետընտրական շրջանում Հայաստանի իշխանութեան վարքում նկատելի է մի ակնյայտ միտում: Ակնյայտօրէն համարւում է, որ անցած ընտրութեան արդիւնքները նոր, բարենպաստ պայմաններ են ստեղծել ոչ միայն մի շարք խնդիրներ օրակարգից հանելու, այլեւ գործող վարչակարգի անվտանգ ու կայուն գործունէութեան համար: Իշխանութեան ներքին տրամադրութիւնները փոխանցեց վարչապետ Տիգրան Սարգսեանը, ով օրերս Մոսկուայում յայտարարեց, թէ Հայաստանում արդէն չկան ուժեր, ովքեր ունակ են խախտել կայունութիւնը: Դա է հաստատում նաեւ Սերժ Սարգսեանի հրամանագիրը Փաստահաւաք խմբի գործունէութիւնը դադարեցնելու մասին: Նկատելի է, որ Հայաստանի իշխանութիւնը գրոհի է անցել ողջ ճակատով: Ամենայատկանշականն այն է, որ Հայաստանի օլիգարխական վարչակարգը խնդիր է դրել ոչնչացնել քաղաքական եւ տնտեսական ազատ գործունէութիւնը: Թէ ինչո՞ւ դժուար չէ հասկանալ: Դա բխում է հենց օլիգարխական վարչակարգի էութիւնից: Նման վարչակարգը չի կարող գոյութիւն ունենալ առանց ամէն տեսակի գործունէութեան վրայ համընդհանուր մենաշնորհ հաստատելու: Համապատասխանաբար, եթէ հասարակութիւնը մտադրւում է հասնել ինքնակազմակերպման եւ խախտել վարչակարգի մենաշնորհի պայմանները, վտանգաւոր է դառնում օլիգարխիայի համար: Վերջին տարիներին երկու ընտրութիւնների ակտը գործող վարչակարգի մենաշնորհային ազդեցութեան սպառնալիք են առաջացրել: Օլիգարխիան կանգնել է սեփական փրկութեան խնդրին դէմյանդիման: Դրա համար չկայ այլ ճանապարհ, քան հասարակութիւնը մեռցնելը: Ակտիւ վիճակում հասարակութիւնը վտանգաւոր է:

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA
ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680



ՏԵՍԱԿԷՏ

# ԱԶԳԱՅԻՆ ՄՏԱՅՈԳՈՒԹԵԱՆ ՀԱՐՑ ՄԸ

## ՏՕՔԹ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

*ՀԱՅԿ ՆԱԳԳԱՇԵԱՆ*

*Խմբագիր մըն է գինք մտահոգող նիւթին մասին խօսողը. լաւ աշխատակից մը ունէի, այժմ աչքերը լաւ չեն տեսներ եւ ես հազիւ կրնամ անընթեռնելի գիրը վերծանելով կարդալ հրատարակելու համար: Միւսը մահամերձ է, իսկ մէկը մեռաւ արդէն: Եթէ զգայականութիւնը մէկդի դնենք ու սիրելիներու մահը ընդունինք իբրեւ կեանքի բնականոն ընթացքը՝ մեր վիշտը մասամբ կրնայ թեթեւնալ, եթէ անոնց գործը շարունակողներ ըլլան: Բայց չկան: Դարերէ ի վեր կրկնուող ժողովրդական խօսքը, թէ «անփոխարինելի մարդիկ չկան», ներկայիս սխալ կը նկատուի, քանի որ, ամէն մէկ մեկնող անփոխարինելի կը մնայ:*

*Մեծ-մեծ տիտղոսներով մարդիկ ունինք ամէն տեղ. դոկտորներ, փրոֆեսորներ (քիչ բացառութեամբ), որոնք այդ տիտղոսներով կը շլացնեն հանրութիւնը, ճիշդ այնպէս՝ ինչպէս դոհարեղէնով զարդարուած եւ մետաքսեայ հագուստներու մէջ շողշողացող կարգ մը տիկիններ: Բայց ներողութի՛ւն, այդ տիկինները իրենց գեղեցկութիւնը չեն ցուցադրեր միայն, այլ զայն կը բաշխեն իրենց հրապոյրով տարուածներուն: Իսկ մեր տիտղոսաւորնե՞րը... ընդհանրապէս կը բացակային մեր գրական աշխարհէն ու մամուլէն, անիրաւ վարկ մը վայելելու սին փառասիրութեամբ: Իսկ մենք ինքնագոհ ցուցադրութեան ծառայող, տիտղոսաւորներուն պէտք չունինք: Որո՞ւ հոգն է թէ ինչ տիտղոսներով պճնուած են անոնք, եթէ հանրութիւնը՝ ազգն ու հայրենիքը օգուտ չեն քաղեր անոնցմէ: Որքա՜ն ճիշտ է Քամառ Քաթիպայի երկտողը. «Բայց թէ փողէդ շահ չունի Հայաստան, թքել եմ քեզ էլ, փողիդ էլ վրան»:*

*Եւ կան նաեւ մրցանակ բաշխող «բարերար»ներ, որոնց խթանը եւ գնահատանքի չափանիշը, յաճախ, արժանիէն աւելի սեփական փառաբանութեան ակնկալութիւնն է, քան թէ ազգային, ընկերային ու գրական մարզերու մէջ հազուագիւտ դարձած արժանաւորներու գնահատանքը:*

*Կարգ մը գաղութներու մէջ, ինչպէս նախա-90-ական թուականներու, Պէյրութը, նուիրեալ անհատներու աշխատանքն էր այդ գաղութներու մշակութային կեանքին փայլ տուողը, եւ քանի որ այդ գործունէութիւնները յառաջ բերող հաստատութիւններ չունինք՝ այդ դերը կատարող անհատներու մեկնումով դադրեցան, կամ նուազեցան այդ աշխատանքները:*

*Խմբագիրը շարունակեց. Այդ հազուագիւտ դարձած գրողներն ու մամուլի ծառայողներն ալ եօթնասունը անցած են արդէն եւ նորերուն մէջ զանոնք փոխարինողներ գրեթէ չկան: Ժամանակ մը առաջ Խորհրդային Հայաստանի մէջ մասնագիտական ուսում առած ուժեր հասան, սակայն անոնց ալ տէր չկրցինք ըլլալ եւ անբաւարար նիւթականի կողքին նաեւ սեփական փառասիրութիւններու եւ այլազան պայքարներու ծառայելու սահմանուած իրենց դերէն զգուած՝ անոնք հեռացան ազգային ասպարէզէն: Այս ընթացքով ի՞նչ պիտի ըլլայ հայ մամուլին ապագան: Համացանցին հասցուցած վնասին հետ այդ մէկը եւս՝ գիս յուռետես կը դարձնէ: Մտահոգուող ու դարմանին մասին մտածող կա՞յ արդեօք: Ժամանակն է մտածելու, որովհետեւ, այս ընթացքով տասնամեակ մը յետոյ խմբագիր, հրապարակագիր, թերթ ու թղթակից հազուագիւտ պիտի ըլլան: Արդեօ՞ք դարման մըն է աշխատակցութեան փոխարէն պատուագին վճարելը: Գուցէ՛: Կը հաւատամ թէ այդպէս ընելով, գուցէ խայծ մը, կամ խթան մը տուած կ'ըլլանք հրապարակագրական ասպարէզ նորեր հրապուրելու: Այսինքն, լրագրութիւնը ասպարէզ մը ըլլայ ոչ միայն մէկ կամ մէկուկէս հոգիով թերթ հրատարակող խմբագրին, այլ թերթին հետ կապ ունեցող բոլոր աշխատակիցներուն համար, որոնք իրենց աշխատակցութեան փոխարէն ոչ միայն հոգեկան, այլեւ նիւթական բաւարարութիւն ունենան:*

*- Բայց ո՞ւր է շօշափելի դրամը: Կրնա՞նք յուսալ որ բարերարներ գտնուին շարունակելու համար երանելի Ալեք Մանուկեանին օրինակելի աւանդը: Անոր շնորհիւ ծաղկումի շրջան մը ապրեցաւ հայ գրականութիւնը Պէյրութէն մինչեւ Լոս Անճելըս: Բայց ասիկա վաղանցուկ անձնական նախաձեռնութիւն մըն էր, մինչ մեզի պէտք եղածը մնայուն հաստատութիւն մըն է:*

*Խորհրդային Հայաստանի մէջ Գրողներու Միութիւնն ու Հայպետհրատը այդ հաստատութիւնն էին, որմէ լիովի կ'օգտուէին գրողները, մշակոյթի ծառայողները: Գրողներու Միութիւնն ու Պետհրատը ճնշումի տակ էին գրողներու գործերը հրապարակելու, փոխան վարձատրութեան մը, որ ամենահամեստ չափանիշով, անոնց ապրուստը կ'ապահովէր:*

*Այսօր ոչ մէկը կայ եւ ոչ ալ միւսը: Ի՞նչ պիտի ըլլայ վաղուան պատկերը, եթէ Սփիւռքը չգտնէ իր նոր բարերարները եւ անկախ Հայաստան չկարենայ շարունակել Խորհրդային Հայաստանի աւանդը:*

*- Առաջարկ, թելադրանք, լուծում ունի՞ս...*

*- ...............*

*- Ե՛ս ալ չունիմ: Միակ լուծումը կրնայ թերեւս յառաջ գալ, եթէ հայ մամուլը հաւաքաբար ահազանգ հնչեցնէ մօտեցող վտանգին մասին: Առանձին քու եւ իմ մտահոգութիւնը բաւարար չէ, ազգովին պէտք է մտահոգուինք կանխարգիլելու համար այդ տխուր վիճակը, որ մեզի կը սպասէ շատ մօտ ապագային: Լուծման յոյսը կապուած է դրամին, որ մեզի չի տրամադրուիր օտարէն, բացի մեր մեծահարուստներէն, եթէ անոնց մէջ կան զօրաւոր լսողութեամբ, ազգային բարձր գիտակցութեամբ անձնաւորութիւններ:*

*Սակայն, ուրուագծուած այս տխուր պատկերին հակառակ, տակաւին կը գտնուին գրողներ, որոնք իրենց խնայողութիւնը փոխանակ անձնական հաճոյքներու համար մսխելու, յուզիչ յամառութեամբ մը, տակաւին գիրք հրատարակելու կը տրամադրեն, գիտնալով նոյնիսկ որ ընթերցողներն ալ հազուագիւտ դարձած են: Ներկայ վիճակին իրական պատկերը տալու համար առանց ամչնալու պէտք է ըսել որ հայ գիրքը վաճառուելէ աւելի նուէր կը տրուի հեղինակին կողմէ: Երանի թէ ազնուափայլ տիկիններն ալ իրենց այցելութիւններու առթիւ, փոխանակ կարկանդակի, կամ ծաղկեփունջի գիրք տանէին իբր նուէր, ինչպէս ըսաւ գրասէր տիկին մը:*

*Լուծման այս առաջարկը հեգնական թուելով հանդերձ պէտք է ընդունիլ որ ցաւալիօրէն հո՛ն հասած ենք:*

# ԺԱՄԱՆԱԿԸ ԵՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԿԸ ՓՈԽՈՒԻՆ...

*ԱՀԱՐՈՆ ՇԽՐՏԸՄԵԱՆ*

*Ըստ երեւոյթին, Իրանի նախագահական ընտրութիւնները աւելի ձեռնտու պայմաններով աւարտեցան Ուաշինկթընի «մօտ» նկատուող, այսպէս կոչուած արաբական չափաւորական պետութիւններուն համար: Երկփեղկուած, իր քաղաքական ներքին պայքարներուն մէջ խրած Իրան մը աւելի ձեռնտու է Արեւմուտքին, նաե՛ւ արաբական աշխարհին, քան՝ Միր Հիւսէյն Մուսաուիի յաղթանակով ձեւաւորուած Իրան մը: Իրանի այժմու քաղաքական պայմաններուն տակ Մուսաուիի փոխարէն Մահմուտ Ահմետինեճատի վերընտրութիւնը աւելի ձեռնտու է Արեւմուտքին: Քաղաքական դաշտին վրայ խորացող երկփեղկումը, երկրէն ներս ծագած տնտեսական եւ ընկերային դժգոհութիւնները, վերընտրուած նախագահը պիտի մղեն դադրեցնելու Համասի-Հըզպալլայի, եւ այլոց կատարած ռազմական ներդրումները եւ կեդրոնանալ Իրանի տնտեսութիւնը բարելաւելու հնարաւորութիւններուն վրայ: Ահմետինեճատի նախագահութեամբ երկփեղկուած Իրան մը աստիճանաբար պիտի նուազեցնէ իր ազդեցութիւնը Արաբական Ծոցի եւ Միջին Արեւելքի քաղաքականութեան մէջ:*

*Արաբական աշխարհը լռութեամբ կը հետեւի Իրանի զարգացումներուն: Ցետ ընտրութեան հանգրուանի Իրան մը աւելի տարբեր պիտի ըլլայ նախընտրական Իրանէն: Պատմականօրէն արաբական աշխարհը միշտ խուսափած է իր դէմ ունենալ հզօր իրանեան պետականութիւն մը, միաժամանակ՝ արաբական աշխարհը միշտ խուսափած է Արեւմուտք-Իրան մերձեցումէն: Այս պարագային, Իրանի մէջ ստեղծուած քաղաքական իրավիճակը ձեռնտու է բոլորին: Բայց արդար ըլլալու համար, ոչ ոք կը նախատեսէր ստեղծուած այս իրավիճակը: Իրանի նախագահական ընտրութիւնները խորունկ վէրք մը բացին իրանեան ընկերութեան մէջ, վէրք մը, որուն դարմանը պիտի չաւարտի քուէաթուղթերուն վերահաշուարկով: Իւրաքանչիւր կողմ կը խօսի հաւատքի ու կրօնի անունով: Իւրաքանչիւր կողմ կը խօսի իբրեւ, թէ ան է ներկայացնողը երկրին իսկական մեծամասնութիւնը: Խորքին մէջ, Իրանի իսկական հակամարտութիւնը, Իսլամական Յեղափոխութեան առաջադրանքներուն եւ նուաճումներուն շուրջ գոյութիւն ունեցող իրարամերժ տեսակէտներու պայքար մըն է: Խմբաւորումներուն մէկը կը փափաքի աստիճանաբար յեղաշրջել երկրին մէջ գործող կառոյցներուն աշխատելաոճը, աւելի ժողովրդավարական կերպարանք, մեկնաբանութիւն տալ, պատմուճան հագցնել իսլամական հաստատութիւններուն, միւս կողմը՝ կը պնդէ կառչած մնալ իսլամական յեղափոխութեան սկզբունքներուն:*

*Ընդդիմութիւնը շեշտը կը դնէ երկրին բոլորած անցուկ տնտեսական կացութեան, գործազրկութեան վրայ:*

*Միւս կողմէ, ինչպիսի՞ դիրք պիտի որդեգրեն Իրանի դաշնակիցները ի տես Թեհրանի պողոտաները ողողած ցուցարարներուն: Հըզպալլայի ընդհանուր քարտուղար Հասան Նասրալլա առաջիններէն էր, որ Ահմետինեճատի վերընտրութիւնը շնորհաւորեց: Սակայն, ան այսօր աւելի զուսպ մօտեցում կը ցուցաբերէ, Մուսաուիի բողոքներուն նկատմամբ: Նասրալլա շատ լաւ կ'ըմբռնէ, թէ Իրանի նախագահական ընտրութիւններուն արդիւնքը ինքնաբերաբար իր անդրադարձը պիտի ունենայ անոր գլխաւորած կազմակերպութեան ճակատագիրին վրայ: Թեհրանի պողոտաներուն վրայ բողոքի ցոյցերը եւ իշխանութենէն ներս ծագած պայքարը իր հետեւանքները պիտի ունենայ Իրանի դաշնակիցներուն վրայ:*

*Իրանի դաշնակիցներուն համար հաճելի պիտի չըլլար տեսնել Թեհրանի պողոտաներուն մէջ կատարուող վայրագութիւնները, ապահովական զարգացումները: Անոնց համար, Ահմետինեճատ որքան շուտ յաղթահարէ այս խոչընդոտները այնքան՝ լաւ:*

*Համասի եւ Հըզպալլայի պարագային կացութիւնը աւելի մտահոգիչ է: Այստեղ հակասութիւն մը կ'առաջանայ Աստուծոյ անսակարկելի օրէնքներուն գործադրութեան եւ գործնապաշտ ժողովրդավարութեան միջեւ:*

*Երեւոյթ մը, որ Իրան յաջողութեամբ կը կիրարկէր անցնող 30 տարիներուն եւ կերպով մը կը պահպանէր այդ հաւասարակշռութիւնը: Սակայն այսօր՝ ժողովրդավարութեան եւ կրօնականներու միջեւ ստեղծուած հակամարտութիւնը կրնայ աւարտիլ կրօնականներու յաղթանակով, ինչ որ աւելի արմատական պիտի դարձնէ իշխանութիւնը, բայց միւս կողմէ, պիտի խորացնէ հանրութեան մէջ ծագած երկփեղկումը:*

*Իրանի կրօնաւոր առաջնորդները չեն նկատեր փոփոխութեան քամիները: Յունիս 4-ին, Գահիրէի համալսարանին մէջ, նախագահ Պարաք Օպամա, աւելի քան 2500 անձերու առջեւ իր արտասանած հռչակաւոր խօսքին մէջ, երկխօսութեան ձեռք մեկնեց Իրանին եւ յատկանշականօրէն, խոստովանեցաւ, թէ Մուհամմէտ Մուսատէղի դէմ 1953-ի յեղաշրջումը ապօրէն քայլ մըն էր, որուն համար եկած էր յայտնելու իր ներողամտութիւնը:*

*Այս այն նախագահն է, որ իրանցիները շնորհաւորեց Նեվրուզի տօնին առիթով: Այս այն նախագահն է, որ Գահիրէի համալսարանին մէջ իր արտասանած խօսքին ընթացքին իւրաքանչիւր անգամ երբ Իրանի անունը կ'անուանէր «Իրանի Իսլամական Հանրապետութիւն» եզրը կ'օգտագործէր: Շատեր անտեսեցին Օպամայի արտասանած խօսքին այս հատուածները: Շատեր այսօր կ'անտեսեն Հոնտուրասի մէջ պատահած յեղաշրջումին առաջին օրը նախագահ Օպամայի կատարած յայտարարութիւնը, թէ Ուաշինկթըն կը դատապարտէ զինուորական յեղաշրջումը եւ կը մերժէ գործ ակցիլ Հոնտուրասի նոր կառավարութեան հետ:*

*Ժամանակները կը փոխուին, յաճախ պէտք է հետեւիլ այդ փոփոխութիւններուն:*

www.massisweekly.com

## ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

# «ՄԻԱՍԻՆ ԴԷՊԻ ՆՊԱՏԱԿԱԿԷՏ…» ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԳԼԽԱՒՈՐ ԳՄԲԷԹԻ ԽԱՉԻ ԶԵՏԵՂՈՒՄ

*Թեմակալ Առաջնորդ Սրբազան Հօր հովանաւորութեամբ «Միասին Դէպի Նպատակակէտ...» նշանաբանով եւ կազմակերպութեամբ Առաջնորդանիստ Մայր Տաճարի Հանգանակիչ Յանձնախումբի, Կիրակի, Յունիս 28ի երեկոյեան ժամը 6:00ին, Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան եւ Գերշ. Տ. Վաչէ Արք. Տէրտէրեան, մասնակցութեամբ Առաջնորդական Ընդհանուր փոխանորդ՝ Հոգշ. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեանի, Առաջնորդանիստ Մայր Տաճարի կառուցման Աշխատանքներու վերահսկիչ՝ Հոգշ. Տ. Պարետ Ծ. Վրդ. Երէցեանի, Դոկտ. Արժ. Տ. Զաւէն Աւագ Քհնյ. Արզումանեանի, Արժ. Տ. Արշակ Աւագ Քհնյ. Խաչատուրեանի, Արժ. Տ. Սիփան Աւագ Քհնյ. Մխսեանի, Արժ. Տ. Յովսէփ Աւագ Քհնյ. Յակոբեանի, Արժ. Տ. Միքայէլ Քհնյ. Կիւրեղեանի եւ Արժ. Տ. Խաժակ Քհնյ.*



*Տըլայլա Շահպազեան եւ Ալեք Ադամեան մի քանի տողեր ալտասանեցին Վահան Թէքէեանի «Եկեղեցին Հայկական» բանաստեղծութենէն եւ ապա հրաւիրեցին*



*Շահպազեանի, Առաջնորդանիստ Մայր Տաճարի Խաչատուրեան Դպրաց Դաս Երգչախումբի կողմէ երգուած «Հրաշափառ» շարականի երգեցողութեամբ, առաջնորդուեցան դէպի Առաջնորդարանի բակը, ուր նոյն օրը առաւօտուն օծուած էր Մայր Տաճարի Գլխաւոր Գմբէթին Խաչը: Խաչատուրեան Դպրաց Դաս Երգչախումբի կողմէ երգուած շարականներու ընթացքին, Խաչը բարձրացաւ դէպի գմբէթ: Առաջնորդ Սրբազան Հօր «Պահպանիչ» օրհնութեան աղօթքով վերջ գտաւ հանդիսութեան կրօնական բաժինը, ապա սկսաւ գեղարուեստական յայտագիրը:*

*Բացման խօսքէն ետք, հանդիսաւար տիկին Ալիս Զաքըրեան բեմ հրաւիրեց Իրանահայ Միութեան Երգչախումբը, ղեկավարութեամբ Միքայէլ Աւետիսեանի, որ հրամցուց քանի մը հայրենասիրական երգեր: Կոմիտաս Երգչախումբը, ղեկավարութեամբ Կոմիտաս Քէշիշեանի, հանդէս եկաւ քանի մը ազգային երգերով: Ռիթա Զաքըրեան եւ Կէրի Մարգարեան շարունակեցին Վահան Թէքէեանի բանաստեղծութիւնը եւ ապա հրաւիրեցին Արարատ Երգչախումբը՝ ղեկավարութեամբ Ալենուշ Եղնազարի, հրամցնելով քանի մը հայրենասիրական երգեր: Բոլոր երգչա-խումբերն ալ արժանացան ներկաներուն գնահատութեան եւ ծափահարութիւններուն:*

*Առաջնորդ Սրբազան Հայրը իր պատգամը փոխանցեց ներկաներուն, ան յատուկ շնորհակալութիւն յայտնեց պետական պաշտօնեաներուն, որոնք իրենց ներկայութեամբ պատուեցին Արեւմտեան Թեմը: Սրբազան Հայրը նոյնպէս իր գնահատութիւնը յայտնեց Մայր Տաճարի Շինութեան Յանձնախումբի բոլոր անդամներուն:*




# ԱՄՆ-Ի ԴԵՍՊԱՆ ՄԸՐԻ ԵՈՎԱՆՈՎԻՉԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԳԱՂՈՒԹԻ ՀԵՏ



*Հայաստանի մէջ Միացեալ Նահանգներու Դեսպան՝ Մարի Լ. Եովանովիչ Հինգշաբթի, Յունիս 25ի երեկոյեան ելոյթ ունեցաւ Արեւմտեան Թեմի Գալաճեան սրահին մէջ:*

*Բարի գալստեան եւ բացման խօսքը կատարեց Թեմական Խորհուրդի Ատենապետ՝ Իրաւաբան Տիար Ժոզէֆ Կանիմեան, որ իր խօսքին մէջ անգամ մը եւս շեշտեց Դեսպանին նուիրեալ ծառայութիւնները Հայաստանի մեր ժողովուրդին եւ ապագայ ծրագիրներուն: Սիրով ողջունեց Էսէմպլիմէն Փօլ Գրիգորեանի ներկայութիւնը: Ապա Առաջնորդարանի պետական յարաբերութեանց յանձնախումբի Ատենապետուհի՝ Տիկին Լիլի Ռինկ Պալեան հանգամանօրէն ներկայացուց Դեսպանը, իր ստացած բարձրագոյն կրթութիւնը, լեզուներու հմտութիւնը, զանազան պաշտօններով տարբեր երկիրներուն մէջ իր անձնուէր ծառայութիւնները: Իր ուրախութիւնը յայտնեց, թէ պատրաստուած եւ փորձառու այսպիսի անձնաւորութիւն մը այժմ Դեսպանն էր Հայաստանի Հանրապետութեան, որ մեծ պատիւ կը բերէր մեր ժողովուրդին: Հրաւիրեց Դեսպանը, որպէսզի իր խօսքը ուղղէր ներկաներուն:*

*Դեսպանը հայերէնով «Բարի երեկոյ» ըսելէ յետոյ, նախ իր շնորհակալութիւնները յայտնեց Առաջնորդ Սրբազան Հօր, որ սիրայօժար կերպով կազմակերպած էր այս հաւաքը, որմէ ետք ներկայացուց Միացեալ Նահանգներուն ցուցաբերած զանազան տեսակի օգնութիւնները Հայաստանին, մարդասիրական, տնտեսական, կրթական, առողջապահական, քաղաքական, մասնագիտական, օրինական, ապահովութեան մարզերէն ներս: Խօսեցաւ նաեւ Հայաստանի եւ Թուրքիոյ առանց նախապայմանի յարաբերութեան եւ սահմաններու բացման մասին, ինչպէս նաեւ անդրադարձաւ Արցախի հարցի խաղաղ լուծման:*

*Իր խօսքի աւարտին տեղի ունեցաւ հարց-պատասխանի բաժին մը: Սրբազան Հայրը կատարեց փակման խօսքը եւ իր շնորհակալութիւնը յայտնեց Դեսպանին, որ շրջագայութեան եկած էր Միացեալ Նահանգներուն մէջ եւ կը լսէր մեր ժողովուրդի զաւակներուն մտահոգութիւնները եւ ջանք կը թափէր աւելի օգտակար դառնալու Մայր Հայրենիքին եւ մեր հայրենակիցներուն: Սրբազան Հօր «Պահպանիչ» օրհնութեան աղօթքէն ետք, աւարտեցաւ ներկաներուն, որ առանձին զրուցեն Դեսպանին հետ:*

# ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԷՆ ՆԵՐՍ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԴԵՍՊԱՆ ՄԸՐԻ ԵՈՎԱՆՈՎԻՉԻ ՀԵՏ



*Մօտ 250 հոգի ներկայ գտնուեցան Առաջնորդարանի Հայկ եւ Ալիս Գաւուքճեան հանդիսասրահը, ուր՝ Երկուշաբթի Յունիս 22-ին, կազմակերպութեամբ Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնորդարանի եւ Հայ Օգնութեան Ֆոնտի, հրապարակային հանդիպում մը տեղի ունեցաւ Հայաստանի Հանրապետութեան Միացեալ Նահանգաց դեսպան Մըրի Եովանովիչի հետ, որ կ'այցելէր հայաշատ կեդրոններ, ինչպէս Պոսթոն, Լոս Անճելըս, Ուաշինթկըն Տի.Սի., եւ հանդիպում կ'ունենար տեղւոյն հայ համայնքին հետ:*

*Դեսպան Եովանովիչ սրտբաց եւ անկեղծ կերպով արտայայտուեցաւ Հայաստանի քաղաքական եւ տնտեսական կացութեան, Միացեալ Նահանգաց ծրագրած յայտագիրներուն եւ բարեկամական կապերուն մասին: Ան ի մէջ այլոց ըսաւ. »Հայ-Ամերիկեան համայնքը հինքը կը ներկայացնէ Հայաստանի հետ կապերու զօրացման՝ իր կատարած օժանդակութիւններով: . . . Հայաստանի անկախութենէն ի վեր Միացեալ Նահանգները մեծապէս օգտակար հանդիսացած են Հայաստանի տնտեսական աճումին եւ ժողովրդավարական յառաջընթացին: Ես ուրախ եմ մեր կատարած օժանդակութեան՝ սակայն միշտ աւելին կայ որ պէտք է ընենք: Հայաստանը ամենամեծ օժանդակութիւն ստացող երկիրն է (համաձայն բնակչութիւն թիւին). ցարդ*

Տար.ը էջ 16

# Massis Weekly

Volume 29, No. 24 Saturday, JULY 04, 2009

## 18 Political Prisoners Remain in Prison Nikol Pashian Surrenders to Police

YEREVAN -- The opposition Armenian National Congress (HAK) said on Thursday that 28 of its members and supporters arrested in the wake of last year's disputed presidential election have been set free since the declaration of a general amnesty late last week.

HAK representatives said they expect several more "political prisoners" to be granted amnesty in the coming weeks. They insisted that the pardons initiated by President Serzh Sarkisian were the result of pressure exerted on his government by the Armenian opposition and the international community.

"We have managed to get 28 more hostages out of the regime's prisons," Levon Zurabian, the HAK's central office coordinator, told a news conference. "On this occasion, I congratulate the Armenian society, you journalists, because I believe you too made your contribution to this development, human rights organizations, and all those who have actively fought for their release."

"But we must all remember that 18 political prisoners will remain in prison," said Zurabian. One of them, Sasun Mikaelian, is a member of parliament. Mikaelian was sentenced on Monday to eight years in prison for organizing the March 2008 violence in


Nikol Pashinian

Yerevan and illegally possessing weapons and ammunition.

Two other opposition parliamentarians, who were convicted of only riot organization and therefore received shorter sentences, walked free in court. Under Sarkisian's amnesty bill approved by the National Assembly on June 19, only those oppositionists who were jailed for up to five years are to be set free.

The amnesty led the HAK to bring forward its next rally in Yerevan to July 2. Zurabian said the rally will celebrate the oppositionists' release from prison. But he did not specify whether the opposition alliance plans to launch a new campaign of sustained anti-government protests this summer.

Nikol Pashinian, 34, one of the most influential and passionate speak-

Continued on page 3

## Serzh Sarkisian Praises Georgian Counterpart Russian MPs Slam Yerevan For Honoring Saakashvili

YEREVAN (RFE/RL) -- Armenian President Serzh Sarkisian has bestowed the Medal of Honor, Armenia's highest award for foreign dignitaries, upon Georgian President Mikheil Saakashvili, RFE/RL's Armenian Service reports.


Serzh Sarkisian and Mikheil Saakashvili reviewing honor guards

Saakashvili was honored for his contribution to "strengthening the centuries-old friendship between Georgia and Armenia" during a ceremony in Yerevan.

Sarkisian also praised Saakashvili's efforts to improve socioeconomic conditions in Georgia's restive Javakheti region, which is mainly populated by ethnic Armenians.

The praise stands in sharp contrast to criticism of Tbilisi regularly voiced by politicians in Yerevan and in Javakheti.

Two senior members of the Russian parliament strongly criticized Armenia on Friday for bestowing its highest state award for Saakashvili.

Valeri Bogomolov, a member of the State Duma committee on foreign relations affiliated with the ruling United Russia Party, called it a "very controversial event."

"Every country is free to award anything to anyone," the Regnum news agency quoted Bogomolov as saying. "However, it is important to understand that you can't spit into a water well from which you will need to drink on more than occasion."

"The demonstrative granting of a high Armenian state award to the Georgian president was an untactful and unfriendly step towards Russia," agreed Viktor Ilyukhin, another senior Duma member representing the opposition Communist Party.

Continued on page 2

## Council of Europe Hails Armenian Amnesty Calls for Release of All Political Prisoners

STRASBOURG -- The Council of Europe Parliamentary Assembly (PACE) has welcomed a general amnesty declared by the Armenian authorities as a further significant step towards defusing lingering political tensions in the country.

In a fresh resolution on Armenia adopted late last Wednesday, the Strasbourg-based assembly also stopped short of endorsing Council of Europe observers' positive assessment of the recent municipal elections in Yerevan.

"Through the adoption of a general amnesty for the persons deprived of their liberty in relation to the events of 1 and 2 March 2008, the Armenian authorities have complied with a crucial demand of the Assembly with regard to the political crisis that ensued after the Presidential election of February 2008," read the resolution.

It described the resulting release of about 30 opposition members as a "clear indication of the willingness of the authorities to overcome the political crisis and its consequences, and to turn to a new page in Armenia's democratic development."

As recently as in January, the PACE threatened to impose sanctions against Yerevan over the continuing imprisonment of oppositionists arrested on "seemingly artificial or politically motivated charges." The administration of President Serzh Sarkisian staved off the embarrassing sanctions by

Continued on page 3

## Flower Power: Turks Plan to Decorate Stadium with 70,000 Carnations for Armenia Soccer Game

**By Suren Musayelyan**
**ArmeniaNow**

Turkey is preparing a large-scale floral greeting to Armenia's national soccer team and few fans that will be traveling across the border for a return World Cup 2010 qualifier this fall, according to a Turkish newspaper report.

Turkey's Today's Zaman reports that 70,000 carnations will decorate the Turkey v Armenia soccer match that will take place in Kayseri's Kadir Has stadium on October 14, "with two carnations put on each seat in the stadium, which has a capacity of 33,000."

The newspaper quotes Mustafa Erengul, director-general of Flower Production and Marketing Corporation that will be decorating the stadium, as saying that "flowers are the language of love".

Recep Gedik, Chairman of Turkey's Interflora Florists Association, says "the event will help improve relations between Turkey and Armenia".

The first-leg World Cup 2010 qualifier between Armenia and Turkey in Yerevan on September 6, 2008 marked the beginning of a thaw in relations between the two estranged nations.

In early 2009, Armenia and Turkey received a Fair Play award from international football's governing body, FIFA, for their contributions to world peace through the match in Yerevan.

## Boxing

## "King" Arthur Abraham Knocks Down Turkish-German Mahir Oral

Armenia's "King Arthur" retained his boxing crown in Berlin, Germany Saturday night with a 10th round knock out of Turkish-German Mahir Oral.

Yerevan-born Arthur Abraham withstood early-round damage by Oral, before taking charge of the scheduled 12-rounder in the fourth round, when the 29-year old Armenian landed the first of five knockdowns.

The round-four canvass kisser was followed by another knockdown in round six and three in round 10, after which the "Lion" (as Oral is known) was retired.

Abraham's successful defense of his middleweight belt came with his 30th win against no setbacks. 24 jewels in the pugilist's crown were earned by knockout.

As International Boxing Federation champion, Abraham is widely regarded as No. 1 or No. 2 in the world



at his weight class (160 pounds/72.6 kilograms), his dominance of the division challenged only by Kelly "the Ghost" Pavlik (35-1, 30 KOs) of Ohio.

Boxing fans are hopeful of a "King"-"Ghost" face off late this year.

# "A Comparative Analysis: Lessons for Armenia from the Unrest in Iran"

**By Richard Giragosian**



**Iran presidential elections 2009**

**Introduction**

For nearly two weeks, Armenia's southern neighbor Iran has been gripped by a powerful, and at times, even violent post-election crisis. While the past several days have seen the largest anti-government demonstrations since the 1979 Iranian revolution, with hundreds of thousands of Iranian citizens protesting a disputed presidential election, the scale and scope of these protests have also revealed an even deeper and more serious degree of economic discontent.

The post-election unrest poses the most serious challenge to the Iranian authorities since they came to power in the wake of the Iranian revolution twenty years ago. In addition, the current wave of unrest is largely directed against the ruling elite, although it is not, at least yet, targeting the system itself.

Of course, the current unrest in Iran was triggered by political developments- namely, by the 12 June presidential election, in which incumbent President Mahmoud Ahmadinejad was declared the official winner over his leading rival, former Iranian Prime Minister Hussein Mousavi. But the deeper cause of the unrest is much more than a political dispute, but stems from the broader context of the "economics of change" within Iran.



**Armenia presidential elections 2008**

**The "economics of change"**

Within this context, there is also a class-based confrontation, with much of the younger and more recently empowered Iranian middle class aspiring for real change, while the older, much more conservative ruling "clerical elite" merely seeks to sustain the status quo. This division, between those hungry for change and those simply struggling to hold on to power, also reflects an inherent economic competition.

For the Iranian middle class, the imperative is to forge a new economic future for Iran, moving beyond international isolation and state-imposed sanctions. Their demands are based on more than just hopes for a better economic future, however, but also reflect more practical socio-economic demands over corruption, social restrictions, rising inflation, declining wages and an overall lack of jobs. Such socio-economic demands, naturally shared by university students throughout Iran, have only swelled the ranks of the middle class demonstrators. And it is a formidable force, empowered by years of unmet promises and frustrated expectations, and also more politically assertive, better educated and more socially sophisticated than its rivals.

Notably, the demographics of the protests reveal an interesting generational aspect—whereby the majority of opposition demonstrators have no real memory of Iran before the 1979 revolution. This youth factor not only infers a much bolder, more courageous and even idealistic element to the anti-establishment protestors, but also implies a more difficult challenge to resolve the demands and expectations of a new generation of Iranians who have matured only within the confines of years of isolation and economic disengagement that has come to define the Islamic Republic of Iran's world view.

On the opposing side, in open support of President Ahmadinejad, the ruling "clerical elite" is backed by a combination of more pious or religious-minded Iranians and the rural population. For these people, representing the most conservative elements of Iranian society, their future is rooted more in the past than the present, and is certainly not seeking any degree of change. The ruling elite, and the small wealthy upper class that supports it, is a product of a system that has become defined by the accumulation of wealth and power in the years after the revolution. Thus, for this group, by its very nature, any change or deviation from the status quo is seen as a threat to the system, to the state and, most importantly, as a threat to their own personal power and wealth.

And it is this underlying economic division, which has only driven and exacerbated the political unrest and mounting instability that offers several important "lessons," and even warnings, for Armenia.

**Lessons for Armenia**

First, Iranians are now waging a struggle for the very future of Iran, set off by a disputed presidential election. In this way, Iran is now facing its own March 1st postelection crisis, similar to the events in Armenia last year. Both crises led to the tragic deaths of civilian demonstrators. Both episodes featured the use, and misuse, of force, with police and security forces applying an excessive and repressive response to the demonstrations. In Armenia's case, the March 2008 crisis remains unresolved, as the authorities have been unable or unwilling to fully and fairly investigate the events of March 2008. Further, the Armenian case is also plagued by a failure to adequately resolve the underlying tension and demands emanating from that crisis.

The second lesson for Armenia from the current crisis in Iran is the fact that the election revealed that very serious domestic contradictions quickly developed into a highly volatile and explosive internal situation that no ideology, no mater how powerful, could contain. For the Armenian authorities, this lesson also includes a warning: that there can be no political panacea or substitute for not addressing concrete socio-economic problems. And with Iran, it is also clear that the recent crisis has shown that no country in this modern world can remain truly isolated.

But it is the third lesson from Iran, the "economics of change" as a driving force behind this tension that is even more worrisome for Armenia. In both cases, young Iranians and Armenians share the same hopes, for a brighter future, for economic opportunities, and for a voice in how their country is governed.

For both countries, there is no return to the pre-crisis status quo. The political and economic demands for change remain unmet. But to continue to ignore these basic demands and natural expectations, sparks a real risk of only prolonging the crisis, and most dangerously, of merely fueling the fire of discontent.

**Richard Giragosian is the Director of Armenian Center for National and International Studies (ACNIS)**

**www.massisweekly.com**
**Updated every Friday**

# Family Seeks Release of Aid Worker in Iran Jail

Reuters) - The family of an ethnic Armenian employee of a U.S.-based aid group who has been jailed in Iran for over a year said on Tuesday they hoped a post-election crackdown would have no bearing on their appeal for her release on humanitarian grounds.



**Silva Harotonian**

Silva Harotonian, 34, an Iranian citizen of Armenian descent, was working for a U.S. group that arranges educational exchanges when she was arrested on June 26 last year. Harotonian was based in Armenia for the International Research and Exchanges Board and was in Iran working on a U.S.-Iran exchange program for maternal and child health professionals.

"She's a humanitarian aid worker, she's not a politician, she's never been interested in politics," Klara Moradkhan, a cousin of Harotonian who lives in Los Angeles, told Reuters in an interview in New York.

In January, Harotonian was given a three-year jail term on charges of involvement in a U.S. funded plot to overthrow the Islamic system of government in Iran. She briefly shared a jail cell at Tehran's Evin prison with Roxana Saberi, a U.S.-born journalist who was released in May after authorities quashed her eight-year sentence for spying. Saberi and Moradkhan were both taking part in a news conference by human rights groups in New York on Tuesday to call from the immediate release of political prisoners in Iran, both those arrested before and after the election.

"For us Silva's situation happened a year ago, before any of this crackdown," Moradkhan said in the interview. "Silva's imprisonment from the beginning was a misunderstanding. We never thought her situation now has anything to do with what's going on (with the protests)." She appealed to Iranian authorities to show compassion and mercy and release Harotonian on humanitarian grounds.

# Karabakh Guns Still at the Ready

**By Tom Esslemont**
**BBC News**

When oil-rich Azerbaijan recently announced a huge increase in military spending, there was speculation that it might be preparing for war with Armenia, its neighbor in the Caucasus.

It is just 15 years since they were last at war, over the territory of Nagorno-Karabakh.

The conflict between the two former Soviet states made headlines around the world, and left at least 25,000 people dead.

But how realistic are the fears of renewed conflict?

**On the frontline**

In a warren of thick concrete trenches I meet up with five young soldiers on patrol in the blistering heat.

These are the youngest members of the Armenia-backed Nagorno-Karabakh army and, at under 160cm tall (5'3"), are all short enough to stand up in the tiny, cramped observation bunkers.

I have to stoop to get inside so that I can peer through a gap in the thick blast wall.

Beyond the barbed wire I can see the grassy fields of Azerbaijan in the distance and some signs of movement on the other side.

"Sometimes we see the Azeris," says junior sergeant Lernik Gasparyan. "Sometimes they shoot, but it is quiet at the moment."

The two sides blame each other for the infrequent infringements of a ceasefire which has been in place ever since the war ended in 1994.

There are occasional reports of soldiers being killed in gunfire and mine explosions.

Although the military phase of the war may have ended 15 years ago, the conflict continues.

The presidents of Armenia and Azerbaijan hold frequent mediated talks. They said they made significant progress at talks in the Czech Republic last month, on the sidelines of the EU's Eastern Partnership summit.

But as yet there is no lasting deal - and there is a lot at stake.

During nearly six years of conflict, between 1988 and 1994, Azerbaijan was forced to concede much of its territory - Azerbaijan says Armenian armed forces now occupy 20% of its land.

**Arms purchases**

Khazar Ibrahim, a former spokesman for the Azeri foreign ministry, told me that "unless Armenian troops withdraw from Azerbaijani land there will be no co-operation, and only after that will Azerbaijan extend its open unclenched hand."

So, does this mean Azerbaijan is ready to go to war?




**Karabagh Defense army tanks**

"We hope not, but every nation has the right to self-defence and no nation in the world will tolerate the occupation of a huge chunk of its territory," says Mr Ibrahim.

Azerbaijan has dramatically increased military spending in the past five years. In 2009 it raised its budget to nearly $2.5bn (£1.5bn, 1.7bn euros).

Does that worry the Armenians and the de facto Karabakh authorities?

"We are always ready for war," says the Karabakh defence minister, Movses Hakobyan. "If a conflict, like ours, is not resolved then I think we have to be ready for the resumption of military activity."

He might sound ready, but the people of Karabakh certainly are not. And, in the end, neither side would want a resumption of hostilities.

During the conflict, thousands of Azeris and Armenians were displaced. In the capital, Stepanakert, many ethnic Armenians have come back.

"I really don't see why we should return any of our land to Azerbaijan," says Karabakh resident Lucine Musayelyan, whose father died in the war.

As we walk through a rain-drenched cemetery towards her father's grave, we pass many headstones carved with images of soldiers killed during the raging battles.

"No matter how hard I try to avoid them there are always traces of the war in my mind and they affect how I go about my life," she says.

Until now no outside state has recognized Nagorno-Karabakh's self-proclaimed independence. Such recognition would be a vital step for Lucine.

**Western caution**

"Most important for me is that more people recognize our land as independent," she says.

Many countries - especially in the West - are wary that doing so might compromise the reconciliation process.

Azerbaijan's President Ilham Aliyev recently said: "Nagorno-Karabakh will not be an independent state today, or in ten, or even 100 years."

The biggest sticking point for Azerbaijan has been the return of some of its territory.

Looking around it is hard to imagine now, but the region was once a prominent cultural centre of the Caucasus, a place where Muslims and Christians lived side-by-side in harmony.

In the end though, the proximity of Azeris to Armenians heightened the intensity of war.

Just take the town of Aghdam, for example, where Armenia launched an offensive in June 1993. It had once been a predominantly Azeri settlement - now it is an empty, overgrown town, colonized by brambles and creepers.

All the houses have been destroyed, some by shells fired in the war, others looted for their bricks. The only building left standing is a mosque. I can see its colorful minarets protruding above the rubble.

The town of Shusha was also flattened. Much of it - including a church - has now been restored and Armenians have returned.

But it may be years or even decades before Azeris have access to these towns again. Azerbaijan has asked Armenia to return five regions adjacent to Karabakh and to specify a timetable for the complete return of two others it says are still partially occupied.

And until it gets what it wants, Azerbaijan has tended to talk up the possibilities of another war.

Senior Armenian political figures have played down the threats. They believe Azerbaijan would not achieve anything if it tried to attack.

"The consistent rhetoric on the part of the Azerbaijani government officials threatening war to regain control of Nagorno-Karabakh hinders regional security," says Richard Giragosian, director of the Yerevan-based Armenian Centre for National and International Studies.

And, perhaps, it is a view shared by troops on the Karabakh frontline.

In the trenches, after the soldiers have completed another routine drill, I ask junior sergeant Lernik Gasparyan why he thinks he is there.

"We are here to defend the Motherland," he says.

His commanders watch him intently and scrutinise his every word.

In the thick, heavy heat there is an air of tension in the trenches.

But, for now, there appears to be no imminent prospect of war.

# 18 Political Prisoners Remain in Prison

**Continued from page 1**

ers at the anti-government protests staged by opposition leader Levon Ter-Petrosian has surrendered to police. He and several other opposition figures went underground following the violent suppression of those protests on March 1-2, 2008. The authorities have tried unsuccessfully to track down and arrest them.

In a statement posted on his website last week, Pashinian said he has decided to come out of hiding and become a political prisoner after the general amnesty declared by the Armenian authorities on June 19.

“They will arrest me shortly and I will then be remanded in [pre-trial] custody,” Pashinian told journalists at the entrance to Armenia’s Office of the Prosecutor-General. “They will then sentence me to as many years in prison as possible.”

“I will continue my struggle in prison,” he said before being escorted to the police department of Yerevan’s Kentron district. He was transferred to a maximum security prison, also located in the city center, later in the day.

“Nikol Pashinian has proved that there is no competent national security service and police in Armenia,” said David Matevosian, one of the opposition figures released from prison last week. “Common sense and the latest Council of Europe resolution suggest that the authorities are obliged to free Nikol.”

# PACE Calls for Release of All Ppolitical Prisoners

**Continued from page 1**

pledging to enact Criminal Code amendments that affected some of the most prominent detainees. Armenian prosecutors subsequently dropped controversial coup charges leveled against them.

The PACE welcomed those amendments, while noting that they had no impact on the cases of a larger number of persons jailed solely on the basis of police testimony. But it made clear that only the release of all jailed oppositionists would “provide the necessary basis for the start of the dialogue and reconsolidation that is needed to overcome the political crisis.”

The PACE also regretted the dissolution of the bipartisan Fact-Finding Group of Experts tasked with conducting an independent and credible inquiry into the March 2008 clashes in Yerevan, another key demand of previous PACE resolutions on Armenia. It said the group’s pro-government and pro-opposition members are both responsible for “politicizing” the probe.

“The Assembly is seriously concerned about the fact that the investigation by the Prosecutor General into the 10 deaths that occurred [on March 1-2, 2008] has not yet led to any concrete results and considers it essential that this investigation is satisfactorily concluded without any further delay,” added the resolution.

## ARPA Institute Presents:
## Global Financial Crisis: Risks, Opportunities and Conflict Resolution By Mark Chenian

The lecture will describe the major events of the first 8 years of the 21st century and the genesis of the global financial crisis. Will evaluate the current major global risks, trends and collusions. For solutions, will demonstrate the inadequacy of the available traditional resources; the dead ideas with complacent "conventional wisdoms". Will evaluate the proposed action plans both domestic (US), global and multinational. Will discuss the impact of the global financial crisis on the Near East, including Armenia. Finally, how is Armenia navigating in this global "waters" and what actions Armenia should consider in her foreign affairs in general and the economy in particular?

Mark Chenian: Born in Heliopolis Egypt where he received his primary Armenian education followed with his secondary education in Cyprus; continued his higher education at AUB. In 1968, he moved to the US. In 1971 he wrote "The Eventual Demise of the Soviet Union", (an economics paper that was not well received by his peers of the time).

During the last 40 years, he has extensively traveled and participated in conferences, symposiums, forums, round table discussions; maintained close contact with UN, World Bank, IMF, think tanks, scholars, retired politicians, diplomats and generals.

Worked towards conflict prevention with analysis and understanding of potential conflicts and hot spots; followed with resolution attempts when conflicts broke out. In his advisory capacity, over the years he has consulted with several governments and high profile organizations on strategic and related matters.

Genocide studies and prevention has been a focus, and has closely followed developments in the International Criminal Court and International Court of Justice.

He has served on Boards of Armenian schools; as VP of AGBU of America; as VP of the Armenian Educational Foundation; on the board of Zoryan Institute; first Chairman of Armenian Business Forum; is a co-Founder of Metzamor Foundation.

As principal, he is involved with AACC-ArmTech Congress 2009, Silicon Valley, in November 2009.

His fields of studies were physics, finance, economics and international affairs at various institutions. He has also served on the Board of Directors of the ARPA Institute for several years.

For further information please call (818)881-0010 or contact info@arpainstitute.org

## Director of Online Armenian Lexicon and Library to Speak at NAASR

BELMONT, MA -- Dr. Michele Sigler, founder and director of the Armenian Lexicon and Library Online and a visiting research fellow at the Centre for Computing in the Humanities at King's College, London, will give a presentation entitled "Digital Western Armenian: The Armenian Lexicon Project" on Thursday, July 23, 2009, at 8:00 p.m., at the National Association for Armenian Studies and Research (NAASR) Center, 395 Concord Ave., Belmont, MA.

The Armenian Lexicon Project is the work of a group of scholars from the U.S., Lebanon, and Armenia. It is based at the Center for Computing in the Humanities at King's College, University of London, and also involves other experts in Armenian linguistics.

The project's immediate goal is to create two online resources for Western Armenian: a Western Armenian-English lexicon and a digital library of Western Armenian texts. Unlike dictionaries in print, the project's lexicon will be comprehensive, detailed, accessible, and free. The library will likewise be free to users, and will contain digitized versions of works of Western Armenian literature. The website is designed to be used by language learners, teachers, translators, and academic researchers.

Dr. Sigler has a BA in philosophy from Princeton, and a Ph.D. in linguistics from the Massachusetts Institute of Technology, where she encountered a Western Armenian-speaking graduate student completely by chance. The language has remained the focus of her research since that fortuitous encounter.

In addition to her research interests—syntax, morphology, and lexical semantics—Sigler is committed to helping to document and revitalize Western Armenian. She is inspired by the work of her advisor at MIT, Kenneth Hale, who devoted his life to endangered languages. A native of Chicago, Michele has lived in London for twelve years with her husband and two sons.

Admission to the lecture at NAASR is free (donations appreciated). The NAASR Center is located opposite the First Armenian Church and next to the U.S. Post Office. Ample parking is available around the building and in adjacent areas. The lecture will begin promptly at 8:00 p.m.

More information about the lecture is available by calling 617-489-1610, faxing 617-484-1759, e-mailing hq@naasr.org, or writing to NAASR, 395 Concord Ave., Belmont, MA 02478.

ArmenienInfo.net
News. Informationen. Kommentare.

## Paul Boghosian's One Man Play "According to Tip"




Paul Boghosian and Dick Flavin

BOSTON - New England theater professionals gathered at the Boston Center for the Arts Cyclorama for the annual IRNE (Independent Reviewers of New England) Awards. Paul Boghosian of Belmont, Ma, Producer of According to Tip, a one man play on the life and times of the legendary Speaker of the House, Tip O'Neill, was the winner, along with playwright Dick Flavin, of the award for Best New Play of 2008.

According to Tip was presented in June and July 2008 at the NewRep Theater in Watertown, Ma. During its one month run the play performed to 93% of capacity and generated highly positive reviews. The star of the play, Ken Howard, who played Tip O'Neill also received the IRNE Award for Best Solo Performance in a Play for 2008.

At the IRNE Awards, Flavin said that "Paul Boghosian made it happen for all of us, and the creative and producing team of Rick Lombardo, Artistic Director of NewRep and Director of According to Tip, Howard, Boghosian and myself worked in remarkable harmony to produce a first class production of one of the most notable political figures of the last century."

During the autumn of 2008 According to Tip also played successfully at the Stuart Street Playhouse in Boston.

The next production is planned, according to Boghosian, for a limited engagement at the Kennedy Center in Washington DC – and if that goes well – the play will move to New York City for a run for the Tony Award in 2010.

## Camp Kessab July 25 to August 1
### Outdoor and Armenian Activities Planned for 7 to 15 Year Olds



LOS ANGELES -- Camp Kessab will offer a week of arts and crafts, swimming, outdoor activities such as hiking, horseback riding and campfires, and Armenian cooking, music and dance this summer from July 25 to August 1.

At a very reasonable cost of $250 for the week, Camp Kessab will hold a one-week session at the scenic Camp Tecuya in Frazier Park. The camp is located about one hour from Los Angeles, just east of the 5 freeway in the Sierra Madre Mountains.

The camp is for children and young teens ages 7 through 15. Applications are being accepted for campers, counselors (who must be over 18 years of age) and staff members.

Camp Kessab has always provided comfortable accommodations and a safe environment for campers and will include delicious meals prepared by a loving kitchen staff. The director is Sophia Yazaryan, a former camper and counselor during Camp Kessab's heyday in the 1970s and 80s. She will be assisted by Danielle Tognozzi, a former camper herself who is studying early childhood education, and they will be supported with knowledgeable and friendly counselors with years of past experience.

One of the favorite activities in the past year has been the recreation of an Armenian wedding. "We teach campers Armenian dances, how to prepare the food, how to dress, and then create a small Armenian wedding ceremony. It's a great way for kids to learn about the Armenian culture," says Yazaryan. "By teaching the children about our past then we can help them create a stronger future."

Camp Kessab is run by the Kessab Youth Organization, which is part of the Kessab Educational Associations.

Registration for the one week session is $250, which includes the camp fee and meals. Applications may be obtained by going online at www.kessab.com, by calling 818-704-9334 or e-mail to kyo@kessabyouth.com.

# ԵՐՋԱՆԿԱՅԻՇԱՏԱԿ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԽՃԱՆՄԱՆ ՏԱՍՆԱՄԵԱԿ (1932-1999)

*Քարոզ տասնամեայ տարելիցի Հոգեհանգստեան Ս. Պատարագին՝ Արեւմտեան Թեմի Պըրպէնքի առաջնորդանիստ եկեղեցւոյ մէջ Յունիսի 28-ին, 2009, նախագահութեամբ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի, Առաջնորդին Արեւմտեան Թեմին:*

***ԴՈԿՏ. ԶԱՒԷՆ Ա. ՔՀՆՅ. ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ***



*Այսօր երբ յիշատակին առջեւ կը գտնուինք Երջանկայիշատակ Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին որ կանխահաս մահուամբ կնքեց իր կեանքը տասը տարիներ առաջ 1999 Յունիսի ճիշդ այս օրերուն, իմ միտքը կը գրաւէ Ս. Գրական այն համարը որ յաւերժօրէն արձանագրուած է Ս. Էջմիածնի Մայր Տաճարի հովանիին ներքեւ հանգչող Հայրապետի տապանաքարին վրայ: Բնաբանը հետեւաբար իրն է, որ պարզօրէն կ'ըսէ «Մարդ է որ գործէ զերկիր», փոխակերպելով Ծննդոց Գիրքի Բ գլխուն այն համարը ուր կ'ըսուի թէ «հողը մշակող մարդ չկար» որուն համար ալ Աստուած մարդը ստեղծեց: Այդ իմաստալից խօսքը եղաւ Հայրապետի կեանքին բնաբանը ու արձանագրուեցաւ իր դամբարանին վրայ, յիշեցնելով ընդմիշտ բոլոր մարդկութեան, հայ եւ օտար, թէ մարդ արարածն է որ կը մշակէ հողը, կը վերանորոգէ կեանքը, կը հնարէ յառաջդիմութեան միջոցները, եւ բարձրագոյն գիտութիւններով կ'օժտէ զայն իմաստ եւ արժէք տալով Աստուծոյ ստեղծագործութեան:*

*Ուղիղ 60 տարիներ առաջ, Սեպտեմբերին, երբ առաջին քայլերս կ'ուղղուէին դէպի Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Դպրեվանքը, երեք ընկերներով, մեր դէմ ելան ու մեզ տպաւորեցին սեւազգեստ գեղադէմ սարկաւագներ որպէս մեր երէց եղբայրները: Մին Յովսէփ Սրկ. Յովսէփեան, այժմու մեր սիրելի Վաչէ Սրբազանը եւ միւսը իր հանգուցեալ դասընկերը՝ Արտակ Սրբազանը, ու իրենցմէ դասարան մը վար նորընծայ չորս սարկաւագներ, որոնցմէ մին էր Նշան Սրկ. Սարգիսեան, մեր հանգուցեալ երջանկայիշատակ Գարեգին Հայրապետը: Աչքառու էր Նշան սարկաւագ իր ուշիմութեամբը, ընթերցասիրութեամբը, եւ արագընթաց յառաջդիմութեամբը: 1952 Յունիսին քահանայական ձեռնադրութիւն պիտի ստանար իր օծակիցին հետ, եւ որովհետեւ նոյն ամսուն կը վախճանէր մեծանուն Հայրապետ Գարեգին Ա Յովսէփեանց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը, որպէս սուգի յարգանք ձեռնադրութիւնը յետաձգուեցաւ աշնան՝ Վարագայ Խաչի տօնին: Երբ ձեռնադրիչ սրբազանը վերաձայնեց Նշան սարկաւագի նոր անունը, քովի ընկերս դպրաց դասի մէջէն, լսելի ձայնով ըսաւ, «ահա Գարեգին Երկրորդը»: Ձայնը ճշմարտուեցաւ, նոյն Գարեգինը եղաւ կաթողիկոս՝ Նախ Երկրորդ եւ ապա՝ Առաջին:*

*Երջանկայիշատակ Հայրապետը, հետեւելով իր վերեւ յիշուած բնաբանին, մեր մտաւորական սերունդի առաջապահ հոգեւորականներէն մին եղաւ որպէս աստուածաբան, փիլիսոփայ, բանասէր եւ միջ-եկեղեցական գործիչ: Իր մտածումին լծակը համամարդկային եղաւ, հայկականը իր բարձրագոյն եւ հարազատ մակարդակով արտայայտելով եւ ներկայանալի դարձնելով արեւմտեան աշխարհին: Որպէս գիրքերու հեղինակ իր մտահոգութիւնը սկիզբէն եղաւ ո՛չ միայն պաշտպանել Հայ Առաքելական Եկեղեցին ինքն իր մէջ, բան մը որ մենք յաճախ կրկնելով կը գոհանանք, այլ զայն իր հնամեայ եւ ուղղափառ դաւանութեամբ ու մշակոյթով, անգլերէն լեզուով, պեղելով եւ պարզաբանելով մատուցանելու օտարին: Եղաւ ուշիմ եւ յարատեւ ընթերցող ուսանող մը, հիացման արժանի աշակերտը ըլլալով իր եւ մեր փիլիսոփայական գիտութիւններու մեծ ուսուցչին Շահան Պէրպէրեանի, որմէ ստացաւ իմաստասիրական խորք ու զայն աստուածաբանութեան ի սպաս դրաւ:*

*Ուսումնական իր եռանդը լրջօրէն ու լիաբուռն գործի վերածելու իմաստութիւնը ունեցաւ: 1952 Թուի Վարագայ Խաչի Կիրակիին իր ստացած քահանայական ձեռնադրութենէն շատ չանցած, Գարեգին վարդապետ Սարգիսեան մեկնեցաւ Անգլիոյ Օքսֆորտի համալսարանը ուր սերտեց աստուածաբանութիւն ու գրեց անգլերէն լեզուով «Հայ Եկեղեցւոյ եւ Քաղկեդոնի Ժողով»ի մասին ճշդուած աւարտաճառ մը, բանասիրական խորքով ստուար հատոր մը, յատկապէս Քրիստոսի երկու բնութիւններուն եւ Հայ Եկեղեցւոյ ուղղափառ Կիւրեղեան բանաձեւին վերաբերեալ: Իր այդ գործը որպէս միջ-եկեղեցական կարեւոր աղբիւր եւ երկասիրութիւն իսկոյն լոյս տեսաւ 1965-ին Լոնտոնի մէջ SPCK հրատարակչատան կողմէ: Իր այդ գիրքով օտար եկեղեցական բանասէրներ Օրմանեան Պատրիարքի ֆրանսերէն լեզուով անկէ կէս դար առաջ գրած «Հայոց Եկեղեցին» կարեւոր եւ անզուգական երկէն յետոյ, երկրորդ պատեհութեամբ կը ծանօթանային Հայ Եկեղեցւոյ Ուղղափառ քրիստոսաբանութեան:*

*Որպէս յաւելեալ ուսանելի աղբիւր, Գարեգին Հայրապետ նոյն օրերուն պատրաստեց ու հրատարակեց, դարձեալ անգլերէնով, փոքրիկ գրքոյկ մը՝ «Ներածութիւն Հայ Քրիստոնէական Գրականութեան» անունով, զուտ Հայ Եկեղեցւոյ հայրաբանութեան վերաբերեալ, որպէս աղբիւրագիտութիւն յաւելեալ ուսումնասիրութեանց համար: Հոն կ'երեւին հայ հնագոյն աստուածաբանական եւ եկեղեցագիտական մեր հայրերու գործերուն նախագիծերն ու համառօտ բովանդակութիւնը: Իր տեսակին մէջ այդ փոքրիկ գիրքը, որ իսկականին մէջ գիտաժողովի մը առիթով կարդացուած բծախնդիր ուսումնասիրութիւն մըն էր, ցայտուն ուղեցոյց մը եղաւ՝ միանգամայն նաեւ մեզի համար ուր Հայ Եկեղեցւոյ Ոսկեդարեան թարգմանչական գրականութենէն մինչեւ Գրիգոր Նարեկացի եւ Ներսէս Շնորհալի համառօտ եւ լուսատու ուղի մը կը գծէր որպէս ծիածան՝ հայ քրիստոնէութեան եւ մշակոյթի երկնակամարին վրայ:*

*Երջանկայիշատակ Տ.Տ. Գարեգին Ա Կաթողիկոսը հեղինակն է այլ հիմնական գիրքերու եւս զորս գրեց հայերէն լեզուով իր երիտասարդ տարիներուն, եւ ապա զանոնք վերատեսութեան ենթարկելով յետ մահու հրատարակեցին իրեն հիացող հովանաւորները: Հոն կը գտնենք Հայ Եկեղեցւոյ Շարականներուն մէջ բովանդակուած մեր աստուածաբանութիւնը, որ թէեւ նախապէս մեծանուն բանասէրի մը կողմէ քննարկուած էր ատենին, Գարեգին Վրդ. Սարգիսեան ի նորոյ պեղեց լման Շարակնոցը որպէս իր վարդապետական աւարտաճառը ու դասաւորեալ ձեւով պարզաբանեց, այս անգամ Հայց. Եկեղեցւոյ ուղիղ դաւանանքը դուրս բերելով մեր ամենօրեայ երգած շարականներուն ընդմէջէն:*

*Գրեց նաեւ հայերէն լեզուով «Հայ Եկեղեցւոյ Աստուածաբանութիւնը» տիտղոսանունով կարեւոր հատոր մը, ուր փիլիսոփայական խորքով, եւ մանաւանդ Ս. Գիրքի հիմնական տուեալներով պարզաբանուած են Հայր Աստուծոյ, Միածին Որդիին, Ս. Հոգիին, Ս. Երրորդութեան եւ Փրկա-գործութեան հիմնական գիտելիքները, ո՛չ որպէս աւանդութիւն, այլ որպէս տեսական աստուածաբանութիւն գիտական մակարդակով, քրիստոնէական հաւատքի հիմքը կազմող յայտնութենական իրողութիւնները վերբերելով, այս անգամ դրացի քրիստոնեայ ազգերու պատմութեան լոյսին տակ, միշտ ուղեցոյց ունենալով Ս. Գիրքը եւ անոր «մատենադարանային» հսկայ եւ այլազան բովանդակութիւնը, ինչպէս Մովսէսի Հնգամատեանն ու Մարգարէները, Առակաց Գիրքն ու Սաղմոսները, յանգելով Աւետարանական լիագոյն յայտնութեան՝ Յիսուսի որպէս Քրիստոս աշխարհ գալովը: Ամենայն Հայոց Հայրապետը բծախնդիր եւ ամենայն ուշադրութեամբ, հայերէն լեզուի գերազանց մաքրութեամբ, կարողացած է այդ բոլորը պսակել Պօղոս Առաքեալի աստուածաբանութեամբ, առանց որուն, այսինքն առանց Առաքեալի այդ ներդրումին, անտարակոյս կէս ճամբան կը մնար Քրիստոսի կրօնքը:*

*Գարեգին Հայրապետի միւս գրական վաստակն ալ Միջ-եկեղեցական գրականութեան յատուկ եղաւ: Որպէս հաւատացող մը Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին, որ պաշտօնապէս հիմնուեցաւ 1948 թուականին Ամստերտամի մէջ, եւ որուն Հայ Եկեղեցին Վազգէն Հայրապետի օրով պաշտօնապէս անդամակցեցաւ 1962 թուին, Գարեգին Հայրապետ եղաւ ու մնաց անոր ամենագործօն գլխաւոր վարչականներէն մին, եօթնամեայ շրջանի մը համար դառնալով նաեւ Կեդրոնական Խորհուրդի Ատենապետը: Հայ Եկեղեցին արեւմտեան քրիստոնեայ աշխարհին ուղղակի ներկայացնողը ի՛նք եղաւ, խօսքով եւ գործով, մշտական իր ներկայութեամբն ու յարատեւ մասնակցութեամբը Եկեղեցիներու Համաշխարհային Ժողովներու բոլոր նիստերուն եւ անոնց ենթայանձնախումբերուն: Իր այդ հանգամանքով անգլերէն ու ֆրանսերէն լեզուներով գրեց մեծ ու փոքր այլ գիրքեր Հայ Եկեղեցին աւելի հանգամանօրէն ծանօթացնելով Եւրոպայի եւ Ամերիկայի քրիստոնեայ աշխարհին:*

*Բարձր մտաւորականի իր հանգամանքը անպայման իր գործնական երեսը պիտի արժեւորէր ուսուցչութեամբ եւ տեսչական պաշտօնով: Գարեգին եպիսկոպոս Սարգիսեան, որ եպիսկոպոսական կարգ ստացած էր Խորէն Ա Կիլիկիոյ Կաթողիկոսէն 1964-ի Յունուարին,*

*Շար.ը էջ 17*

ՏԵՍԷ՛Ք՝
ԵԹԷ
BANKRUPTCY-Ի
ՕՐԷՆՔՆԵՐԸ
Կ'ՕԳՆԵՆ ՁԵԶԻ,
ՁԱՆԳԱՀԱՐԷՔ

JANSEZIAN LAW FIRM, PC

If you're facing overwhelming debts, bankruptcy laws may eliminate all your debts permanently!

225 South Lake Avenue, Third Floor, Pasadena, California 91101

Call Now for a FREE Consultation: 626-432-7209



Nazareth V. Jansezian, Esq.

## ԿՐՕՆԱԿԱՆ

# ՀՈՒՐ ԿԵՆԴԱՆԻ ՔՐԻՍՏՈՍ

**Տ. ԱՐՇԱԿ Ա. ՔՀՆՑ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ**

*«Արդարեւ կ'ըսեմ ձեզի, շատ այրի կիներ կային Սարեփթա Սիդոն քաղաքին մէջ Եղիա Մարգարէի շրջանին Իսրայէլի մէջ: Երբ երկինքը երեք ու կէս ամիս փակուեցաւ եւ մեծ սով մը տեղի ունեցաւ ամբողջ երկրին մէջ, Եղիան ոչ մէկուն չուղարկուեցաւ, բայց միայն Սարեփթա Սիդոնի մէջ գտնուող այրի կնկան: Եւ շատ բորոտներ կային Իսրայէլի մէջ Եղիսէ Մարգարէի ժամանակ. եւ ոչ ոք անոնցմէ մաքրուեցաւ, սրբուեցաւ, բայց միայն՝ Ասորի Նէէման: Երբ հրեաները ամէնքն ալ այս խօսքերը լսեցին, բարկացան. Եւ Յիսուսը բռնելով հանեցին մինչեւ ծայրը լերան, որուն վրայ իրենց քաղաքը շինուած էր, որպէսզի Յիսուսը գահավէժ ընեն: Եւ Յիսուս անոնց մէջէն անցնելով՝ գնաց»: Ղուկասի Դ:25-29*

*Սիրելի հաւատացեալներ, Սուրբ Զատիկէն յետոյ, Յունիս ամսուան ընթաց-քին՝ Հայաստանեայց Առաքելական եկեղեցին իր հարուստ տօնացոյցի ցուցմունքներուն համաձայն, կը յիշատակէ Սուրբ Գրային մեծագոյն մարգարէներէն երկուքին անունները, ինչպէս նաեւ ընդհանրական եկեղեցւոյ եւ մանաւանդ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ հաւատացեալ ժողովուրդին շատ սիրելի կրօնական եւ ազգային տօներ:*

*Սոյն տօներու շարքը կը բացուի Պէնտէկոստէով, այսինքն Ս. Հոգիի Գալստեան դէպքով Յիսուսի աշակերտներուն վրայ, Ս. Զատիկէն ուղիղ 50 օր ետք: Ս. Հոգիի Իջմամբ եկեղեցին կը հաստատուի: Հին Կտակարանի մէջ ընտրեալ ժողովուրդի ամէնէն մեծ տօնն էր այս տօնը, որ կը զուգադիպէր Եգիպտոսէն ազատագրուելու Թուականին, երբ Տասնաբանեայ Պատուիրանները տրուեցան Մովսէս Մարգարէին: Ասոնք Տասնաբանեան Եղից 20:3-17 Հ.Կ.-ի մէջ, իսկ Պէնտէկոստէին Գործք Առաքելոց 2:1-4 Ն.Կ. մէջ կը բացայայտուին: Եբրայեցի ժողովուրդի ելքը եգիպտոսէն եւ Կարմիր Ծովէն անցնիլը կը խորհրդանշէ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի խաչելութենէն, թաղումէն դէպի Իր կենդանարար Ս. Յարութիւնը:*

*Արդարեւ, իրարայաջորդ տօներու այս շարքը իմաստուն կերպով շաղկապուած եւ դրուած են մեր եկեղեցւոյ Սրբազան Հայրապետներուն կողմէ: Հայաստանեայց Եկեղեցւոյ ուղղափառ հաւատքի ուղիղ մեկնաբանութեամբ, մենք անոնց մէջ կը տեսնենք հայ ժողովուրդի կերպարանափոխուելու վկայութիւնը, առիթ մը, զոր Աստուած Իր բարի աչքով կը հետեւի մարդկային պատմութեան: Մեզի համար նուիրական եւ անհրաժեշտ է դաւանիլ ճշմարտութիւնը մեր եկեղեւոյ տօներու ցուցմունքներուն եւ անոնց եաեւ գտնուող ճշմարտութիւններուն ի հնձուկս տարբեր դրսեւորումներուն, որոնք օտար են մեզի համար: Պէտք է անպայմանօրէն անդրադառնալ օրինակի համար Պէնտէկոստէի օրուան դէպքին, որ նկարագրուած է Գործք Առաքելոց 2:1-13 մէջ: Հոս, Հայաստան անունը փոխարինուած է Հրէաստան անունով դժբախտաբար:*

*Հոգեգալուստէն մինչեւ Դ. Կիրակին Հոգեգալստեան եւ հայ եկեղեցւոյ տօնացոյցի իրարայաջորդ յիշատակութիւնները այնքան զգայուն յուշեր կ'արթնցնեն մեր հոգեւոր կեանքին մէջ, որ կարելի չէ անտեսել: Վերանորոգուելու կոչ մը կը պարուրէ մեր հոգին: Մեր մտքին պաստառին վրայ անգամ մը եւս կը կենդանանան փորձառութիւնները, սկսեալ մեր Տիրոջ Համբարձումէն մինչեւ հայ ժողովուրդի Առաջին Լուսաւորիչները, Թադէոս եւ Բարթողիմէոս Առաքեալները քարոզելու քրիստոնէութիւնը Հայաստան աշխարհի տարածքին: Արգար բորոտ Թագաւորի գրած նամակը մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի եւ Սանատրուկ Թագաւորի դուստրը Ս. Սանդուխտ կոյս՝ մեր քրիստոնէական պատմութեան լաւագոյն վկաները կը հանդիսանան:*

*Քաղաքական ամնէնէն աննպաստ պայմաններու տակ, մեր ազգին պարտադրուած տառապանքները եւ արիւնոտ ծփանքները չի կարողացան ընկճել կամքը վառ պահելու Հայոց Քրիստոնէական Պետական կրօնի հռչակումը 301 թուականին, հայ գիւրերու գիւտը 405-թուին, Ս. Գիրքի թարգմանութիւնը եւ այլոց հայացնելու քրիստոնէութիւնը, Վարդանանց Ճակատամարտը 451-ին, գոյատեւելու տենչը ու դրսեւորելու հայուն յատուկ դիմագիծը ու անոր անօրինակ ազգային նկարագիրը:*

*Հերոսներու, զօրավարներու, մարգարէներու կամ սուրբերու մասնակցութիւնը մարդկային պատմութեան մէջ իր ուրոյն ուղղութիւնը ունեցած է: Կրօնաբարոյական սկզբունքներու կերտման մէջ ազգային կամ կրօնական դէպքեր անժամանցելի հսկայական դերեր ունեցած են: Պահ մը բաժին վերցնելով Եղիա մեծ Մարգարէի կեանքը եւ նկատի առնելով Անոր գործունէութիւնը, մենք պիտի կարողանանք տեսնել անկարելին: Ան, Հին Կտակարանի մէջ յափշտակուեցաւ հրեղէն կառքով եւ ձիերով դէպի երկինք բարձրացաւ: Եբրայեցի երեք մանուկներ Բաբելոնեան Թագաւորութեան մէջ կրակէ բոցին կը յանձնուին, Պէնտէկոստէի օրը աշակերտներ կը ստանան կրակէ լեզուներ, իրենց գլխուն վրայ զանազան լեզուներ խօսելու:*

*Հայաստանեայց Առաքելական Ս. եկեղեցին անմասն չի մնաց սոյն երեւոյթներէն: Ասոնք խորիմաստ կերպով անցան եկեղեւոյ տօնակատարութեանց եւ յիշատակութեանց մէջ, յաւերժացնելու համար Հայ ժողովուրդի սրբազան երթը:*

*Հռիփսիմեանց Կոյսերու յիշատակութիւնը դիպուածային չէր, այլ գգալի ջիղերով ըմբռնելի իրականութիւն, ինչպէս՝ 1915 թուականի Մեծ Եղեռնը, ուր ազգ մը ամբողջ կրակէ շապիկ զգեցաւ: Տակաւ առ տակաւ հագած է մեր ժողովուրդը ներկայ դարու դասաւորման մէջ: Պէնտէկոստէական կրակի մէջէն անցնելու դէպքը հոգեւոր հասկացողու-թեամբ կը դրսեւորուին Ս.Ծննդեան եւ Ս. Զատկուան Ճարագալոյց արարողու-թեանց միջոցով:*

*Ս. Աւետարանի խօսքերը եկեղեցւոյ հայրերու ժառանգ թողած վկայութիւն-ները մեզի համար իրաւունքի մը չափ արժէք ունին եւ կարեւոր մեր սրբութեան եւ վերանորոգ սրտի աշխատանքներուն մէջ: Ամենապատիւ երջանկայիշատակ Տ. Թորգոմ Պատրիարք Գուշակեան, իր Սուրբ եւ Տօնք գրքին մէջ շատ գեղեցիկ կերպով վերայիշում մը կը կատարէ: »Ի հնումն այս տօնը՝ Պէնտէկոստէն մէկ օր միայն կը կատարուէր, գի յաջորդ օրը եօթնեակը Եղիական Պահոց յատկացուած էր: Սակայն ԺԲ. դարուն, Ս. Ներսէս Շնորհալի տնօրինեց, որ ամբողջ եօթնեակի ընթացքին տօնուի Հոգեգալուստը, պահելով հանդերձ նիւթական պահեցողութեան կանոնը«:*

*Հայ հաւատացեալին պարգեւուած է տեսնել ի վերուստ իջեալ շնորհքը եւ անոր հետ կապուած շնորհաց կեանքը: Կարելի է ոսկէ շղթային կապը տեսնելու իրարայաջորդ տօնակատարութեանց եւ յիշատակութեանց մէջ: Կարելի է մի առ մի թուել սոյն տօները.- Հոգւոյ Գալուստ կամ Հոգեգալուստ, այսինքն Պէնտէկոստէ տօն Քրիստոնէական եկեղեւոյ ծնունդին, ապա՝ տօն Եղիա Մարգարէի, յիշատակու-թիւն Հռիփսիմեանց Կոյսերու, Գայեանեանց Կոյսերերու, Սուրբ Գրիգոր Լուսաւորչի Ելն ի Վիրապէն, Կաթողիկէ Ս. Էջմիածնի, յիշատակութիւն Նունէի եւ Մանէ Կոյսերու Յովհաննու Կարապետին եւ Ագաթանգինեայ Եպիսկոպոսին, Մանկանցն Բեթղեհեմի, Ներսէս Պարթեւ Հայրապետին եւ հուսկ ապա՝ Կոստանդեանոսի Թագաւորի եւ իր մօր Հեղինէ Թագուհիի: Պէնտէկոստէի տօնը հաւատքի սպառազինման անանցանելի տօնն է: Ս. Հոգիի հրաշագործ այս գործունէութեան սկիզբին մասնակցեցաւ նաեւ Հայն ու Հայաստանը: Հոգեւոր բերքհաւաքը իր պտուղները Ս. Թադէոսի եւ Ս. Բարթէողիմոսով հասան Հայաստան, քարոզելու Հայոց բորոտ Աբգար Թագաւորին, ինչպէս նաեւ Հայոց Սանատրուկ Թագաւորին իր Սանդուխտ Կոյս դուստրին միջոցաւ:*

*Ս. Գրային վերանորոգ այս պատգամը հոգեւոր կրակով մաքրուելու աղօթքի ճամբով անժամանցելի հրաւէր մըն է հայ հաւատացեալին համար: Հոգեւոր կրակի սպառազինումը նոր իմաստ եւ շեշտ մը կը ստանայ: Սոյն տօներու յիշատակու-թեան մէջ կարելի է նշմարելի ներգործութիւնը Ս. Հոգիին, Մարգարէներուն եւ Սուրբերուն: Եղիսէ Աստուծոյ հզօրագոյն Մարգարէներէն մէկն էր, որ հակառակ իր ամբողջ հրաշագործ կարողութեանց.-»մարդ էր իբրեւ զմեզ չարչարելի«: Համաձայն Յակոբոս Առաքեալ Ե:17*

*Աստուծոյ ձայնը երկնարագ՝ խաղաղարար զեփիւռին մէջէն պիտի ձայնէր*

*Յեզաբէլի սպառնալիքէն փախչող Աստուածախօս Մարգարէին, որ »վախցաւ Եղիա, եւ ելաւ ու գնաց առանձինն«. ապաստանեցաւ գրեթէ յուսակտուր քարայրի մը մէջ՝ եւ սրտանց մեռնիլ ուզեց ու ըսաւ ալ հերիք է, ով Տէր, առ իմ հոգիս, քանզի ես իմ հայրերէս լաւ չեմ: Սոյն դէպքը կրկնութունն էր Սինա Լերան վրայ Թորեբ Աստուծոյ լեռը՝ ուր Մովսէս 500 տարիներ առաջ լսած էր Աստուծոյ Ձայն, ուր »մեծ եւ ուժգին հով մը, որ լեռները կը քակէր ու ժայռերը կը խորտակէր, յաջորդականու-թեամբ մը երկրաշար-ժի եւ կրակի«. Այս անգամ ձայնը ուղղուած էր Եղիային.»Ինչ գործ ունիս այստեղ, Եղիա«: »Զի ես դու աստ, եղիա«: Գ. Թագաւորութեանց Գլ. ԺԹ 110-11.*

*Մենք Աստուծոյ ծառաներս Եղիայի նման մեր տկարութեան մէջ, չարչար-*

*րանքի եւ յուսահատութեան մէջ պէտք է դառնանք Աստուածախօս Մարգարէին յոյս տուող հետեւեալ խօսքին,- եթէ անարգուած ես կամ լքուած. մի վախնար, Աստուած Իր ժամուն, Իր Սուրբը պիտի ուղարկէ քեզ պաշտպանելու համար:*

*Հայ հաւատացեալ, դուն որ դարերու հոլովին մէջ միշտ աղօթած ես եւ տոկացեր ես անսասան, յոյսդ դիր Տէր Յիսուս Քրիստոսով մեզի հասած Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ վրայ: Քու մայրական լեզուովդ արտասանէ "Հուր կենդանի Քրիստոս, Քու սիրոյդ կրակը՝ զոր աշխարհի վրայ ձգեցիր, թող բորբոքի իմ սրտիս մէջ, որպէսզի այրէ իմ հոգւոյս աղտերը եւ սրբէ խղճմտանքս եւ մաքրէ մարմնոյս մեղքերը եւ իմ սրտիս մէջ վառէ Քու գիտակցեանդ Լոյսը. եւ ողորմէ Քու արարածներուդ եւ ինծի՝ բազմամեղիս:"Ամէն:*

*Թող Աստուածային օրհնութիւնը հանգչիցէ ի վերայ ձեր եւ Աստուած օրհնեսցէ զձեզ: Ամէն:*


## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

**Այս տարի լրանում է Լոս Անջելեսի**
**«ՍԻՓԱՆ» երգչախմբի հիմնադրութեան 30-ամեակը**
**Տօնական համերգի համար հրաւիրւում են**
**երգիչ- երգչուհիներ**
**Երգչախմբի հիմնադիր եւ գեղ. ղեկավար՝**
**ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ**
**Խմբավար, Երեւանի օպերային թատրոնի նախկին խմբավար՝**
**ՍԱՄՈՒԷԼ ՎԱՐՈՍԵԱՆ**
**Տեղեկութիւնների համար պանգահարել**
**Հեն. Անասեան՝ (323) 466-3726, 217-5730**
**Ս. Վարոսեան՝ (323) 469-1879, 610-1314**
**Րաֆֆի Թորոսեան՝ (626) 797-9788**

**Ձեր Ծանուցումները Վստահեցէք**
**«Մասիս» Շաբաթաթերթին**
**T: (626) 797-7680 F: (626) 797-6863**
**massis2@earthlink.net**

## Ի ՅԻՇԱՏԱԿ

# ՊԱՏՄԱԲԱՆ ՅՈՎԻԿ ՆԵՐՍԻՍԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

*Ռ. ԿՈՐԻՒՆ*

*Մեր հասարակական կեանքում տարբեր մարդկանց հետ շփւում եւ յարաբերւում ենք, ծանօթանում ենք անհատների հետ, որոշների հետ յաճախակի տեսակցութիւններն ու այցելութիւնները մարդուս տանում են դէպի մտերմութեան, նրանց մօտ ինչ որ արժէքներ նկատելով ցանկանում ես աւելի մտերմանալ, ուրախանում եւ հպարտանում ես, որ լաւ անձերի հետ ես ծանօթացել, որ քեզ ձգում են՝ քո ներաշխարհին ու մտածելակերպին համընկնում են, արդարեւ հէնց այսպէս է որ կայ, այո՛, մարդը լաւ մարդով է ապրած:*

*Ամերիկա գալով իմ ճանաչողութեանս հորիզոնը ընդարձակւեց նոր ծանօթներով Իրանահայ միութեան կենտրոնատեղին յաճախելով: Այն ինչ երկար տարիների ընթացքում կառուցել էի իմ ծննդավայր երկրում մնաց որպէս անմոռանալի յուշ եւ հոգեկան անխզելի կապ այդ հարազատ եւ հիւրընկալ երկրից: Այստեղ միութիւն յաճախելով իմ մասնակցութիւնս բերի գրադարանի հանդիպումներին, ուր ներկայ էին գտնւում մի շարք երկրներից արտագաղթած ամերիկաբնակ հայեր՝ մեծմասամբ Իրանից եւ Հայաստանից, կային նաեւ Իրաքից: Այդտեղ կլոր սեղանի շուրջը խօսակցութեան նիւթ էր դառնում ազգային-հասարակական, գիտական եւ քաղաքական հարցեր: Տասնհինգից քսան հոգի, յիսունից վերեւ տարիքով մարդիկ՝ պրոֆեսոր Ազատ Վեհունի, պատմաբանասէր Յովիկ Ներսիսեան, Նորա, Շաքէ, Նեկտար, Հիլդա, Գարմէն, Երւանդ, Մինաս, Ներսէս, Վահան, Գրիգոր, Սարօ, Սմբատ, Գալուստ, Արմէն, Պետրոս, Վարդան եւ պատահական ունկնդիրներ: Մտքեր ու տեսակէտներ էին արծարծւում, երբեմն երկխօսութեան գնում՝ վերլուծում եւ մտքեր փոխանակում ազատ ու անկաշկանդ: Այս հանդիպումների ընթացքին էր, որ ծանօթացայ Յովիկ Նեսրիսեանի եւ պրոֆեսոր Ազատ Վեհունու հետ, կեանքի յորձանուտներում փորձւած երկու գիտուն անձեր, որոնք մեր հանդիպումների զեկուցաբերներն էին, նաեւ մի քանի անգամ Արմէնը՝ խոստումնալից յուսատու երիտասարդ, իր քանի ելոյթներով քաղաքական եւ տնտեսական բնագաւառին ուղղւած վերլուծեց լսարանի համար: Ազատ Վեհունին սովետական կարգերի մէջ բարձրագոյն ուսմամբ դարձել էր հանքաբան, գիտական գրքերի հեղինակ եւ պրոֆեսորութեան տիտղոսին արժանացած անձնաւորութիւն, իսկ Յովիկ Ներսիսեանը ազատ աշխարհում զինւորական ակադեմական բարձրագոյն ուսմամբ եւ ինքնազարգացման ճամփով պատմաբանասիրութեան մէջ իր հեղինակած գրքերով արժանի տեղ գրաւած մեր պատմագիտութեան կաճառում:*

*Ամէն շաբաթ օր աշխատում էի անխափան ներկայ գտնւել այդ հանդիպումներին, ուր նաեւ իմ գրքերի քննարկումը կատարւեց: Այդ հանդիպումները համալսարանական լսարանի էին նմանում, քանի որ ինչպէս որ ասւեց՝ երբեմն մասնագիտական թեմաներ էին շօշափւում, ինչպէս օրինակ՝ Հայաստան աշխարհի հանքային հարստութիւնները, Արեւմուտք-արեւելք շահագրգռութիւնները կովկասի նկատմամբ, Արտաշիսեան հարստութիւնը Հայաստանում, Հայաստանի քաղաքական դաշտը, Արցախին առնչւող բանակցութիւններ եւ հայապահպանութեան կապւող սփիւռքեան կեանքը:*

*Ներկաները գտնում էին հայապահպանման աշխատանքները թոյլ են ընթանում, մատղաշ սերունդը հայրենիքից դուրս ուծացման եզրին է կանգնած, տնտեսական եւ այլ խնդիրների պատճառով քչեր են ուղարկւում հայկական դպրոց, նաեւ՝ որոշ երիտասարդ ընտանիքներ անուշադիր են իրենց զաւակների հայեցի կրթութեամբ:*

*Յուսահատութեան արտայայտութիւններ, ճիւղերին սակաւ եւ նւազ աճող ոստեր: Օճախներ անուշադիր եւ ոչ հայաբոյր:*

*Հարկ է իմանալ, որ հայ ընտանիքն ապրում եւ գոյատեւում է ազգային մշակոյթին հաւատարիմ մնալով, ինչպէս որեւէ կառոյցի անվթար գոյութիւնը կախւած է նրա հիմքերի ամրութիւնից, նոյնպէսեւ ընտանիքների հայօրէն յարատեւման երաշխիքն են մնում ազգային արմատից ճիւղաւորւած արժէքները, որոնք պէտք են հոգատարօրէն պահպանւեն սերունդէ-սերունդ փոխանցւելով:*

*Սփիւռքում ներկայ ժամանակահատւածում ծանր պայմանների դէմ հանդիման ենք կանգնած սերունդների հայապահպանման առումով, այնպէս որ անուշադրութիւն մեր արժէքներին հետզհետէ խամրելու է հայկական ոգին:*

*Այս անմխիթար պայմաններում՝ մեծ պարտականութիւն է ընկնում մեր մտաւորականութեան ուսերին, որովհետեւ ժողովրդի թուիչքներին եւ խոյանքներին թեւ տւողն ու ոգեւորողը մտաւորականութիւնն է:*

*Խորհրդային տարիների եւ մեր նորագոյն պատմութեան ընթացքում ազատ պայմանների բերումով ասպարէզ է եկել հայրենասէր եւ յանձնառու մտաւորականութիւն, որոնք մեծ անելիքներ ունեն սերունդներին դէպի մեր սպասելիքների իրագործման ուղիները առաջնորդելու:*

*Մեր հանդիպումները շարունակւում էին կանոնաւոր եւ բոլորը գոհ եւ ուրախ էին Ազատ Վեհունով եւ Յովիկ Ներսիսեանով, քանի որ նրանց գիտութեան պաշարից բոլորս էլ օգտւում էինք, բայց Յովիկ Ներսէսեանի բացակայութիւնը մի քանի շաբաթներով մեզ մտահոգեց, այնպէս որ մէկս միւսին հարց էինք տալիս.*

*- Ինչո՞ւ Յովիկը չի գալիս, վիճակն ինչպէ՞ս է.*

*Պատասխան էի ստանում.*

*-Նա հանգստանում է, եկող շաբաթ կը գայ:*

*Շաբաթն եկաւ, բայց նա չեկաւ:*

*Ցանկութիւն առաջացաւ իրեն այցելելու, հեռախօսի համարը հաւաքեցի եւ ձայնափողի այս կողմից կանչեցի.*

*-Պրն. Յովիկ, Ռուբէնն եմ, զանգել եմ առողջութիւնիցդ հարցնեմ, ինչո՞ւ չես գալիս, կարօտել ենք:*

*-Ռուբէ՛ն ջան.*

*Բոլորի հետ ջանով էր խօսում:*

*-Շաբաթը երեք անգամ դայալիզի եմ գնում, անկարող եմ, չի լինում, ինչ արած, շատ կ'ուզեմ գալ.*

*-Սիրելի Յովիկ երբ կարող ենք քեզ այցելել, ես ու պրն. Գրիշը կ'ուզենք անպայման տեսնել քեզ.*

*-Ռուբէն ջան կէնտ օրերը.*

*-Պրն. Յովիկ հինգշաբթի օրը յարմար է քեզ համար.*

*-Հա՛, յարմար է.*

*-Շատ բարի, թող պրն. Գրիշի հետ համադրեմ, եթէ գալու լինենք, ես կը զանգեմ քեզ, շուտափոյթ առողջութիւն եմ մաղթում:*

*Ամերիկեան անհարազատ կեանք, չդասաւորւեց իրեն այցելել, սակայն նրանից յետոյ հեռախօսով էի կապւում եւ առողջութիւնից հարցնում:*

*Կիրակի յետ միջօրէի չորսն էր, հեռախօսը զանգեց, ոչ ոքի չէի սպասում, անտարբեր մօտեցայ հեռախօսին եւ ձայնափողը ականջիս տարայ.*

*-Համեցէք, լսում եմ.*

*-Ռուբէ՛ն, Գրիշն եմ.*

*-Հա՛, պրն. Գրիշ.*

*-Լսի՛ր Ռուբէն, Յովիկը մահացել է.*

*-Վա՛յ, Հովի՞կը անսպասելի գուժ, ափսոս Յովիկ, քանի անգամ ուզեցինք իրեն այցելել, բայց չյաջողւեց:*

*Գոնէ մի անգամ էլ տեսնէի, բան պիտի կարդայի իրեն:*

*-Արժէքաւոր մարդ ձեռքից տւինք:*

*Յովիկի մահւան բօթը ամէն տեղ տարածւել էր:*

*Խորապէս ցաւում եւ ափսոսում էին:*

*-Լաւ էր վերջին անգամ իրեն տեսանք, թոռան հետ միութիւն էր եկել, շատ էր նւազել, հաւանաբար մահւան նախազգացում տղաներին վերջին անգամ մնաք բարով ասելու համար, ասաց պրն. Հրանդը.*

*-Ինչպէ՞ս տեսար նրա հոգեկան վիճակը.*

*-Պահել էր իր զինւորական առնականութիւնը, դիքշիտակ կեցւածքը, ապրելու կամքն ու յոյսը չկորցնելով, խօսքի եւ արտայայտութեան զգօնութիւնը նկատելի էր նոյնը:*

*Ցաւօք այդ օրը բացակայել էի հանդիպումից, զուրկ մնացի վերջին կենդանի տեսութիւնից:*

*Շաբաթ յուլիս 13, 2009 թիւ:*

*Երկինքն ամպոտ, սրտերը թախծոտ:*

*Իրանահայ միութիւնից ճամփւում ենք դէպի Հալիվուդի Ֆորէսթ Լան գերեզմանատուն: Ծաղկեպսակի փոխարէն նւիրատւութիւն է կատարւել Հայաստանի ծնողազուրկ երեխաների հիմնադրամին մեր խմբակի կողմից:*

*Հոծ թւով յուղարկաւորներ խմբւած եկեղեցու ներսում եւ դրսում որպէս յարգանք երախտաւոր մեկնողին:*

*Այդքա՜ն յուղարկաւորներ Ամերիկայում, մեկնողի նկատմամբ յարգանքն էր բերել:*

*Դագաղի կողքին Յովիկի գեղաթոյր պատկերն է եռոտանու վրայ ցոլ արձակում՝ խոհուն հայեացքը բոլորին ուղղւած:*

*Յուզիչ արարողութիւն է կատարւում, մելամաղձոտ շարականներն են հնչում մեր եկեղեցւոյ, ցաւի ամոքիչ, վշտի սփոփիչ:*

*Հանգուցեալի ընտանեկան կազմը եւ պարագաները սեւազգեստ հետեւում են կրօնական արարողութեան:*

*Տխուր դէմքերով, արցնկալած աչքերով:*

*Խօսողները վեր են հանում հովիկի կեանքի յատկանշական կողմերը, արեւոտ գործերը:*

*Սգակիրները մէկը միւսին հետեւելով անցնում են դիաղագաղի կողքից կատարելով իրենց վերջին տեսութիւնն ու հրաժեշտը:*

*Խաղաղութիւն եւ հանգստութիւն մաղթելով:*

*Արդարեւ ինչ է կեանքը, մինչեւ քանի շաբաթ առաջ ուրախանում էինք նրա ներկայութեամբ, բայց հիմա սգում ենք, այսպէս է կեանքը դերձանից կախւած, այսօր կաս, վաղը չկաս:*

*Կեանքի խաղերն են, պէտք է զգոյշ լինել:*

*Հարազատ ձեռքերով դագաղը շարականների երգեցողութեամբ տեղափոխւում է դէպի թաղման վայրը:*

*Քահանան կատարում է թաղման կարգը:*

*Դագաղը իր նոր ճամբորդով մտնում է իր յաւիտենական նոր բնակարանը: Ծաղկեպսակները որպէս դափնիներ ընծայւում են նրա անշնչացած շիրիմին:*

*Սգակիրներ գերեզմանատնից ուղղւում են դէպի հոգեճաշի սրահը:*

*Իրանահայ միութեան սրահը լեցուն է սգակիրներով:*

*Այս սրահում էր կատարւել հովիկի մի քանի գրքերի շնորհահանդէս գինեձօնը մեծ թւով հանդիսականների ներկայութեամբ:*

*Որքան ուրախ եւ գոհ էր այդ օրերին, ձեռքերը յոգնել էին գրքերը մակագրելուց:*

*Չի կարելի պատկերացնել հոգեճաշի սեղանը առանց դամբանական խօսքերի այն էլ սիրելի Յովիկի պարագային:*

*Յարգելի անձնաւորութիւններ բարձրօրէն արժեւորեցին եւ դրւատեցին նրա հասարակական կեանքը, լոյս ընծայած գրքերը, հայապաշտպան գործերն ու բարոյական արժանիքները:*

*Հետեւենք հանգուցեալի մահւան տխուր առիթով կարդացւած ընդգրկուն գրութեանը:*

*Պատմագիտութեան անխոնջ պրպտողն ու ուսումնասիրող մշակը այլեւս մեր մէջ չէ, Իրանահայ միութեան գրադարանում մեր հանդիպումների բանի-մացն ու գիտունը ոչ եւս է, մեր պատմաբանն ու բանասէրը ֆիզիքապէս մեր մէջ չի գտնւում, նրա տեղը թափուր է: Նա ծով գիտութեամբ հայ ժողովրդի պատմութիւնից ունկնդիրներին գրաւում եւ զարմացնում էր իր յիշողութեամբ:*

*Հանդիպումները տեղի էին ունենում գրադարանին կից սենեակում, գիր ու բանով հետաքրքրւող անձերի մասնակցութեամբ: Տարբեր թեմաների շուրջ, մեր զեկուցաբերներն էին՝ պրոֆեսոր Ազատ Վեհունին եւ պատմաբան Յովիկ Ներսիսեանը, մտքերի փոխանակութեան մտերմիկ մթնոլորտում էր անցնում ամէն մի հանդիպում, որի աւարտին տեղեկութիւններով լիցքաւորւած հեռանում էինք:*

*Այն օրւանից որ հովիկը հիւանդութեան պատճառով չեկաւ, այն կողմից էլ պրոֆեսորի բացակայութիւնը որոշ թուլութիւն առաջացրեց հանդիպումների մէջ:*

*Վաղ էր Յովիկի մահը, դեռ անելիք շատ ունէր, պատմութեան խորքերից յայտնաբերելու գործեր շատ ունէր, սակայն անագորոյն մահու դժխեմը ընդհատեց նրա կեանքի երակը եւ մեզ բոլորիս սուգի մատնեց, նրա մեկնումը*

# ԿՈՄԻՏԱՍԵԱՆ ԵՐԳԻ ԵՐԿՐՊԱԳՈՒՆ՝ ԱՐՍԷՆ ՍԱՅԵԱՆ ՄԱԷՍԹՐՈՆ

***ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ***

*Քահանայի որդի, տարօնցի այս տղան ծնաւ Հալէպ, երաժշտական իր բարձրագոյն ուսումը ստացաւ Երեւանի Կոմիտաս Երաժշտանոցին մէջ ու շունչ առաւ Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ որպէս նոր շունչ մը տար այդ մեծ գաղութի հայութեան:*

*Սկիզբը Հալէպի մէջ աշխատեցաւ որպէս խմբավար: Մայր գաղութը իրեն պէտք ունէր, պէտք ունէր իր «Շողակ» երգչախումբին, որ իր շուրջ կը համախմբէր 90 հոգի:*

*Եթէ սկիզբը Արսէն Սայեան 1949ին ղեկավարած է Ս. Քառասնից Մանկանց Մայր Եկեղեցւոյ դպրաց դասը, ապա 1950-1957 ղեկավարած է «Շողակ» երգչախումբը, ընդհանուր խանդավառութիւն ստեղծելով գաղութին մէջ ու մանաւանդ սէր արծարծելով դէպի հայ երգը, կոմիտասեան երգը: Հալէպի մէջ կը հնչէր նաեւ Կոմիտասի աշակերտներէն՝ Կանաչեանի երգերը:*

*Նոյն թուականին՝ 1957ին Սայեանը հաստատուելով Ամերիկայի Ֆիլատելֆիա քաղաքը, շուտափոյթ կը լծուի երգչախումբ մը ստեղծելու աշխատանքին, որուն համար կ'ունենայ հայ երգը տարածել ուզող օգնականներ:*

*Կը ստեղծուի «Քնար» երգչախումբը ու հայ բեմին կը սկսին հնչել մեղեդիները Կոմիտասի, Ալ. Յարութիւնեանի, Գրիգոր Սիւնիի, Էտկար Յովհաննէսեանի, Մակար Եկմալեանի, Արմէն Տիգրանեանի, Բիւզանդ Կանաչեանի, Արամ Խաչատուրեանի, Քրիստափոր Կարա Մուրզայի, Աշոտ Սաթեանի, Թաթուլ Ալթունեանի եւ մեր երգարուեստի բոլոր մեծերուն երգերը Արսէն Սայեանի ճպոտին ղեկավարութեամբը:*

*Հայկական լեռնաշխարհի մէջ հայ ժողովուրդին հոգիէն ծնած, Հայոց Սօսեաց անտառներուն շրշիւնէն, ձորերու սիւքերէն, լեռներու քամիներէն, հայ գիւղացիի ցորեաններու սրվսրւողէն ծնած երգերը կը հնչեն հեռաւոր Ամերիկայի մէջ, տարագիրներուն համար խապրիկներ բաշխելով, գանոնք խմբուելու մղելով: Քառաձայն երգը, երգը ընդհանրապէս մարդիկը համախմբելու ուժ ունի: Ահա համախմբումի այդ աշխատանքն է որ կը տանի արդէն որպէս մաէսթրօ ճանչցուած խմբավար Արսէն Սայեանը:*

*Խմբավար Սայեանը չի բաւարարուիր իր իսկ հիմնած «Քնար» երգչախումբով: Ամերիկայի մայրաքաղաքին մէջ եւս ստուար թիւով հայեր կան: Ահա թէ ինչո՞ւ, Սայեանը երգչախումբ մըն ալ կը հիմնէ Ուաշինկթընի մէջ կոչելով այս խումբը՝ «Անի»: Այդ 1970 թուականին էր:*

*Եւ ահա Սայեան խմբավարը այս երկու խումբերու կարեւոր ուժերուն միացումովը տասնամեակներէ ի վեր ելոյթներ կը կազմակերպէ երկրին զանազան քաղաքներուն մէջ, արժանանալով ջերմ ընդունելութեան:*

*Սայեան հայ երգի մեկնաբանը քառորդ դար ամբողջ «Ամերիկայի Ձայն»էն կը լուսաբանէ հայ ունկնդիրները վերլուծելով մեր բնաշխարհէն, հպուն հոգիէն ծնած երգերը:*

*Քիչ է ըսել թէ Սայեանը արժանացած է մետալներու: Ան արժանացած է իր խումբերուն եւ հայ թէ օտար ունկնդիրներու բարձր գնահատանքին, բոլորին սիրոյն:*

*Սայեանին անունը կապուած է հայ երգին, հայոց եկեղեցիի շարականներուն, հայով հայրենիքին, հայ ինքնապաշտպանութեան հերոսներուն, եւ ահա քառաձայն այս խումբին, որ հոգեպարար, մեզ խիզախութեան մղող երգերը:*

*Սայեանի հնչեցուցած հայկական երգերը մթնոլորտի մաքրութիւն կը յառաջացնեն, հոգին ազնուացնող հայ երգերը:*

*Այս բոլորով գոհացողը չէ եղած խմբավարը՝ ան իր անուամբ կրթաթոշակ ստեղծած է եւ ամէն տարի 20 հոգի երաժշտական բարձրագոյն կրթութեան կը տիրանայ մեր երկրէն: Սայեանի հիմնած կրթաթոշակով երաժշտական բարձրագոյն ուսում ստացողներուն թիւը այսօր հասած է 300-ի: Նուիրեալներ այս երիտասարդները որոնցմէ շատեր մեծ մայրաքաղաքներու մէջ ունեցած են ծափերու արժանի ելոյթներ:*

*Սայեանը, այս ձեւով, հայ երգի արտերուն մէջ ցորեանի հանգոյն հայ երգի հատիկները ցանած է ստանալով առատ բերք:*

*Սայեանը, այսօր, ոչ միայն Սփիւռքի այլ նաեւ Հայաստանի մէջ ճանչցուած անուն է:*

*Իր երաժշտական բարձրագոյն ուսումը հայրենի Կոմիտաս Երաժշտանոցին մէջ ստացող Սայեանը ապրած է մտահոգութիւններովը իր իսկ աւարտած երաժշտանոցին եւ իր համերգներէն գոյացած գումարները ղրկած է Հայաստան վասն վերանորոգման այդ երաժշտանոցին:*

*Եւ վերջապէս ինչպէս հայը կ'ըսէ. «Տաշուած քարը գետին չի մնար»: Հայրենիքը 1996 թուականի Հոկտեմբերին Երեւանի Կոմիտաս երաժշտանոցի հիմնադրման 75-ամեակի տօնակատարութեան առիթով Սայեանը որպէս պատուոյ հիւրը կը հրաւիրուի երկիր: Իսկ 1998 ընդունելով ղեկավարել պետական երաժշտանոցի երգչախումբը կ'երթայ Հայաստան ու լրջութեամբ կը կատարէ իր խոստումը:*

*Տակաւին 2002-էն ի վեր Սայեանը մեր պետական երաժշտանոցի Կիւմրի մասնաճիւղի շրջանաւարտներու պետական քննութիւններու յանձնաժողովի պատուաւոր նախագահի պաշտօնը կը կատարէ:*

*Ուրեմն, Սփիւռք-Հայրենիք կապ որ կ'ըսեն, այսպէս պէտք է ըլլայ: Այդ կապը պէտք է ըլլայ գործնական ինչպէս Շիրազը ըսած է. «Իմ սուրբ Հայրենիք դու սրտիս մէջ ես, ոչ լեզուիս վրայ»: Մեր օրերուն շատերու հայրենասիրութիւնը լեզուի վրայ է:*

*Սիրելի Արսէն, ղրկած նիւթովդ ընթերցումի հաճելի պահ մը տուիր ինծի եւ այդ նիւթէն ծնաւ այս յօդուածը ուր կը հնչեն այլոց խօսքերու կարգին քու գործունէութեան շուրջ, նաեւ քու խօսքերդ, կ'ըսես. «Փառք եմ տալիս որ զաւակն եմ իր դարաւոր ու փառաւոր կեանքով հպարտ մի ցեղի՝ հայութեան, որի ճակատին դիտուած կնճիռները ակօսներն են անհատնում ցաւերի եւ ոչ թէ ժամանակի խաղաղ անցեալին: Որովհետեւ բռնակալների լծի տակ, որպէս ճնշուած մի ժողովուրդ, որ իր վշտի ու մահուան մէջ փնտռեց կեանքի իմաստն ու արժէքը եւ դրանցով լուսաւորուած՝ ողջունեց կեանքի խորհուրդը»:*

*Ահա թէ քու մասիդ ինչ ըսած է երգահան Փրոֆ. Արմէն Սմբատեանը «... նշանաբան ունենալով Կոմիտասեան ըմբռնումները, արուեստագէտ Արսէն Սայեանը լի է հայրենասէր հոգու ազնիւ ու նուիրեալ աշխատանքով, որը կենսական նշանակութիւն ունի Սփիւռքում հայ խմբերգային արուեստի պահպանման եւ զարգացման գործում: Իր հետեւողական եւ անընդմէջ գործունէութեամբ նա փոխանցել է ազգային երգարուեստը հայրենակարօտ հայութեանը, սատար լինելով հայապահպանման նպատակին»:*

*Դուն սիրելի Արսէն Սայեան, սփիւռքէն մինչեւ եւ հայրենիք շողարձակող այն գիծն ես, որուն անունը Կոմիտասեան երգն է:*

*Ու այդ երգը ունի ծիածանի նշմարուող եւ չնշմարուող բոլոր գոյները:*

*Սիրանդ Հալէպէն ամառնային ողջոյն քեզ:*

# ՍՏԱՑՈՒԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆ
## ԿԷՍ ԴԱՐ ՏԻՐՈՋ ԱՅԳԻԻՆ ՄԷՋ
## ՎԵՐ. ԴՈԿՏ. ՎԱՀԱՆ Յ. ԹՈՒԹԻԿԵԱՆ




*Իր հոգեւոր, ազգային եւ հեղինակային արժանիքներով ծանօթ՝ հարուստ մտաւորական անձնաւորութիւն է Վեր. Վահան Թութիկեան, որ նաեւ, գործադիր տնօրէնն է Հայ Աւետարանական Համաշխարհային խորհուրդին: Միջանկեալ յայտնենք, թէ Վեր. Վահան Թութիկեան, այս տարի կը բոլորէ իր հոգեւոր եւ հասարակական ծառայութեան 50-րդ տարեդարձը, զոր ջերմօրէն կը շնորհաւորենք, իրեն մաղթելով քաջառողջութիւն, արեւշատութիւն եւ արդիւնաշատ կեանք:*

*Այս տարեդարձի բարեբաստիկ առիթով, ան, մեր տրամադրութեան տակ կը դնէ, ընթերցողին ուշադրութիւնը գրաւող, անգլերէն եւ հայերէն բաժիններով գրուած իր մէկ նոր գիրքը, զոր վերնագրած է «ԿԷՍ ԴԱՐ ՏԻՐՈՋ ԱՅԳԻԻՆ ՄԷՋ»:*

*Արդարեւ՝ 31-րդ գեղատիպ, խնամեալ եւ լուրջ բովանդակութեամբ գիրք մը, զոր Վեր. Վահան Թութիկեան ձօնած է իր ընտանիքին եւ բարեկամներուն, առ ի երախտագիտութիւն՝ անոնց ունեցած ներգործող, կարեւոր դերին համար իր անհատական եւ հովուական կեանքին ներս:*

*Ներկայ հատորը կը բաղկանայ 244 էջերէ: Անգլերէն բաժին մը որ կը բաղկանայ 27, իսկ հայերէն բաժին մը, որ բաղկանայ 14 նիւթերէ: Անոնք կը շօշափեն դիպուկ պատգամներով հոգեւոր մտորումներ, առակներ, կեանքէն վերցուած դէպքեր եւ այժմէական մեր առօրեայէն պատառիկներ, որոնք կը զգենուն բարոյագիտական պատգամներ:*

*Վերապատուելին բաւարար սպառողութեամբ, նաեւ անդրադարձած է ընդհանրական նիւթերու մասին, որոնք կը յարուցեն «աշխարհիկ» մօտեցման եւ «քրիստոնէական» մօտեցման բաղդատական եզրեր, որոնք անշուշտ կրնայի իրարու հակադրուիլ ինչպիսին կրնային ըլլալ «թանձրացեալ» եւ «վերացական» մօտեցումներու պարագային:*

# ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄԸՐԻ ԵՈՎԱՆՈՎԻՉԻ ՀԵՏ

***Շարունակուածէջ 8-էն***

*1.8 պիլիոն տոլար յատկացուած է որպէս օգնութիւն. . . Միացեալ Նահանգաց կառավարութիւնը գիտէ որ ժողովրդավարութեան ճամբան սրընթաց եւ հեզասահ չէ. սակայն այս ուղղութեամբ պիտի օգնենք ժողովուրդին«: Խօսելով Հայաստանի մէջ տեղի ունեցած ընտրութիւններուն մասին՝ ըսաւ որ տակաւին տեղի կ'ունենան խախտումներ՝ որոնք խնդրոյ առարկայ կը դարձնեն ընտրութեանց ընթացքը: Տնտեսական տագնապը, որ տիեզերական տագնապ մըն է, մեծապէս ազդած է երկրին վրայ. սակայն այս տագնապը առիթ մը կը ներկայացնէ՝ որպէս զի կառավարութիւնը արդիականացնէ երկրին ենթակառոյցը եւ քաջալերէ անհատական նախաձեռնութիւնները: Արտայայտուելով Հայաստանի եւ դրացի երկիրներու յարաբերութեանց մասին՝ ըսաւ որ Միացեալ Նահանգները պիտի օգնեն որպէս զի Թուրքիոյ հետ սահմանները բացուին եւ Լեռնային Ղարաբաղի հարցը լուծուի: Ան ըսաւ որ հասկնալի է արտասահմանի հայութեան զայրոյթն ու յուսախաբութիւնը՝ երբ Նախագահ Օպաման Ապրիլ 24-ի իր զեկոյցին մէջ »ցեղասպանութիւն« բառը չգործածեց. սակայն ի վերջոյ այդ որոշումը Սպիտակ Տան կը պատկանի: Ճիշդ է որ անցեալը պէտք չէ մոռցուի, սակայն կարեւոր է որ Հայաստանը դէպի ապագան ուղղէ իր հայեացքը՝ մանաւանդ այնպիսի ժամանակի մը՝ երբ երկրին մէջ տնտեսական անկայութիւն կը տիրէ: »Հայկական հարցերը՝ հայկական լուծումներու կը կարօտին« ըսաւ, բացատրելով որ Միացեալ Նահանգները կրնան օժանդակել, սակայն ի վերջոյ »Հայ ժողովուրդէն կախում ունի հարթելու դէպի 21-րդ դար տանող ճամբան«:*

*Դեսպանի խօսքէն ետք՝ առիթ տրուեցաւ ներկաներուն՝ որպէս զի հարցումներ ուղղեն, որոնց հանգամանօրէն պատասխանեց օրուան հիւրը:*

# ԳԱՐԵԳԻՆ Ա. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԽՃԱՆՄԱՆ ՏԱՍՆԱՄԵԱԿ

*Շարունակուածէջ 13-էն*

*հոգեւորականներու մի քանի սերունդներ պատրաստեց երբ Դպրեվանքին տեսուչն ու աստուածաբանութեան եւ հայրաբանութեան ուսուցիչը կարգուեցաւ: Երբ Աթոռակից Կաթողիկոսն էր Կիլիկիոյ, Գարեգին Բ իր աշակերտներէն ոմանք իր իսկ ձեռքով եպիսկոպոս ձեռնադրուեցան, որոնք նաեւ հետեւելով իր բարի օրինակին ու իր յատուկ նախաձեռնութեան Անգլիա, Ֆրանսա կամ Միացեալ Նահանգներ մեկնեցան ուսանելու: Իր աշխատանքին արդիւնքը երախտապարտ թողուց բոլորը որոնք իր շունչին տակ հասակ առին ու աշակերտեցան իրեն:*

*Վարչական գործի մէջ աւելի որպէս մտաւորական փայլեցաւ քան թէ գործիչ, եւ եթէ Օրմանեան Պատրիարք պիտի շարունակէր գրել հայ եկեղեցւոյ պատմութիւնը իր իւրայատուկ ոճով պիտի ըսէր. «Մէկ Աթոռէն Միւսը», պարագայ մը որ աննախընթաց եղաւ հայ եկեղեցւոյ պատմութեան մէջ ուր Կիլիկիոյ Կաթողիկոս մը Ամենայն Հայոց Կաթողիկոս պիտի դառնար յայտնի կամ անյայտ պարագաներու բերումով՝ Երջանկայիշատակ Վազգէն Կաթողիկոսի վախճանումէն ետք: Արդիւնաւոր կերպով ծառայելէ ետք 18 երկար տարիներ Կիլիկիոյ Աթոռին որպէս գահակալ, Գարեգին Բ կ'որոշէր յանձն առնել Ամենայն Հայոց Կաթողիկոսական բարձրագոյն պաշտօնը երբ Հայաստանի Հանրապետութիւնը նոր էր անկախացած, երբեմն լաւ եւ երբեմն փշոտ պայմաններու մէջ, ուր սակայն դժբախտաբար իր գահակալութիւնը կարճ տեւեց անողոք հիւանդութեան ճակատագրին դիմաց: 1995-ին ընտրուած Գարեգին Ա, վախճանեցաւ 1999-ին:*

*Թերեւս, ինչպէս ոմանք ըսին, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան մէջ ծլած, պատրաստուած ու որպէս Կաթողիկոս բարւոք ծառայութեամբ փայլած, Գարեգին Հայրապետ արդեօ՞ք պէտք էր թողուր իր տունը եւ յանկարծ փոխադրուիլ Մայր Աթոռ: Չմոռնանք որ Գարեգին Բ Կիլիկիոյ Կաթողիկոսը իսկապէս բարեզարդեց կաթողիկոսութեան Անթիլիասի կայքը, մտաւորա-կանութիւնը հրաւիրելով որպէս մնայուն պահակները Աթոռին, հայ գիրքն ու գրականութիւնը հիմնապէս հաստատելով որպէս խարիսխ ամրութեան, որոնց սրտովին կը հաւատար ինք եւ գործնապէս կը նպաստէր անոնց՝ այլազան ծրագիրներ մշակելով: Միւս կողմէն սակայն Մայր Աթոռի մէջ մթնոլորտը տարբեր էր սփիւռքի պայմաններէն, Հայաստանը երբեք սփիւռք չէ եղած, ու հայրենի հողին վրայ նոյն սփիւռքեան ծրագիրները գործադրել ընկալելի եւ գնահատելի պիտի չըլլային առաջին հերթին:*

*Որպէս Կաթողիկոս Տանն Կիլիկիոյ Գարեգին Բ Հայրապետ փորձեց շտկել յարաբերութիւնները Անթիլիասի եւ Ս. Էջմիածնի միջեւ, հարթեց որոշ դժուարութիւններ ու անձամբ Մայր Աթոռ այցելելու առիթները չանտեսեց, բան մը որ իր անմիջական երկու նախորդները չուզեցին կամ չկրցան ընել: Զարեհ եւ Խորէն հանգուցեալ Կաթողիկոսները չայցելեցին Միածնաէջ Ս. Տաճարը, չտեսան հայրենի հողը, հակառակ եղած հրաւէրներուն: Սակայն Գարեգին Բ ճկուն եղաւ ու կարեկցութիւն ցոյց տուաւ մի քանի անգամներ Մայր Աթոռ եւ Հայաստան այցելելով, մասնաւորաբար 1988 թուի ահաւոր երկրաշարժին հետեւանքով:*

*Պատմութեան մէջ, մինչեւ 1945, Կիլիկիոյ կաթողիկոս մը երբեք չէր այցելած Մայր Աթոռ: Առաջին եւ վերջին անգամ, 1945 թուին, միայն Գարեգին Ա Յովսէփեանց Կիլիկիոյ հայրենասէր ու գիտնական Հայրապետն էր որ Ս. Էջմիածին կ'ուղեւորէր Երջան. Տ. Տ. Գէորգ Զ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան եւ օծման նախագահելու համար: Գարեգին Բ եղաւ յաջորդ կաթողիկոսը որ 1988-ի Դեկտեմբերին պաշտօնական այցելութեամբ Ս. Էջմիածին կ'երթար իր շքախումբով: Յարաբերութիւնները բարելաւուեցան, եւ սակայն բանակցութիւնները ի նպաստ հայ եկեղեցւոյ իսկական միութեան՝ ոչ մէկ արդիւնք տուին, եւ յուսախաբ ըրին Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Հայրապետը, որովհետեւ Գարեգին Բ ա'յդքան միայն կրնար ընել իրեն սահմաններուն մէջ: Այս ալ անշուշտ ունէր իր ներքին պատճառները:*

*Գարեգին Ա որպէս Ամենայն Հայոց Կաթողիկոս միայն չորս տարի գահակալեց, վերջին տարին դժբախտաբար բոլորովին հիւանդ վիճակի մէջ: Այսուհանդերձ իր պարտքը իւրովսանն կատարելով: Ներքին պատմական թեմերը վերահաստատեց՝ Սիւնիքի, Կոտայքի, Արմաւիրի, Արագածոտնի, Գուգարքի եւ Արցախի թեմերը, որոնք ծրագրուած էին Երջանկայիշատակ Վազգէն Կաթողիկոսի օրով, որ նաեւ ներքին թեմերու համար յատուկ կանոնադրութիւն մըն ալ մշակած էր ու գործադրած, եւ թեմերէն երկուքը արդէն հաստատած էր 1994 թուի իր վախճանումէն առաջ: Գարեգին Առաջին Հայրապետ այդ թեմերուն համար վեց երիտասարդ եպիսկոպոսներ ձեռնադրեց որոնք մինչեւ այսօր կը մնան իրենց թեմակալի պաշտօններուն վրայ: Կատարեց նաեւ Միւռոնօրհնէք մը 1996 թուականին:*

*Արտասահմանեան իր հովուապետական այցելութիւններով դէպի Միացեալ Նահանգներ, Գանատա, Աւստրալիա, Հարաւային Ամերիկա, Ֆրանսա եւ Անգլիա, Հայրապետը շարունակեց այն ինչ որ գերազանցօրէն եւ լիագոյնս կատարած էր Վազգէն մեծագործ Հայրապետը: Վերջին անգամ ըլլալով Կիլիկիոյ Կաթողիկոսութեան այցելութիւն մը տուաւ 1995 թուին, երբ իր յաջորդն ու աշակերտը, Արամ Ա Կաթողիկոս, Կիլիկեան Աթոռին վրայ օծում պիտի ստանար իրմէ: Աթոռներու յարաբերութիւնը մնաց նոյնը, եւ Գարեգին Հայրապետ գիտնալով խնդրոյն իսկական կնճիռը, չէր կրնար այդ յարաբերութիւնը ընդմէջ Մայր Աթոռի եւ Կիլիկեան Աթոռի բարելաւել, սկզբունքային քայլեր չէր կրնար առնել եւ գործադրել, հակառակ անոր որ ոմանք կարճատես յոյսերով, անիրագէկ եւ անիրատես, կ'ուզէին զինք տեսնել Գերագահ Աթոռին վրայ որպէս «յարմարագոյն» կաթողիկոսը որ պիտի դարմանէր պառակտումը Հայց. Եկեղեցիէն ներս: Անոնք չգիտցան որ Հայրապետին մէկ Աթոռէն միւսը փոխադրուիլը որեւէ կապ եւ աղերս չէր կրնար ունենալ այդ խնդիրին հետ: Յայտնապէս, անցնող տասնամեակը այդ բարի ըղձանքը ցոյց չտուաւ:*

*Գերագահ Աթոռին վրայ սակայն հանգուցեալ Գարեգին Ա Հայրա-պետը կատարեց յիշատակի արժանի շարք մը գործեր, հակառակ իր կեանքի շատ կարճ ժամկէտին: 1998 թուին, Ամերիկայի Հայոց Առաջնորդութեան հարիւրամեակին անձամբ այցի եկաւ Նիւ Եորք, խօսեցաւ զգայացունց ճառ մը «Էյլիս Այլընտ»ի մէջ, ի ներկայութեան Արեւելեան Թեմի Առաջնորդին, հոգեւորական դասուն, բազմաթիւ ամերիկահայերու եւ քաղաքային ու նահանգային ընտրանի դասուն, գլխաւորութեամբ Նիւ Եորք Նահանգի կառավարիչին ու քաղաքապետին: Նոյն օրերուն Գոհաբանական Մաղթանքով հանդիսաւորապէս նշեց հարիւրամեակը Ս. Վարդան Մայր Տաճարին մէջ, ի ներկայութեան Հիւսիսային եւ Հարաւային Ամերիկայի մեր բոլոր թեմակալ առաջնորդներուն եւ մասնակցութեամբ լրիւ զգեստաւորեալ 12 եպիսկոպոսներու: Իր կեանքի վերջին ամիսներուն կատարեց երկու նշանակալից գործեր եւս, վերաշինել տուաւ Սիւնեաց աշխարհի Նորավանքի համալիրը եւ օծեց զայն, եւ հիմնարկէքը կատարեց Հայաստանի Մեծ Դարձին նուիրուած Երեւանի հոյակապ Մայր Եկեղեցւոյ, որուն կառոյցը աւարտեցաւ եւ օծումը կատարուեցաւ 2001 թուին՝ յաջորդ Կաթողիկոսին՝ Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի ձեռամբ:*

*Միջ-եկեղեցական մակարդակի վրայ Գարեգին Հայրապետ պաշտօ-նական այցի գնաց քրիստոնեայ աշխարհի երեք մեծագոյն կեդրոններուն եւ գահակալներուն: Իսթանպուլի մէջ Յոյն Ուղղափառ Տիեզերական Պատրիարքին, Հռոմի Սրբազան Քահանայապետին, եւ Անկլիգան Եկեղեցւոյ Քէնթըրպըրիի Արքեպիսկոպոսին: Հիւանդագին վիճակի մէջ ուղեւորեցաւ Վատիկան վերջին անգամ մը եւս ու ստորագրեց դաւանական միութեան գիր մը Յովհաննէս Պօղոս Բ Պապին հետ՝ իր վախճանումէն քիչ առաջ:*

*Պատմութեան կ'անցնի Գարեգին Ա Հայրապետ որպէս քսաներորդ դարու մեզի ժամանակակից Հայ Եկեղեցւոյ զարգացած ու նուիրեալ հովուապետներէն մին, որ իր անմնացորդ պարտքը լրիւ կատարեց յաչս իր ժողովուրդին, իր եկեղեցիին, եւ մանաւանդ օտար եկեղեցական լայն շրջանակներուն: Ի Տէր հանգեաւ իր 67 տարիքի սեմին: Օրհնեալ ըլլայ Հայոց Հայրապետ Տ.Տ. Գարեգին Ա Հայրապետի յիշատակը:*

## ԾԱԽՈՒ Է ՄՐԳԱՀԻՒԹԻ ԽԱՆՈՒԹ

Պըրպէնքի Կեդրոնին մէջ ծախու է Franchise մրգահիւթի խանութ մը: Թարմ մրգահիւթ եւ smoothies: Սեփականատէրը նոր մայր դարձած է եւ կ'ուզէ ծախել խանութը: Մենք կը հովանաւորենք առաջին երկու շաբաթը: Ծախու գին 10,000 տոլար: Գնողը կը ստանձնէ մնացեալ 7 տարուան վարձքի համաձայնութիւնը եւ մնացած պարտքի 60%: Franchise-ը 20 տարուայ է, իսկ խանութը՝ 3 տարուայ: Հեռաձայնել Քոլէթին (818) 324-1758 թիւին:

******

## BUSINESS FOR SALE

**Franchise Juice Store located in the heart of Downtown Burbank**
**Store offers fresh squeezed juices and smoothies.**
**Owner is a new mother and does not have time to run the store.**
**Complete turnkey business ready for you to step in.**
**Will provide training for the first 2 weeks.**
**Only asking $10,000! Buyer will take over remaining 7 year lease and assume 60% of remaining SBA loan.**
**Franchise is over 20 years old and store location is 3 years old.**
**Contact Colette at 818-324-1758**

## ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ**

---

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**
**Enclosed a check for (one year)**
*** $50,00 for USA**
*** $60,00 (second class), $ 75,00 (Air Mail) for Canada.**
*** $85,00 (second class), $ 125,00 (Air Mail) Overseas.**

**Name: ---------------------------------------**
**Address: ------------------------------------**
**City: --------- State:--------- Zip Code:------**
**Country: ------------**
**Tel :------------------------ Fax : ------------------------**

## ՄԱՐԶԱԿԱՆ

## FIFA CONFEDERATION CUP 2009
## ՊՐԱԶԻԼ ԵՐՐՈՐԴ ԱՆԳԱՄ ԸԼԼԱԼՈՎ ՏԻՐԱՑԱՒ ՄԻՋ-ՑԱՄԱՔԱՄԱՍԱՅԻՆ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ

***ԱՔՕ ՊԷԼԵԱՆ***

| | |
|---|---|
| Պրազիլ - Ա.Մ. Նահանգներ | 3-2 |
| Սպանիա - Հ. Ափրիկէ | 3-2 |



*Ափրիկէի ծոհանէսպուրկ քաղաքի մէջ իր աւարտին հասաւ Միջ-Ցամաքամասային ֆութպոլի մրցաշարքը որուն կը մասնակցէին Սպանիա, Պրազիլ, Ա.Մ. Նահանգներ, Եգիպտոս, Իրաք, Իտալիա, Նոր Զէլանտա, հիւրընկալութեամբ Հարաւային Ափրիկէի:*

*Յաղթահարելով բազմաթիւ դժուարութիւններ ափրիկեցիները յաջողեցան առաջին անգամ ըլլալով կազմակերպել ֆութպոլի մրցաշարք մը, որ իր վրայ կեդրոնացուց երկրագունդի բազմամիլիոն ֆութպոլասէրներու ուշադրութիւնը:*

*Միջ-Ցամաքամասային մրցաշարքին ականատես եղանք հետաքրքրական մրցումներու, ուր տեղի ունեցան անակնկալներ եւ հաստատուեցան նոր մրցանիշներ:*

*Պատմական անակնկալ մը եղաւ Եգիպտոսի յաղթանակը աշխարհի ախոյեան Իտալիոյ դէմ 1-0:*

*Ա.Մ. Նահանգներու հաւաքականի փառաւոր յաղթանակը Սպանիոյ դէմ 2-0: Եւրոպայի ախոյեանները կ'արշաւէին 15 յաջորդական յաղթանակներով եւ բախեցան ամերիկեան ուժեղ հրատանիին:*

*Կիսաւարտական հանդիպումներու արդիւնքները.*

| | |
|---|---|
| Ա.Մ. Նահանգներ - Սպանիա | 2-0 |
| Պրազիլ - Հարաւ Ափրիկէ | 1-0 |

*Աւարտական մրցումը Պրազիլի եւ Ա. Մ. Նահանգներու միջեւ վերջացաւ Պրազիլի յաղթանակով 3-2 եւ Պրազիլ երրորդ անգամ ըլլալով բարձրացուց Միջ-Ցամաքամասային մրցաշարքի բաժակը:*

*Պրազիլի ֆութպոլիստներ Գագա եւ Ֆապիանօ ՖԻՖԱ-ի կողմէ յայտարարուեցան մրցաշարքի լաւագոյնները եւ ստացան իրենց բաժակները:*

*Սպանիա յաղթեց Հարաւ Ափրիկէի եւ գրաւեց երրորդ դիրքը: Հարաւ Ափրիկէն թէեւ մնաց չորրորդ, բայց կազմակերպիչներու համար եղաւ փորձաքար մը, աւելի լաւ կազմակերպելու Ափրիկէ 2010 Մոնտիալը, ուր պիտի հիւրընկալէն աշխարհի 35 լաւագոյն հաւաքականները: Մոնտիալը պիտի սկսի 340 օրէն:*

## ՖՈՒԹՊՈԼԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

*Յունիսի 27-28-ին կայացան Հայաստանի ֆուտբոլի բարձրագոյն խմբի առաջնութեան 14-րդ հանդիպումները, որոնցում գրանցուեցին հետեւեալ արդիւնքները. «Ուլիս» - «Արարատ»՝ 3-0, «Փիւնիկ» - «Միկա»՝ 3-0, «Գանձասար» - «Շիրակ»՝ 2-1, «Կիլիկիա» - «Բանանց»՝ 0-2:*

*Այսպիսով աւարտուեց առաջնութեան երկրորդ շրջանը: Յետաձգուած «Փիւնիկ» - «Արարատ» հանդիպումը նշանակուած է Յուլիսի 7-ին:*

Մրցաշարային աղիւսակ

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Փիւնիկ | 13 | 10 | 3 | 0 | 30-6 | 33 |
| 2. Միկա | 14 | 10 | 2 | 2 | 26-14 | 32 |
| 3. Բանանց | 14 | 9 | 0 | 5 | 24-16 | 27 |
| 4. Ուլիս | 14 | 8 | 2 | 4 | 22-11 | 26 |
| 5. Գանձասար | 14 | 5 | 2 | 7 | 10-20 | 17 |
| 6. Շիրակ | 14 | 3 | 4 | 7 | 13-26 | 13 |
| 7. Կիլիկիա | 14 | 3 | 1 | 10 | 12-23 | 10 |
| 8. Արարատ | 13 | 0 | 0 | 13 | 3-24 | 0 |


***ԾԱԽՈՒ Է ՄՐԳԱՀԻՒԹԻ ԽԱՆՈՒԹ:*** *Պըրպէնքի կեդրոնին մէջ ծախու է Franchise մրգահիւթի խանութ: մը: Թարմ մրգահիւթ եւ smoothies: Սեփականատէրը նոր մայր դարձած է եւ կ'ուզէ ծախել խանութը: Մենք կը հովանաւորենք առաջին երկու շաբաթը: Ծախու գին 10,000 տոլար: Գնողը կը ստանձնէ մնացեալ 7 տարուան վարձքի համաձայնութիւնը եւ մնացած պարտքի 60%: Franchise-ը 20 տարուայ է, իսկ խանութը՝ 3 տարուայ: Հեռաձայնել Քոլէթին (818) 324-1758 թիւին:*

****

BUSINESS FOR SALE: Franchise Juice Store located in the heart of Downtown Burbank for sale. Store offers fresh squeezed juices and smoothies. Owner is a new mother and does not have time to run the store.

Complete turnkey business ready for you to step in. Will provide training for the first 2 weeks. Only asking $10,000! Buyer will take over remaining 7 year lease and assume 60% of remaining SBA loan.

Franchise is over 20 years old and store location is 3 years old.

Contact Colette at 818-324-1758



**Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկանաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ հաճեցէք կապ պահել մեզի հետ:**

**G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104**

**Norserount@sbcglobal.net**


## ՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՏՆԵԼՈՎ ԹՈՒՐՔ ՄԱՀԻՐ ՕՐԱԼԻՆ ԱՐԹՈՒՐ ԱԲՐԱՀԱՄ ՊԱՇՏՊԱՆԵՑ ՏԻՏՂՈՍԸ




*Գերմանիան ներկայացնող հայազգի բռնցքամարտիկ Արթուր Աբրահամը Բեռլինում կայացած մրցամարտում պաշտպանել է IBF վարկածով աշխարհի ախոյեանի տիտղոսը՝ 10-րդ ռաունդում տեխնիկական նոկաուտի ենթարկելով ազգութեամբ թուրք մրցակցին՝ եւս Գերմանիա ներկայացնող Մահիր Օրալին:*

*Դրանով իսկ, «Ասոսիէյթըտ Փրես» գործակալութեան փոխանցմամբ, Աբրահամը տարաւ 30-րդ անընդմէջ յաղթանակը՝ 10-րդ անգամ անընդմէջ պաշտպանելով իր տիտղոսը:*

*Հայազգի բռնցքամարտիկը IBF վարկածով աշխարհի ախոյեան է դարձել 2005 թուականի Դեկտեմբերին:*

*Օրալը առաջին պարտութիւնը կրեց վերջին 19 մենամարտերում. Նրա նախորդ պարտութիւնը գրանցուել էր 2004 թուականին:*

*Արթուր Աբրահամ գրեթէ մրցակից չունի տուեալ քաշային կարգում: Քելլի «Ուրուական» Պավլիկը (ԱՄՆ) թերեւս աշխարհի միակ բռնցքամարտիկն է որ կարող է Աբրահամին լուրջ մրցակից դառնալ:*

*Բռնցքամարտի սիրահարները յուսով են, որ Աբքայ-Ուրվական մենամարտը կը կայանայ մինչեւ այս տարուայ վերջը:*

---

*Դաւիթ Ղազարեանը բրոնզէ մեդալ նուաճեց ծիւդոյի Եւրոպայի պատանեկան առաջնութիւնում*

*Յունիսի 28-ին Սլովենիայի Կոպեր քաղաքում աւարտուեց Եւրոպայի ճիւդոյի պատանեկան առաջնութիւնը: Հայաստանի 7 պատուիրակներից առաւել հաջող հանդէս եկաւ Դաւիթ Ղազարեանը (60 կգ, Վանաձոր): Նա գրաւեց երրորդ տեղը եւ պարգեւատրուեց բրոնզէ մեդալով:*

*******

*Աւետ Ղազարեանը դարձաւ թեքուանդոյի Եւրոպայի առաջնութեան արծաթէ մեդալակիր*

*Խորվաթիայի Զագրէբ քաղաքում Յունիսի 26-ին մեկնարկել է թեքուանդոյի Եւրոպայի կրտսեր տարիքի պատանեկան առաջնութիւնը: Հայաստանի 6 մարզիկներից առաջինը մեդալի արժանացաւ «Արմար» ակումբի սան Աւետ Ղազարեանը (45 կգ, Երեւան): Նա գրաւեց երրորդ տեղը եւ պարգեւատրուեց բրոնզէ մեդալով:*

*******

*15 հայ ըմբիշ Եւրոպայի առաջնութիւնում*

*Յուլիսի 2-ին Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում մեկնարկում է ըմբշամարտի Եւրոպայի երիտասարդական առաջնութիւնը: Հայաստանը յունա-հռոմէական եւ ազատ ոճերում ներկայացուած է մարտական կազմերով:*

*Արման Բաբալարեանի գլխաւորած յունա-հռոմէական ոճի հաւաքականի կազմում ասպարէզ դուրս կը գան 50 կգ քաշային Սարգիս Խաչատրեանը, 55 կգ Ալեքսան Միքայէլեանը, 60 կգ Ռոբերդ Յովհաննիսեանը, 66 կգ Արամ Ջուլֆալակեանը, 74 կգ Ռաֆիկ Մանուկեանը, 84 կգ Արթուր Ալեքսանեանը, 96 կգ Էդուարդ Սողոմոնեանը, 120 կգ Վաչիկ Եղիազարեանը: Յունա-հռոմէական ոճի ըմբիշները ելոյթ կ'ունենան Յուլիսի 2-3-ը:*

*Յուլիսի 4-5-ը պայքարի մէջ կը մտնեն արդէն ազատ ոճայինները: Արամ Մարգարեանի գլխաւորութեամբ Հայաստանի ազատ ոճի երիտասարդական հաւաքականում են 50 կգ Ռոբերդ Թադեւոսեանը, 55 կգ Օհան Գեղիկեանը, 60 կգ Նարեկ Սիմոնեանը, 66 կգ Դաւիթ Խաչատրեանը, 74 կգ Մերուժան Զազոեանը, 84 կգ, Սերգէյ Խաչատրեանը, 96 կգ Անդրանիկ Գալստեանը:*


**ՔԱՂՆԱՂԱՐ**

**ՌԱԴԻՕ ԵԹԵՐ ՇՕ**

**Ամէն Կիրակի երեկոյեան**

**ժամը 10:00-ից 12:30**

**+**

**Կլէնտէյլի 280-րդ կայանից**

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ



*ՏՕՔԹ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂՐԵԱՆ*
*(Ծնեալ Պէյրութ, 1929)*

*ՏՕՔԹ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂՐԵԱՆի մահուան քառասունքին առիթով հոգեհանգստեան պաշտօն տեղի պիտի ունենայ Կիրակի, 5 Յուլիս, 2009 Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. Պատարագի:*

*Ցիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:*

*Սգակիրներ՝*
*Այրին՝ Տիկին Ատրիան Խրլոբեան-Սաղրեան*
*Որդին՝ Տէր եւ Տիկ. Յովնաթան եւ Փոլա Սաղրեան եւ զաւակները*
*Որդին՝ Տէր եւ Տիկ. Դաւիթ եւ Ռիմա Սաղրեան եւ զաւակը*
*Դուստրը՝ Լիլիան Սաղրեան եւ որդին*
*Քոյրը՝ Տէր եւ Տիկ. Սամուէլ եւ Սառա Սաղրեան-Շիշմանեան եւ զաւակները*
*Եղբայրը՝ Տէր եւ Տիկ. Թորոս եւ Տիանա Սաղրեան եւ զաւակները (Ջուիցերիա)*
*Այրի Տիկ. Վերոնիքա Սաղրեան եւ զաւակները (Լիբանան)*
*Տէր եւ Տիկ. Ճօն եւ Պարիկ Խրլոբեան եւ զաւակները*
*Տէր եւ Տիկ. Աւետիս եւ Ռուբիկ Խրլոբեան եւ զաւակները*
*Տէր եւ Տիկ. Արամ եւ Մէրի Հէքիմեան եւ զաւակները (Աւստրալիա)*
*եւ համայն Սաղրեան, Շիշմանեան, Կէօքճեան, Վարդանեան, Մանուկեան, Պաքեան, Կալեան, Ապէտի, Ապաճեան, Շնորհօքեան, Մսըրլեան, Պագրճեան, Ակիշեան, Քէօրօղլեան, Թաթարեան, Գույումճեան, Մելգոնեան, Կարապետեան, Թորոսեան, Պարսումեան, Հինտոյեան ընտանիքները, հարազատներն ու բարեկամները:*

## ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

*ՏՕՔԹ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂՐԵԱՆի մահուան տխուր առիթով փոխան ծաղկեպսակի «Մասիս» շաբաթաթերթին ցարդ կատարուած են հետեւեալ նուիրատուութիւնները, որոնց համար թերթի տնօրէնութիւնը շնորհակալութիւն կը յայտնէ:*

| | |
|---|---|
| Տէր եւ Տիկ. Սեդրակ Աճէմեան | $300 |
| Տէր եւ Տիկ. Սարգիս Պօյաճեան (Լուիզիանա) | $300 |
| Տէր եւ Տիկ. Գրիգոր Ջօլաքեան | $300 |
| Imad Taylor of Cane Corp. | $300 |
| Սուրբ Կարապետ Եկեղեցի (Լուիզիանա) | $200 |
| Փրոֆ. Օշին Քէշիշեան | $200 |
| Տէր եւ Տիկ. Տօքթ. Գէորգ Քէշիշեան | $200 |
| Manougian Association | $200 |
| Տէր եւ Տիկ. Վազգէն Գալթագճեան (Լուիզիանա) | $200 |
| Տէր եւ Տիկ. Ռիչըրտ Թաթարեան | $200 |
| Տէր եւ Տիկ. Գրիգոր Խոտանեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Պօղոս Մութաֆեան (Լուիզիանա) | $100 |
| Տէր եւ Տիկ. Խաչիկ Մութաֆեան (Լուիզիանա) | $100 |
| Տէր եւ Տիկ. Սագօ Մութաֆեան(Լուիզիանա) | $100 |
| Տէր եւ Տիկ. Սերոբ Գալթագճեան (Լուիզիանա) | $100 |
| Տէր եւ Տիկ. Ճոնի Գալթագճեան (Լուիզիանա) | $100 |
| Տէր եւ Տիկ. Պօղոս Մարգարեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Վարդիվառ Պէքարեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Վարդան Քէօրօղլեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Արա Ակիշեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Կէրի Գասարճեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Օննիկ Քէշիշեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Ճորճ Գուզուեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Կարօ Պէքարեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Վահէ Աջապահեան | $100 |
| Թագուհի Վարդանեան | $100 |
| Էտմոն եւ Արմինէ Ղարիպեան | $100 |
| Լեւոն եւ Սոնիա Թաւլեան | $100 |
| Տիար Լեւոն Վարդանեան | $100 |
| Տիար Հրանդ Սաֆարեան | $100 |
| Arto H. Arsen | $100 |
| Տէր եւ Տիկ. Հէրի Վարդանեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Կիրակոս Մինասեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Ռաֆֆի Թորոսեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Ռուբէն Իսահակեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Յովսէփ Ճիճիյեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Ժիրայր Կիրակոսեան | $100 |
| Ալեքս Ինքնատիրոսեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Սահակ Գըթֆեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Կարօ Ղարիպեան | $100 |

## ՏԽՐՈՒՆԻ

*Ցաւով տեղեկացանք «Մասիս» շաբաթաթերթի բարեկամ, հաւատաւոր ՀՄՄ-ական՝ ՎԱՐԴԱՎԱՌ ՀՕՓՈՒՐԵԱՆի մահը, որ տեղի ունեցած է Յունիս 29-ին, յետ երկարատեւ հիւանդութեան:*

*Այս տխուր առիթով «Մասիս» իր խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի զաւակին, քրոջ, եղբօր եւ համայն ընտանեկան պարագաներուն:*

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

*ՎԱՐԴԱՎԱՌ ՀՕՓՈՒՐԵԱՆի մահուան տխուր առիթով Հ.Մ.Մ.ի Փասատինայի վարչութիւնը իր խորազգաց վշտակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի որդւոյն, քրոջ, եղբօր եւ համայն ընտանեկան պարագաներուն:*

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

*ՆԵՐՍԷՍ ԱՐՔ. ՊՈԶԱՊԱԼԵԱՆի մահուան տխուր առիթով Պէյլանի Հայրենակցական Միութեան վարչութիւնն ու անդամները կը վշտակցին իրենց հայրենակից վաստակաշատ հոգեւորականի քոյրերուն, հարազատներուն, Ամենայն Հայոց Հայրապետութեան՝ Ս. Էջմիածնի միաբանութեան բոլոր անդամներուն:*

## ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

*Տօքթ. Յարութիւն Սաղրեանի մահուան տխուր առիթով հանգուցեալի այրին, զաւակներն ու հարազատները իրենց խորին շնորհակալութիւնները կը յայտնեն Արեւմտեան Թեմի առաջնորդ Յովնան Արք. Տէրտէրեանին, Վաչէ Արք. Յովսէփեանին, Մուշեղ Արք. Մարտիրոսեանին, Աղան Արք. Պալիօզեանին (Աւստրալիա), Անտոն Վրդ. Սարոյեանին, Վեր. Ճօ Մաթոսեանին, Վեր. Գալվին Սաղրեանին, Վեր. Ճօ Մելգոնեանին, Դոկտ. Զաւէն Աւ. Քհնյ. Արզումանեանին, Արժ. Արշակ Աւ. Քհնյ. Խաչատուրեանին, Պարետ Ծ. Վրդ. Երէցեանին, Գեղամ Վրդ. Զաքարեանին, Յովսէփ Աւ. Քհնյ. Յակոբեանին, Հայր Օգոստինոս Սէգուլեանին, Հայաստանի Աւագ Հիւպատոս Գրիգոր Յովհաննիսեանին, Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութեան, Ս.Դ.Հ.Կ. Վարիչ Մարմնին եւ ենթակայ կառոյցներուն, Կլենտէյլի Քաղաքապետ Ֆրէնք Քինթերոյին, Պըրպէնքի քաղաքապետական Խորհուրդին, Լոս Անճելոսի հայ մամուլին եւ հեռուստակայաններուն, Պոլսահայ, Իրանահայ եւ Ամերիկայի Հայ Գրողներու Միութիւններուն, Ռօթերի կազմակերպութեան, «Լարք» երաժշտական ընկերակցութեան, Հայաստան Հիմնադրամին, Հայկազեան Համալսարանի Տիկնանց Օժանդակ Միութեան, Ամերիկայի Հայ Թատերասէրներու Միութեան, Հ.Բ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան, Պաթօն Ռուժի Ս. Կարապետ Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի ատենապետ Վազգէն Գալթագճեանին, Գալիֆորնիոյ Հայ Բժիշկներու Միութեան, «Հէլթ Քէր Փարթ-նըրզ»ին, Հ.Մ.Ը.Մ.ի Արարատ Մասնաճիւղին, Աւստրալիոյ Ս.Դ.Հ.Կ. Շրջանային Վարչութեան եւ բոլոր անոնց որոնք անձամբ, գրութեամբ, հեռաձայնով, ծաղկեպսակով, հեռատիպով, նամակագրութեամբ եւ կամ փոխան ծաղկեպսակի նուիրատուութեամբ մասնակից եղան իրենց սուգին:*

| | |
|---|---|
| Տէր եւ Տիկ. Աւօ Ղարիպեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Խաչիկ Քէշիշեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Կիւրեղ Մանկրեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Գաբրիէլ Մոլոյեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Տօքթ. Համբիկ Սարաֆեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Թորգոմ Փոստաճեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Տօքթ. Արշակ Գազանճեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Գեղամ եւ Լալիկ Թոքաթլեան | $100 |
| Տիկ. Happy Galian | $100 |
| Տէր եւ Տիկ. Զարեհ Ասթուրեան | $100 |
| Վիքթոր Սարեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Կրէկ Մանասերեան | $100 |
| Normandy Pharmacy | $100 |
| Տէր եւ Տիկ. Յովիկ Լաչինեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Հէրի Տրամերեան | $100 |
| Յովհաննէս Մէլիտոնեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Վազգէն Խոտանեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Սամուէլ եւ Սառա (Սաղրեան) Շիշմանեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Արամ Տէմիրճեան | $50 |
| Շաքէ Թորոսեան | $50 |
| Եղիա եւ Ժագլին Թանայեան | $50 |
| Սարգիս Գոլումեան | $50 |
| Տէր եւ Տիկ. Աւօ Մակարեան | $50 |
| Տիար Ներսէս Պարտագճեան | $50 |
| Տիար Սարգիս Գուլումեան (Լուիզիանա) | $50 |
| Mr. Richard Dinger | $50 |
| Տէր եւ Տիկ. Յովհաննէս Պալայեան | $50 |
| Տիկ. Հերմինէ Ճանոյեան | $50 |
| Տէր եւ Տիկ. Ռաֆֆի Գիզիրեան | $50 |
| Հայկօ Ջատուրեան | $40 |
| Greg Diamond | $40 |
| Տէր եւ Տիկ. Միհրան Կոստանեան | $40 |
| Տիկ. Օժէնի Պարսումեան | $30 |
| Տիար Պետրոս Ալահայտոյեան | $25 |
| The Old Group Glendale | $25 |
| Տէր եւ Տիկ. Յակոբ Ատալեան | $25 |
| Վարուժան Ճոնսահկեան | $25 |
| Նունէ Ջատուրեան | $20 |


MISSION
Wine & Spirits
HAPPY FOURTH OF JULY!
UNBEATABLE DEALS!
Grey Goose Vodka 21 99
Imperia Vodka 17 99
Cazadores Reposado 19 99
Skyy Vodka 8 99
Roberto Cavalli Vodka 38 99
El Jimador Reposado or Blanco 15 99
Johnnie Walker Blue Label 129 99
Hennessy VS 22 99
Hennessy VSOP 33 99
Courvoisier VS 18 99
El Massaya Arak 19 99
Touma Arak 12 99
Bacardi Rum 1.75L 15 99
Ultimat Vodka 27 99
Jose Cuervo Especial 10 99
Patron Silver 29 99
Bacardi Rum 8 99
Captain Morgan Rum 10 99
Crown Royal Canadian Whisky 13 99
Ciroc Vodka 18 99
1800 Tequila Reposado 16 99
Johnnie Walker Black Label 19 99
Johnnie Walker Gold Label 49 99
Johnnie Walker Red Label 15 99
Johnnie Walker Green Label 39 99
Tres Generaciones Silver 26 99
Chivas Regal 12 Years 16 99
Heineken 24 Pack 22 99
Saturday Only Specials! (07/04/09)
Absolut Vodka 11 99 Limit 6
Chivas Regal 12 Years 13 99 Limit 6
1800 Tequila Reposado 14 99 Limit 6
Corona Extra 12 Pack 9 99 Limit 2
Don Julio 1942 69 99 Limit 6
Grey Goose Vodka 1.75L 44 99 Limit 6
Courvoisier VS 15 99 Limit 6
Courvoisier VSOP 24 99 Limit 6
Johnnie Walker Blue Label 119 99 Limit 6
1785 E. Washington Blvd.
Pasadena, CA 91104
(626) 794-7026
Open Monday—Saturday
9 am - 8 pm
Please Visit Our Website:
http://www.missionliquor.com
825 W. Glenoaks Blvd.
Glendale, CA 91202
(818) 242-0683
Open Monday—Saturday
9 am - 8 pm
*Minimum 12 Bottle Mix & Match • This ad expires on 07/05/09 • We reserve the right to limit quantities • Sales tax excluded Prices subject to change without notice • No CCs
All items are 750ml in size unless specified.